

100 տարի...
Իրական
պատմություններ



1915
2015

1915
2015

100 տարի ...
Իրական
պատմություններ

100 տարի ... Իրական պատմություններ

Ցեղասպանությունը վերապրած հայերի թվում կան մարդիկ, ուն կյանքը փրկվել է թուրք հարևանի, ընկերոջ, իրադարձությանն ականատես հասարակ թուրք մարդու կողմից: Այս գրքում ներկայացված է 47 նման պատմություն: Սրանք իրական պատմություններ են, որ ներկայացված են ուղղակի շարադրանքով՝ առանց բովանդակային խմբագրման: Պատմությունները բանավոր վերարտադրել են Մեծ եղեռնը վերապրածների ժառանգները, հարազատները, մտերիմները՝ հենվելով դեպքերի ականատեսների վկայությունների վրա: Որոշ պատմություններ վերականգնվել են ականատեսների կենդանության օրոք կատարված ձայնագրությունների կամ գրավոր հուշերի հիման վրա:

Պատմությունները հավաքագրվել են «Եվրոպական ինտեգրացիա» հասարակական կազմակերպության և «Արմեդիա» տեղեկատվական, վերլուծական գործակալության ուժերով Միացյալ Թագավորության արտաքին և համագործակցության երկրների նախարարության օժանդակությամբ՝ «Թուրքը, որ փրկեց ինձ» ծրագրի շրջանակներում: Ծրագրի գործընկերը Թուրքիայում "tursu.tv production"-ն է:

Ծրագրի նպատակն է որոշակի նպաստ բերել հայ և թուրք ժողովուրդների միջև երկխոսության զարգացմանն ու փոխադարձ վստահության կառուցմանը:

Պատմությունները հայերենով հրատարակվել են «Արմեդիա» տեղեկատվական, վերլուծական գործակալության էլեկտրոնային էջում, թուրքերենով՝ Taraf, Zaman, Radikal, Demokrat haber, Evrensel, Bianet, Yurt, T24 լրատվամիջոցներում:

Գիրքը տպագրվում է հայերեն, թուրքերեն, անգլերեն լեզուներով և այս ծրագրի շրջանակներում տարածվում է անվճար:

Նախատեսված է ընթերցող լայն շրջանակների համար:

Գրքում զետեղված նյութերը, կարծիքներն ու եզրակացությունները ներկայացնում են իրադարձությունների մասնակիցների և պատմությունները վերարտադրող անձանց տեսակետը և չեն արտացոլում Միացյալ Թագավորության կառավարության դիրքորոշումը:

Ներածական խոսք

100 տարի... Կարելի է բանավիճել, փորձել պատկերացնել, հասկանալ, ընկալել՝ 100 տարին քիչ է, թե՞ շատ: Բայց կան բաներ, որոնց պարագայում երևի թե ժամանակն էլ անգոր է: Կարծում եմ, որ թե՛ այս ծրագրի, թե՛ գրքի թեման հենց այդ շարքից կարելի է համարել:

Այս պատմությունները, այս գիրքն իրենց մեջ ներառում են իմ ընտանիքի, իմ նման շատերի ընտանիքների պատմությունը: Ընդհանրապես նման ծրագրի, նման պատմությունների հավաքագրման մտահղացումը, երևի առաջին հերթին, բացատրվում է այն հոգեվիճակով, որն ունենում ես, որով ապրում ես քո ողջ կյանքը մինչև հասունություն և հետո փորձում ես գոնե այդ թեման ինչ-որ կերպ բերել և հասցնել իր տրամաբանական հանգրվանին:

Իմ հորական կողմը՝ հորս մայրը և հորս հայրը, այս պատմությունների հերոսների շարքում են: Նրանց փրկել են թուրքերը: Փրկել են թուրքերը՝ թուրքերից: Չլինեին այդ փրկող թուրքերը, չէին լինի նրանք, չէր լինի հայրս, չէի լինի ես: Այս նույն արտահայտությունը կամ խոսքերը, երևի, պատմությունների հերոսներից շատերը կարող են նույն ձևով արտասանել: Յետևաբար, ամեն ինչից գատ, այս գիրքն ու այս պատմությունները հարգանքի տուրք են այդ թուրքերին, այդ անհատներին: Նրանցից շատերը երևի հիմա չկան, բայց մի բան փաստ է. կարելի է խոնարհվել նրանց շիրիմներին, որովհետև ես ու իմ նմանները մեր կյանքով նաև նրանց ենք պարտական:

Այսօր շատ է խոսվում արդար հիշողության մասին, բայց կա մտավախություն, որ այդ երկու բառերն էլ այլասերվում են և ենթարկվում ինչ-որ շահերի, շահարկումների, բայց թե՛ արդարությունը, թե՛ հիշողությունը արժեքներ ստեղծող և պահպանող բառեր և հասկացություններ են: Կարծում եմ՝ դրանց հետ պետք է զգույշ վարվել: Իսկ ի՞նչ է արդար հիշողությունը:

Առաջին հերթին, այն ժամանակաշրջանից սկսած, երբ թուրքերը՝ նրանց նախահայրերը, հասել են այս տարածաշրջան, մենք ունեցել ենք համատեղ կյանքի, փոխգործակցության, միմյանց հետ շփվելու, առնչվելու, իրար շատ բան տալու և վերցնելու բավական հարուստ փորձ: Արդյո՞ք այստեղ չեն եղել պայծառ պահեր, ժամանակահատվածներ, երբ այդ ամենը կարելի էր անվանել բարեկամություն: Անկասկած եղել են: Չե՞ն եղել արդյոք պահեր նաև մինչև 1915թ.-ը կամ դրան նախորդող ժամանակահատվածում, երբ եղել են խնդիրներ: Անկասկած եղել են: Այդ ամբողջ ժամանակահատվածը, այդ թվում՝ վերջին 100-ամյակը, իհարկե, կարիք ունի վերարժևորելու, տուրք տալու արդարությանը, չուրանալու, չմոռանալու ոչինչ:

Երկրորդ՝ Ցեղասպանություն... Իրականացված անկարագրելի դաժանությամբ և կազմակերպված մինչև վերջին դետալները: Փորձ, ցանկություն, իր

սեփական բնօրրանից, իր սեփական հայրենիքից մի ողջ ազգ լիովին ջնջելու: Փառք Աստծո, չի հաջողվել: Չի հաջողվել նաև ի շնորհիվ այն մարդկանց, այդ թվում թուրքերի, որոնք նույն այդ մեծ ծրագրին, այդ դաժանությանը դեմ են դուրս եկել գոնե իրենց անհամաձայնությամբ և գործողություններով: Ի՞նչ արդար հիշողություն առանց Ցեղասպանության և հայրենագրկման փաստն ընդունելու: Արդար հիշողության մաս է, անկասկած, նաև այն, որ եղել են ազգեր, պետություններ, ընտանիքներ, անհատներ, այդ թվում թուրքեր, որոնց մեծատառով Մարդ լինելը կյանքեր է փրկել: Բնավ չի կարելի ուրանալ նաև սրա որևէ մասնիկ կամ գործոն:

Նշեցի արդեն՝ եթե չլինեին այդ անհատները, չէի լինի ես: Եթե չլինեին Ցեղասպանության կազմակերպիչները, հայրս, նրա ծնողները կունենային իրենց ողջ գերդաստանը, ողջ մնացած, արարող, ստեղծող, ոչ թե կլինեին միակ փրկված ծվեմը մի ողջ ընտանիքից: Կարող է արդյոք արդար հիշողություն կոչվածը այս էլեմենտներից գոնե որևէ մեկը շրջանցել: Իհարկե, ո՛չ: Դա այդ պարագայում կդադարի լինել արդար, և դա այդ պարագայում չի լինի հիշողություն:

Երևի հարկ է նաև մի քանի խոսքով անդրադառնալ ներկային: Շատ է խոսվում այն մասին, որ պետք է ստեղծվեն վստահության միջոցներ, որ պետք է մեր երկու ժողովուրդները իրար ձեռք մեկնելու հնարավորություն ունենան և իրականացնեն այդ հնարավորությունը: Իհարկե, համաձայն եմ: Հետևաբար, հիշելով նաև դրականը, չուրանալով այդ հիշողությունից ոչ մի էլեմենտ, պետք է փորձել այդ ամենն անել: Այս պատմությունները, այս գիրքը, այս մտահղացումն ուղղված է հենց դրան: Այն ուղղված է ցույց տալու, որ մենք կարող ենք չուրանալ, և, իհարկե, ակնկալում ենք, որ դիմացինն էլ չի ուրանա: Մենք ակնկալում ենք այսօր տեսնել թուրքերի այն սերունդներին, որոնք եղել են փրկողի դերում, և նրանց սերունդները կարող են հպարտ և բարձրաձայն ասել. «Մենք հպարտ ենք մեր թուրք լինելով, որովհետև մեր պապերը կյանք են փրկել»: Մենք ուզում ենք մեր դիմաց տեսնել մարդասիրություն, արժեքների ընկալում, ոչ թե իրավիճակ, երբ մարդիկ դա բարձրաձայնելու ցանկության դեպքում անգամ կարող են ինչ-որ վտանգների մասին մտածել, կարող են ինչ-որ բանից վախ զգալ թե՛ իրենց, թե՛ իրենց ընտանիքի անդամների, իրենց զավակների համար: Սա՛ է վստահությանն ուղղված առաջին քայլերից մեկը կամ գոնե կարող է լինել:

Մեր ներկան էլ խնդիրներ ունի: Մենք ուզում ենք դրանք հաղթահարել միասին՝ փոխադարձաբար չուրանալով ոչինչ, բայց մենք ունենք ներկա, որում չեն դադարում թշնամանքի դրսևորումները: Ցանկացած մարդկային տրամաբանություն, զգացողություն, գիտակցություն, պիտի երևի հուշեր, որ երկու ժողովուրդների՝ այս ամենը վերապրելու, վերարժևորելու և ապագային նայելու համար հայ-թուրքական սահմանը պետք է լինեի հնարավորինս ամենաբացն ու ամենաակտիվը: Բայց թշնամանքը չի ավարտվել, այդ սահ-

մանը փակ է առ այսօր: Փակ՝ Թուրքիայի կողմից:

Ես ուզում եմ նաև երախտագիտության խոսքեր ուղղել բոլոր անհատներին, կազմակերպություններին, որոնք հնարավորություն տվեցին այս մտահղացումը, այս ծրագիրը և այս գիրքը կյանքի կոչելու: Այդ թվում, իհարկե, Միացյալ Թագավորության արտաքին և համագործակցության երկրների նախարարությանը: Սա հարգանքի տուրք է կամ հարգանքի տուրք մատուցելու փորձ Ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակին, օգնության ձեռք մեկնած բոլորին և, իհարկե, թուրքերին, ովքեր, վտանգելով նաև իրենց ու իրենց ընտանիքի անդամների կյանքը, չկարողացան մի կողմ քաշվել և իրենց ձեռքը մեկնեցին: Սա նաև հույսի ծրագիր է, որ որևէ կողմից, որևէ պարագայում ուրացումը չի կարող հաղթել արդարությանը: Հույս, որ մենք վերջիվերջո կկարողանանք գոնե Ցեղասպանությունից 100 տարի անց փորձել միասին նայել ապագային՝ չուրանալով ոչինչ և փորձելով վստահել միմյանց...

**Կարեն Բեքարյան,
«Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ նախագահ**



Համալսարանի երկրորդ կուրսի ուսանող էի, երբ գիտակցեցի, որ պատմությունը գրում եմ հաղթողները: Յոթ տարեկանից ի վեր ստացածս կրթությունից միշտ սովորել եմ, թե նախնիներս ինչպիսի հերոս, ճիշտ, շատ անարդարությունների զոհ դարձած, բայց երբեք չկոտրված մարդիկ են եղել: Երբ խելքս սկսեց հասնել, պատմածները կամաց-կամաց չափազանցություն թվացին, բայց այդ տարիներին գրեթե անհնար էր հասնել ճիշտ գրված «պետական» որևէ աղբյուրի:

Պատմություն կոչվող մեծ խճանկարում պետությունների ֆիլտրացված արխիվները ճիշտ են այնքան, որքան անհատների աղավաղված հիշողություններն են: Իսկ աղավաղման հիմնական պատճառն առերեսումից աննկարագրելի վախն էր:

Առերեսվելու գաղափարն այնքան ճնշված էր, որ անցյալում տեղի ունեցած իրադարձություններին հայացք նետելիս հասկանում էի մեր՝ նախապաշարունքներով աղճատված, կեղտոտ, բծերով պատված ապակու հետևում լինելը: Առերեսվելու համար նախ պետք էր ազատվել նախապաշարունքներից և համատեղ ուժերով մաքրել այդ ապակին: Այս նախագիծը, որին թելուզ փոքրիկ, բայց ներդրում ունենալու պատվին եմ արժանացել, հենց այդպիսի գործառույթ ունի:

«Թուրքը, որ փրկեց ինձ» նախագծի իրական պատմություններից մի քանիսը հրատարակելիս արտառոց մի իրավիճակի հանդիպեցի: Պատմությունները կարդալով՝ ընթերցողներից մեկը մեզ մեղադրեց Հայոց ցեղասպանության հարցում մոտեցման փոփոխության հարցում:

Այս քննադատությունը պատճառ դարձավ, որ նորից նժարի վրա դնեմ այն պատմությունները, որ հրատարակել ենք, և Թուրքիայում նախագծի պատասխանատու Արիս Նալչըի հետ արված հարցազրույցիս մասին մտորեմ: Մեր ընթերցողը հակիրճ հետևյալն էր փորձում բացատրել՝ այս պատմություններով թուրքերին դեպի ուղեղի լվացման ուղի էինք շեղել և ժխտողական մեխանիզմ էինք գործադրում կամ փորձում էինք մեղմել հայերի հանդեպ իրականացված վարդապետությունները: Նա այսպես էր արտահայտվում, քանի որ մենք առաջիններից էինք, որ 1915-ին տեղի ունեցածը գնահատեցինք որպես Հայոց ցեղասպանություն: Եվ, եթե չեմ սխալվում, այդ ընթերցողը թուրք էր:

Ժխտման փուլն անցած, պատմության հետ առերեսված մի ընթերցող էր առջևս: Սա շատ ուրախալի էր:

Բայց արդյո՞ք որևէ խնդիր կամ սխալ բան չկար այս մոտեցման մեջ... Գուցե և հաղթահարել էր հերքումը, բայց արդյո՞ք հիմա էլ բոլորովին

այլ ուղղությամբ չէր տարվել: Կարո՞ղ էր արդյոք մեկ այլ կանխակալության և քննադատության թիրախ դարձած տեսակետի հասած լինել: Թե՞ ես, որ մեծացել եմ հերոս նախնիներիս մասին պատմություններ լսելով, նորից հիմ նախապաշարունքներիս գերին էի դարձել և առանց գիտակցելու «լավ թուրքեր էլ կան»-ի քարոզչությունն էի անում:

Այս ամենի մասին նորից խորհեցի: Կարծում եմ՝ առերեսումը ճիշտ գործող մեխանիզմ է այնքան ժամանակ, քանի դեռ շարունակում ենք գնալ իրականության հետքերով: Այս հիշողություններից յուրաքանչյուրը բանավոր պատմություն է՝ առանց որևէ հետին մտքի և հնարավորինս անբիծ: Այդ պատճառով «Թուրքը, որ փրկեց ինձ» նախագիծը կարևոր ձեռնարկում է և հատկապես արժեքավոր է այս մեխանիզմներից մեկը գործի դնելու պատճառով:

Վերոնշյալ ընթերցողի հակազդեցությունը տեսնելուց հետո Արիս Նալչըի՝ մեզ տված հարցազրույցում արտաբերած մի նախադասությունն էլ վաղելի ազդեցիկ դարձավ ինձ համար: Արիսն ասում էր. «Եթե այս նախագիծը հայաստանյան մի կազմակերպության կողմից չիրականացվեր, որևէ մեկը՝ ներառյալ ես, չէր հավատա: Մեծամասնությունը կկարծեր, որ Թուրքիայի հերթական քարոզչությունն է: Սակայն պատմվածքներն առանց թուրքերին պախարակելու ներկայացնում են, թե ինչպես են մարդիկ ցեղասպանություն տեսել և փրկվել»:

Ի վերջո, հանգեցի հետևյալ եզրակացության. ուրախալի փաստ է վերջին տարիներին առերեսմանն ուղղված դրական քայլերի առկայությունը, բայց-ևայնպես չպետք է մոռանալ, որ դեռ շատ ճանապարհ ունենք անցնելու:

**Հալուք Քալաֆաթ,
Bianet լրատվական գործակալության գլխավոր խմբագիր**



Այս աշխատությանը Ձեզ են ներկայացվում Հայոց ցեղասպանությունից փրկվածների պատմությունները՝ փոխանցված նրանց հարազատների կողմից:

Պատմությունների առանձնահատկությունը հերոսի/հերոսների՝ Հայոց ցեղասպանությունից ուղղակի կամ անուղղակի ճանապարհով թուրքերի օգնության շնորհիվ փրկված լինելու հանգամանքն է:

Այս գիրքը, 2015թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին ընդառաջ, նպաստում է 1915-ին տեղի ունեցած իրադարձություններին մինչ այսօր առկա տեսակետներից տարբերվող հայացքով դիտելուն:

Թուրքերի կողմից փրկված ընտանիքները մի կողմից խոսում են իրենց ապրածի և հարազատների պատմածների մասին, մյուս կողմից պատմում «թուրք» ինքնության հետ որևէ խնդիր չունենալու մասին:

Կյանքի այս պատմությունները կոչված են օրինակ ծառայելու, որ թուրքերի և հայերի միջև առկա խնդիրները միայն էթնիկ բնույթի չեն, և որ հայերը կարողանում են այս հարցում կարծրատիպեր կոտրել: Սա պետք է մեզ մտորելու և հարցադրում անելու տեղիք տա. արդյո՞ք Թուրքիայում հնարավոր է նույնն իրականացնել, քանզի Թուրքիայում հայերին կոտորածից փրկած թուրք ընտանիքների պատմությունները դեռևս չեն մեկտեղվել:

Այսօր Թուրքիայում նրանք, ովքեր հավատում են, որ այս պատմությունների հավաքագրումն ինքնությանն ուղղված սպառնալիք է, շարունակում են մեծամասնություն լինել: Որովհետև փրկված երեխաների մեծ մասն ուծացվելով թուրքացվել կամ քրդացվել է կամ էլ այլ էթնիկ խմբի պատկանող ընտանիքում ծնվել-վերացել է:

Սրանցից յուրաքանչյուրն իրական պատմությունն է, որն ուսումնասիրման ենթակա բազմազան թեմաներ է երևան հանում:

Ցեղասպանությունից փրկվածներից շատերն այսօր ողջ չեն, սակայն նրանց հուշերը վառ են պահում իրենց թոռները...

Այս աշխատությունը միևնույն ժամանակ առաջ է քաշում հարցադրում՝ ի՞նչ են զգում արդյոք հայ ընտանիքներին փրկած թուրքերը... Հուսանք՝ Թուրքիայում մոտ ապագայում կլինի հասարակական մի կազմակերպություն, որն այդ հարցադրման պատասխանի ուղղությամբ կաշխատի և արդյունքը կկիսի հանրության հետ:

Արիս Նալջը,
IMC TV խմբագիր, T24 ամսագրի սյունակագիր



Դիարբեքիրի փողոցներում քայլում էինք ընկերներիցս մեկի հետ, ում հոգու լուսավորության համար հիմա աղոթում են: Քանի որ առաջին անգամ էի գնացել, ցանկանում էր ամեն ինչ ցույց տալ և պատմել: Ես էլ այսպես թե այնպես ուզում էի տեսնել և իմանալ ամեն ինչ: Իր տան դիմաց նստած ծեր մի կին քրդերեն ինչ-որ բան ասաց: Ընկերս նրան պատասխանեց, տարեց կինը վեր կացավ ու դեպի ինձ քայլեց: Նախ ձեռքերս իր ափերի մեջ առավ, ամուր բռնեց. քրդերեն էր պատմում, ոչինչ չէի հասկանում, սակայն ձեռքերս այնպես էր սեղմում, դեմքին այնպիսի ցավ, հայացքում այնպիսի վիշտ և աչքերում արցունքներ կային, որ գլխունս ամեն ինչ խառնվել էր իրար: Անհամբեր սպասում էի, որ ընկերս թարգմանի. նրա դեմքն էլ էր գունատվել: Հետո տարեց մորաքույրը ձեռքերս թողեց և գրկեց ինձ: Այտերս, աչքերս համբուրեց, հետո նորից գրկեց: Ոչ մի կերպ չէր կարողանում թողնել: Հետո իր տուն տարավ: Մտանք ներս, իր ամենալավ ներքնակները փռեց և ինձ նստեցրեց: Կողքիս նստեց, ինձ երկար նայեց և աչքերը լցվեցին: Մի կողմ քաշվեց և փորձեց հոսող արցունքներն առանց ցույց տալու անձայն չորացնել: Ծեր կնոջ և նրա ամուսնու հանդարտվելուց և մորաքրոջ՝ մեզ ամեն գնով թեյ հյուրասիրելու համար խոհանոց գնալուց հետո ընկերս սկսեց պատմել, թե ինչ էր խոսվել:

Տարեց մորաքույրն ինձ նմանեցրել էր իր սպանված թոռնուհուն: Աչքերս, դեմքս, ձեռքերս ճիշտ նրա նման էին: Թոռնուհին՝ 19 տարեկանը հազիվ բուլորած, գնացել էր զինյալ պայքարի՝ որպես գերիլա*, և սպանվել: Մորաքույրը պատմել էր. «Սպանվելը կընդունեիմք, միայն թե դա չանեին»: Դիարբեքիրի մեջ թոռան դին կապել էին ավտոմեքենայի հետևից ու քարշ տվել այնքան, մինչ դիակը բզկտվել էր: Այնպես, որ նույնիսկ չէին կարողացել թաղում անել:

Ամենասիրելի թոռնուհին է եղել, երիտասարդ տարիքում ավտովթարից մահացած տղայի և հարսի միակ երեխան, որին տատն էր պահել-մեծացրել: Հենց այսպես էլ, երբ ինձ տեսել է, կարծել է թոռն է և ամուր գրկել, հոտոտել է: Ամուսնու կողմից պատմությանն ավելացրած մանրամասնությունն էլ ավելի ողբերգական էր: Ամուսինն ասել է. «Լավ, ասե՛նք՝ սպանեցիք ու դին քարշ տվեցիք»: Հետո անցել է իր համար ամենասարսափելի մասին. «Այնպես են քարշ տվել, որ թոռնուհունս մարմնի բոլոր մասերը բացվել են, ոտքերը, կրծքերը Դիարբեքիրին էին ցույց տալիս: Հոգին առան թոռանս, բա նամուսից ի՞նչ էին ուզում»: «Աստված քեզ էլ նույն ճակատագրին չարժանացնի, բայց շատ նման ես և գեղեցիկ», - ահա այսպես են ասել: Դրա համար էլ արտասվում ու թոռան համար ուրիշի մոտ առաջին անգամ էր արցունքներին ազատություն տալիս: Քարացել մնացել էի: Ասածս որևէ բան չէր անելու, վերքի դարման չէր լինելու: Մորաքույրը բերեց մեր թեյերը, բայց մի կուն անգամ չկարողացա խմել: Նա ստիպելով թեյը շուրթերիս մոտեցրեց ու ասաց. «Խմի՛ր, խմի՛ր, որ կարծեն՝ Գյուլայա է խմում, որ տասը տարի անց Գյուլայիս մի կաթիլ բան խմեցրած

* Պարտիզանական ջոկատի անդամ – մնան ջոկատները Թուրքիայում գործել են Քրդական Աշխատավորական կուսակցության սկզբնավորման օրվանից:

լինեն, ձագիս վերջին ջուրն էլ չխմեցրի»:

1999 թվականն էր, լրագրողության երկրորդ տարին: Առաջին անգամ էի գործի բերումով Դիարբեքի գնացել: Էդիրենում ծնված լինելով՝ Թեքիրոյուն ամենաբարձր մակարդակի «ստերիլ» միջավայրում «ազգային» կրթություն էի ստացել և քրդերին ու քրդական հարցին ծանոթությունս համալսարանի համար Ստամբուլ գալով էր սկսվել: Այսինքն՝ հարյուր տոկոսով վստահ էի, որ գիտեմ քրդերի և առկա խնդրի մասին, և որ ընդամենը իրավունքի վերաբերյալ հարց է: Բայց ահա այդ օրն ամեն ինչ փոխվեց: Տեսական բոլոր մտքերս փոշիացան, Գյուլայի տատիկի և պապիկի պատմությունից հասկացա, որ խոսքը վերաբերում է մարդ լինելուն: սա՛ է խնդրի բուն իմաստը: Հոգիս խոցվեց: Այդ պատմությունն ինձ վրա ազդեց ավելի, քան մինչ այդ հնչած որևէ կառույցի քարոզչություն կամ «գիտակցություն պատվաստող» ելույթ: Քանզի հոգին հոգուն էր փարվել: Գյուլայի տատիկի և պապիկի հոգիները իմ հոգուն էին փարվել և միացել: արդեն ամեն ինչ այդ կետից էի դիտարկելու: Ասելիքներս և վերաբերմունքս Գյուլային չցավեցնելու համար էի անելու: Քանի որ եթե նրա հոգուն ցավ պատճառեի, ես էլ էի ցավ ապրելու:

Իրական պատմությունը գալիս է իրական մարդուց: Գիշտ ինձ և քեզ նմաններից: Դեմքը, աչքը, վարսերը, քիթը կամ գաղափարները քեզ նման չլինեն էլ, ուրախությունը, տխրությունը, արտասվելը, ժպտալը հենց քեզ պես լինելու համար կդիպեն քեզ: Եվ քանի որ դա հոգին է, ուրեմն հաստատ քո հոգուն կփարվի, կհիշեցնի քեզ մարդկության, մարդ լինելու մասին: Այն, ինչին կարող ես հավատալ ու հասկանալ հազարավոր էջեր կարդալով, հոգին կարող է հինգ րոպեում համառոտ ասել: Դրա համար է, որ երբ իրական պատմություն ես լսում, մտածում ես՝ եթե նրա փոխարեն լինեի, ի՞նչ կանեի, ինչպե՞ս կվարվեի: Այդ իրավիճակում ինքդ քեզ կպատկերացնե՞ս, մարդ կլինե՞ս: Երբ սիրտդ ու խիղճդ գործի են անցնում, հոգին հոգուն է մոտենում: դրանից հետո ով ինչ էլ անի կամ չանի, չի կարող հեռանալ: Գիշտ ընտանիքիս անդամներից մեկի՝ Հայոց ցեղասպանության հետ առերեսվելու պես:

Ֆեթիյե Չեթինի «Մեծ մայրս» գիրքը կարդալուց հետո ընտանիքիս անդամներից մեկին էի տվել՝ Հայոց ցեղասպանությունը չընդունող, «այն ժամանակ որոշ բաներ եղել են, էլի...» ասող և առաջ անցնող մեկին: Չնայած սկզբում չէր ուզում կարդալ, բայց հենց սկսեց, մի շնչում ավարտեց: Հետո էլ ասաց. «Ամբողջ գիշեր արտասվել եմ Սեհեր մորաքրոջ համար,- այնուհետև ինքն իրեն ուղղեց,- Հրանուշ մորաքրոջ»:
«Այս մարդիկ ինչ պատմություններ ու կյանք են ապրել... Ես իրենց տեղը լինեի՝ չգիտեմ, թե ինչ կանեի, թող Աստված մեզ բոլորիս ների...»:

Այսքան տարի չէր ցանկացել հավատալ, բայց հասկացել էր, որ 90-ամյա Հրանուշ մորաքույրը սուտ խոսելու որևէ առիթ չուներ: Ավելին՝ Էրզինջան-Էգինցի սկեսրոջ խոսքերն էր հավելում այս ամենին. «Սկեսուրս հաճախ ասում

էր՝ աղջիկս, Եփրատի ջրերը միշտ կարմիր էին հոսում. հայերի կոտորածին ենք ականատես եղել, բայց ոչինչ չենք կարողացել անել...»:

Ահավասիկ այսպիսին է իրական պատմությունը, որի մասին գիտեք, բայց որքան էլ փորձեք մոռանալ, մի օր ձեր ենթագիտակցությունը երևան կհանի, ձեր դեմքին կհարվածի և կստիպի ընդունել: Բայց սա ամենևին էլ ստիպողաբար ընդունել չէ, ձեր իսկ համաձայնությամբ է լինում. թերևս, ամենից ճիշտ մարդկային ընդունումն էլ հենց սա է:

**Նազան Օզջան,
Yurt ամսագրի խմբագիր**



Ընդամենը ամիսներ անց հայությունը ողջ աշխարհում կոգեկոչի Մեծ եղեռնի զոհերին...

100 տարին, ինչ խոսք, զուտ խորհրդանշական տարելից է, հասկանալի է, որ հայերիս սեփական օրրանից բնաջնջունը չէր սկսվել և չավարտվեց միայն 1915 թվականով: Հայ ժողովրդի տառապանքներն ավելի ծանր էին, քան կարող էր կրել օրացուցային մեկ տարին: Չնայած դրան՝ պետական բարձր մակարդակով ծրագրված, բոլոր դետալներով նախագծված և տևականորեն իրականացվող ջարդերն անգամ հնարավորություն չտվեցին, որպեսզի հանցավոր այդ մտահղացումն իրականություն դառնա իր ողջ ծավալով: Պատճառները բազում էին, սակայն մեկը թերևս ամենաէականն է՝ օգնությունը ...

Հայորդիներիս օգնության ձեռք մեկնած և՛ անհատների, և՛ բարեգործական կազմակերպությունների, և՛ պետությունների անունները մշտապես երախտիքով են հիշատակվում Ցեղասպանության սարսափները վերարտադրող յուրաքանչյուր վկայության մեջ: Սակայն կա ճշմարտության մի մասնիկ ևս, որ մինչ այժմ գրեթե լռության է մատնվել կամ առնվազն բարձրաձայնվել է ամենանեղ մտերմիկ շրջանակներում միայն. խոսքն արհավիրքի պայմաններում հայերիս օգնության ձեռք մեկնած թուրքերի մասին է:

Պատմությունները, որ ներկայացված են «100 տարի... Իրական պատմություններ» շարքում, հենց այս փաստի վկայությունն են, փաստ, որը ևս մեկ անգամ անհերքելի է դարձնում հետևյալ ճշմարտությունը. գթասրտությունը, խիղճը արժեքներ են, որ չեն ճանաչում ո՛չ ազգություն, ո՛չ դավանանք, ո՛չ իրական կամ հորինված որևէ այլ սահման:

Պատմությունների այս ժողովածուն փորձ է արժանին մատուցելու բոլոր այն Մարդկանց, ովքեր չխորշեցին փրկության ձեռք մեկնել հայերիս անգամ սեփական կյանքը վտանգելու գնով: Այն նաև փորձ է արժանին մատուցելու ճշմարտությանը և հավուր պատշաճի ներկայացնելու իրականությունը, քանի որ այդ իրականության մեջ են եղել ինչպես Ցեղասպանություն ոճիրը ծրագրողներն ու իրականացնողները, այնպես էլ Թուրքիայի այն զավակները, ում ջանքերով հնարավոր եղավ որոշ հայ ընտանիքների և հայորդիների պաշտպանել ու փրկել այդ մեծ արհավիրքից:

**Աննա Մկրտչյան,
«Արմեդիա» տեղեկատվական, վերլուծական գործակալության
գլխավոր խմբագիր**

Իրական պատմություններ



Գյուղ Մուրատչայ


**«Թուրք հացթուխը պապիկիս պահում է իր տանը,
հետո հանձնում Ստամբուլի ամերիկյան որբանոց»**

Պատմում է Գրիգոր Ավետիսյանը

Հայրական պապիկս՝ Ավետիսյան Ավետիսը, ծնվել է 1900 թվականին Եսքիշեյրի շրջանի Մուրատչայ (Մուրադչայ) գյուղում: Գյուղի անունը ներկայումս փոխվել է, նոր անունը չգիտեմ: Գյուղն այն ժամանակ մոտ տասը հազար բնակիչ ուներ, ովքեր հիմնականում զբաղվում էին անասնապահությամբ: Մուրատչայում երկու եկեղեցի կար. մեկը կառուցվել էր մինչև 1900 թվականը, իսկ երկրորդը կառուցվել ու շահագործման էր հանձնվել արդեն 1900-ին: Պապս աշխատում էր այդ նոր եկեղեցում՝ որպես ժամկոչ: Ի տարբերություն Արևելյան Հայաստանի՝ Արևմտյան Հայաստանում եկեղեցիները զանգակատուն չեն ունեցել, ժամերգության ու պատարագի մասին գյուղի պատանիներն են գյուղով մեկ հայտարարել կոչնակների օգնությամբ:



Վկայական Բուլղարիայում հացթուխ աշխատելու համար



Չեռագիր գրառում Մուրատչայի նկարի ետևում

Պապիկիս պապը՝ Հաջավետանց Ավետը, մոտ 60 կմ հեռավորության վրա գտնվող Էսքիշեյի քաղաքում անասունները վաճառքի տանելիս բարեկամություն էր հաստատել մի հացթուխ թուրքի ընտանիքի հետ: 1914 թվականին Հաջավետանց Ավետը թուրք հացթուխի մոտ որպես աշակերտ է տանում իր թոռանը՝ պապիկիս:

Երբ սկսվեցին հայերի զանգվածային ջարդերն ու տեղահանությունները, պապիկս թուրքի տանն էր: 1915 թվականին այդ թուրքը փաստորեն փրկեց պապիկիս կոտորածից՝ պահելով իր տանը և բոլորից թաքցնելով, որ հայ է, իսկ ավելի ուշ հանձնելով Ստամբուլի ամերիկյան որբանոց: Պապիկս պատմում էր, որ երբ արդեն անցել էր այդ լարված շրջանն ու հնարավորություն էր ստեղծվել հետ վերադառնալու, ինքն իսկույն որոշում է գյուղ գնալ և գտնել ծնողներին: Գյուղ վերադառնալով՝ պապս գտնում է հարազատ Մուրատչայն ամբողջովին ավերված, թալանված, իսկ բարեկամներին՝ կոտորված: Այս ամենը տեսնելով՝ պապս գնում է և միանում հունական բանակին՝ որպես զինվոր: Նրա խոսքերով՝ հունական բանակի առաջին զօնում հիմնականում կռվում էին հայկական ուժերը, թիկունքից հույներն էին գալիս: Հունական բանակի պարտությունից հետո արդեն պապս տեղափոխվում է Բուլղարիա, հաստատվում Ստարա Ջագորա քաղաքում, որտեղ և ծանոթանում է տատիկիս հետ և ամուսնանում: Բուլղարիայում ապրելու տարիներին պապս ապրուստի միջոց վաստակում էր հաց թխելով. հացթուխ էր աշխատում մի թուրքի մոտ: Որոշ ժամանակ անց պապս արդեն կարողանում է տուն գնել, գնում է նաև այդ թուրքի հացի փուռն ու դարձնում իրենը: Նրանք Բուլղարիայում ապրում են մինչև 1933 թվականը, իսկ 1933-ին երկու որդիների հետ տեղափոխվում

Հայաստան: Մի անգամ պապիկիս հարցրեցի, թե այդ փուռն ու տուռը, որ թողել էր Բուլղարիայում ու Հայաստան վերադարձել, մոտավորապես ի՞նչ կարժենար: Պապս պատասխանեց. «է՛, թող մի միլիոն ըլլար», ու իմ հարցին, թե ինչու այդքանը թողեց ու եկավ Հայաստան ասաց. «Եկա հոս ու ինը միլիոն գտա»... Ու սկսեց մատների վրա հաշվել իր ինը թոռներին, ովքեր Հայաստանում հայերեն էին խոսում ու հայ մեծանում:

Պապիկս հաճախ էր պատմում Ցեղասպանությունից փրկվելու իր պատմության, դրան հաջորդած դժվարին տարիների ու փորձությունների մասին: Թուրքի մասին պատմելիս նա հաճախ էր կրկնում, որ ինչ վրեժ ուներ, ինքն արդեն լուծել է: «Դու անելիք չունես», - ասում էր ինձ: Հիմա նոր են հասկանում, որ այդպես էր ասում, որ վրեժխնդրությամբ լցված չապրեն կյանքս, որ հանգիստ ապրեն: Մտքում ու հիշողության մեջ միշտ վառ պահելով անցյալը՝ շատ ու շատ փորձություններ հաղթահարելուց հետո 1977 թվականին պապս կնքեց իր մահկանացուն: ■



Ռիմա Պետրոսյան

«Ես հիշում եմ թե՛ լավը և թե՛ վատը...»

Պատմում է Ռիմա Պետրոսյանը

Հայրս՝ Պետրոսյան Սիրեկանը, Արևմտյան Հայաստանից էր՝ պատմական Իզդիրից: Նա գաղթել էր 1914 թվականին:

Ցեղասպանության մասին պատմել եմ թե՛ հայրս, թե՛ հորաքույրներս: Հորաքույրս ասում էր, որ փախչելուց կճուճով ոսկին թաղել են իրենց բակում, թողել, եկել: Ասում էր, որ լուրն իմանալով՝ շտապել են փախչել՝ իրենց հետ ոչինչ չհասցնելով վերցնել: Նա լաց լինելով պատմում էր, որ կճուճն էլ պահել են՝ մտածելով, որ դեռ կվերադառնան: Եղբայրս հաճախ էր նրան հարցնում թե՛ իրենց տան տեղի, թե՛ ձևի մասին՝ հույսով, որ կկարողանա գնալ և գտնել թե՛ պահված ոսկիները, թե՛ մնացած իրերը:

Երկու հորաքույրներս, որոնցից մեկը մահացել է 65 թ.-ին, մյուսը՝ 85-ին, երկուսն էլ ապրում էին Արագ գետի ափին, նրանց ժառանգները մինչ օրս էլ այնտեղ են ապրում: Երբ փոքր էի և նրանց մոտ էի գնում, հարցնում էի՝ բոլորը Ցեղասպանությունից հետո գնացել են արտասահման, իրենք ինչո՞ւ են եկել, հենց այդտեղ հաստատվել: Հորաքույրս ի պատասխան ձեռքը պարզում

էր դեպի իրենց հողատարածքը և մի փոքր հեռուն ցույց տալով՝ ասում, թե իրենք այդտեղ են մնում, որպեսզի սահմանը բացվելուն պես կարողանան նորից հետ գնալ իրենց տուն:

Հայրս պատմում էր, որ իրենք 3 եղբայր և 3 քույր են եղել ... Այն ժամանակ թուրք ու հայ ապրում էին միասին: Հարևանի հետ շատ մտերիմ են եղել, ընկերներ էին, միասին հաց էին կիսում, միասին աշխատում ... Մի օր հայրս զարմանում է, երբ հենց այս իր ընկերն իրեն ասում է, թե հայ ազգի դեմ կոտորածի ծրագիր է մշակվում, և նրանք պետք է փախչեն: Հայրս էլ հայերից ում հասցնում է, զգուշացնում է: Տուն առ տուն ընկնելով՝ այդ ժամանակ հայրս շատ-շատերին է փրկել: Իր եղբոր ու քույրերի հետ նա անցնում է Արագի մյուս ափը և հաստատվում այնտեղ: Հորաքույրներս մինչև մահ այնտեղ են ապրել, իսկ հայրս եկել է Երևան: Հայրս պատմելիս միշտ նշում էր, որ եթե չլիներ իր թուրք ընկերը, իրենց էլ կոտորած կլինեին մյուսների պես:

Երևանում հայրս ամուսնացել և 2 երեխա է ունեցել: Մինչ այդ նա ամուսնացած է եղել մի կնոջ հետ, ով մահացել է մինչև գաղթը, նրանից հայրս ևս երկու երեխա է ունեցել: Նրանց ևս պահել և մեծացրել է մայրս, մենք միայն տարիներ հետո ենք իմացել, որ նրանք մորս երեխաները չեն եղել:

Հայրս միշտ ասում էր, որ թուրք ժողովուրդը մեղավոր չէ, դատել է պետք փաշաներին...

Ես հիշում եմ թե՛ լավը և թե՛ վատը: ■

«Թուրքերը Գյուլիզարին պահում են ինչպես սեփական երեխային և հրաժարվում հանձնել ամերիկացիների խնամքին»

Պատմում է Ռոմելա Գուլյանցը

Ես Ռոմելա Գուլյանցն եմ, այս պատմությունը լսել եմ կնքահորիցս: Նա ընտանեկան հավաքների ժամանակ հաճախ էր պատմում իր տատիկի՝ Սմբուլյան Գյուլիզարի մասին, ով ծնվել է 1899 թվականին Սեբաստիա նահանգի Գեմերեկ գյուղում: Նրա հայրը եղել է նահանգի ոչ բարձրաստիճան պաշտոնյա, տանը երեք երեխա է եղել՝ ավագ դուստրը, Գյուլիզարը և եղբայրը:

Կնքահայրս պատմում է, որ ջարդի օրերին գիշերով հեծյալներ են եկել գյուղ և Գյուլիզարի հորը բռնի տարել տանից: Մի քանի օր անց սպանվել է նաև մայրը. երեխաները մնացել են որբ, ոչ ոք չի եղել նրանց կողքին: Մի քանի օր հետո, երբ գյուղի վրա ևս մեկ հարձակում է տեղի ունենում, թուրք հեծյալներից մեկն առևանգում է Գյուլիզարի եղբորը, ում նա այլևս չի տեսնում, հեծյալներից մյուսն էլ առևանգում է իրեն: Ավագ քրոջ ճակատագրի մասին Գյուլիզարը տեղեկություն այլևս չի ունենում:

Կնքահորս խոսքերով Գյուլիզարին առևանգած թուրքը նրան տանում է իր տուն, և քանի որ ընտանիքը տարիներ շարունակ երեխա չէր ունեցել, Գյուլիզարին ընդունում և վերաբերվում են ինչպես սեփական երեխայի, ոչ մի դեպքում չեն ցանկանում նույնիսկ մանկատուն հանձնել նրան:

Մի քանի տարի անց թուրքի ընտանիքում արու զավակ է ծնվում, դրանից հետո թուրքերը հաճախ են նշում, որ հայ աղջնակն իրենց համար ընծա է եղել և սրբություն է բերել իրենց տուն, դրա համար էլ իրենք երեխա են ունեցել:

«Ղսմաթով երեխա է Գյուլիզարը», - թուրքի խոսքը մեջբերում էր կնքահայրս:

Թուրքի տուն տեղափոխվելուց հինգ տարի անց ամերիկյան դեսպա- նատնից մարդիկ են ժամանում, փնտրում են Ցեղասպանությունից փրկված



Գյուլիզար՝ առաջին շարք, աջ կողմից առաջինը

հայ երեխաների: Գյուղում թուրքերից մեկի տանն աշխատող մի հայ կին, ով ճանաչում էր Սմբուլյանների աղջկան, դեսպանատան աշխատակիցներին տեղեկացնում է Գյուլիզարի մասին: Մի քանի օր հետո նրանք գիշերով փախցնում են Գյուլիզարին, քանի որ թուրք ընտանիքը հրաժարվում է երեխային հանձնել ամերիկացիների խնամքին:

Հաջորդ օրը թուրք ընտանիքը գնում է դեսպանատուն, խնդրում է վերադարձնել երեխային: Ամերիկացիները կտրականապես մերժում են նրանց, սակայն հնարավորություն են տալիս մի քանի ժամով տեսակցել Գյուլիզարին:

Տեսակցության ժամանակ թուրքը գումար և իր տան հասցեն է տալիս երեխային և խնդրում ցանկության դեպքում վերադառնալ տուն: Կնքահայրս պատմում է, որ երկար տարիներ թուրքի տան հասցեն Գյուլիզարի մոտ է եղել:



Գլյուկիզար՝ առաջին շարք, ձախ կողմից առաջինը

Ամերիկյան դեսպանատունը երեխային Թուրքիայից տեղափոխում է ՅուՆԱՍՏԱՆ՝ Իտիպսոսի մանկատուն, որտեղ նա ուսում է ստանում, ամուսնանում: Նրա սկեսուրն Անդրանիկ Օզանյանի հորաքրոջ աղջիկն էր, ով կրտսեր որդու՝ Յովսեփի համար հարսնացու էր փնտրում: Ամուսնանալուց հետո Գլյուկիզարը փոխում է իր անունը և հայկական Հասմիկ անունն է վերցնում: Մեկ տարի անց Յովսեփը և Հասմիկն ունենում են իրենց առաջնեկին՝ Գրիգորին: 1936թ. նրանք տեղափոխվում են Երևան, որտեղ ծնվում է նաև երկրորդ որդին՝ Արմենակը: Երևանում բավական բարեկեցիկ կյանքով են ապրում, սակայն այդ ժամանակահատվածը համընկնում է ստալինյան բռնաճնշումների հետ, և ընտանիքը, վախենալով աքսորից ու հալածանքներից, վաճառում է ողջ ունեցվածքը, գաղթում Թավրիզ, իսկ երբ մահանում է սկեսրայրը, տեղափոխվում են Սալոնիկ՝ ՅուՆԱՍՏԱՆ: ՅուՆԱՍՏԱՆում Յովսեփը վաղաժամ մահանում է, ընտանիքի ամբողջ հոգսն ընկնում է Հասմիկի վրա:

Տեսնելով, որ Հասմիկը շատ է չարչարվում՝ սկեսուրը որոշում է նրան ամուսնացնել: Հասմիկն ամուսնանում է նույն քաղաքում բնակվող հայ այգեգործի հետ, ով նույնպես Ցեղասպանությունից փրկված է լինում, սակայն այդ տարիներին տեղի ունեցածի մասին երբևէ չի ցանկացել խոսել: Կնքահորս խոսքերով նրա դեմքին սպի է եղել, որը մի թուրք է նրան հասցրել՝ ցույց տալու համար, թե երեխան մահացած է, որպեսզի հնարավորություն ունենա

նրան դուրս բերել հարձակման ենթարկված գյուղից: Երկրորդ ամուսնու հետ Հասմիկը ծանր կյանքով է ապրում և երրորդ երեխային՝ Հակոբին ունենալուց հետո ստիպված են լինում Սալոնիկից գյուղ տեղափոխվել՝ ընտանիքի կարիքները հոգալու համար: Հղիության ընթացքում Հասմիկը կուրանում է և մոտ 5-6 ամիս կուրացած է լինում: Երեխայի ծնվելուց հետո, բարեբախտաբար, նրա տեսողությունը վերականգնվում է: Այդ ժամանակ մեծ տղաները տեղափոխվում են Գերմանիա՝ աշխատելու, ընտանիքին օգնելու նպատակով: Մի քանի ամիս անց Հասմիկն ու ամուսինը նույնպես տեղափոխվում են Գերմանիա՝ երեխաների մոտ: Այս ժամանակն էլ համընկնում է Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին, և նրանք ստիպված են լինում նորից վերադառնալ ՅուՆԱՍՏԱՆ, որտեղ նորից չափազանց դժվար են ապրում: Սկզբնական շրջանում բնակվում են ծանոթ հարևաններից մեկի խարխլված խրճիթում, որոշ ժամանակ անց կարի մեքենա են գնում, ամուսինը պաղպաղակ պատրաստել է սովորում և աստիճանաբար սկսում են «ոտքի կանգնել»: Այդ ժամանակ Հասմիկի՝ Բուլղարիայում բնակվող ամուսնու եղբայրը տեղափոխվում է Հայաստան: Հասմիկի ընտանիքն էլ է որոշում նրանց հետ բնակություն հաստատել Հայաստանում (1947թ.): Հայաստանում Հասմիկի ամուսինը աշխատանքի է անցնում կահույքի գործարանում, բնակություն են հաստատում Երևանի Արաբկիր թաղամասում, տղաները և նրանց սերունդները մինչ օրս բնակվում են Ավանում:

Հասմիկն ապրում է 107 տարի և մահանում 2006 թվականին: ■

«Սպան հայտնել է, որ թուրքական կառավարությունը որոշել է Թուրքիայում ապրող բոլոր հայերին բնաջնջել»

Պատմում է Լևոն Քաֆթարյանը (Չայնագրությունը տրամադրել է վերջինիս զարմուհի Մաղեն Մինասյանը)

Հայրս Ազնըցի էր: Վաճառականությամբ էր զբաղվում, 4-5 խանութ ուներ: Հայրս պատմում էր, որ մի օր առավոտ կանուխ, երբ խանութը բացել է, մի զինվորականի է տեսել, ով ձին կանգնեցրել է խանութի առջև: Թուրք սպա էր: Մի վնասված արծաթյա դրամ է պարզել՝ ասելով. «Չորբաշի (բաշի՝ վաճառական), կարո՞ղ ես փոխել այս դրամը»: Հայրիկը սնդուկից հանել է նույն արծեքի արծաթյա մի նոր մետաղադրամ և տվել սպային որպես նվեր, գումարը չի վերցրել: Սպան շնորհակալություն է հայտնել ու հեռացել:

Երկու տարի անց՝ 1892 թ.-ին սկսվել են հայերի ջարդերը: Մի օր առավոտյան մինարեթի վրայից ազդանշան են տվել, և կոտորածը սկսվել է: Հայրս պատմում էր, որ հանկարծ իրենց դռան մոտ կանգնած մի քանի զինվորական են տեսել: Խուժանը եկել անցել է՝ ջարդելով, խանութները կողոպտելով: Երբ մեր դռանն են հասել, զինվորներն ասել են. «Իրավունք չունենք այստեղ կողոպտելու»: Այդպես անցել գնացել են:

Երեկոյան հարձակումը դադարել է: Հայրս ասում է՝ մի սպա եկավ ներս, ասաց. «Բարի լույս, չորբաշի, գիտե՞ս, թե ինչի համար դու ազատվեցիր»: Հայրս հարցնում է՝ «Ինչո՞ւ», ասում է. «Հիշու՞մ ես, ինձ մի արծաթ նվիրեցիր, ես դա չմոռացա: Երկու տարի անց եկա՝ ազատելու քեզ ու քո ընտանիքը»:

Սպան հայտնել է, որ թուրքական կառավարությունը որոշել է կայսրությունում ապրող բոլոր հայերին բնաջնջել: Նա նաև հայտնել է, թե քանի որ հայրս բարի մարդ է և շատ բարիք է արել քաղաքի համար, հազարապետի և քաղաքագլխի հետ միասին նրան առաջարկում են հեռանալ և որքան բարեկամ ունի՝ հետը տանել:

Հայրս ասում է, թե իր չորս եղբայրներն ուրիշ քաղաքներում են ապրում՝ Դիարբեքիր, Մալաթիա, նրանց հարցն ի՞նչ պետք է լինի: Զինվորականն ասել է, որ անմիջապես նրանց կկարգադրեն գալ այդտեղ:



Մաղեն Մինասյան

Բոլորը հավաքվել են: Շուրջ տասը ժանդարն ողջ ընտանիքին՝ ձիով, ոտքով, հասցրել են Սև ծովի ափը: Այնտեղ նստեցրել են նավ և ուղարկել Ռուսաստան: Այդպես նրանք անցել են Սուխում քաղաք: Այնտեղ արդեն ազատ էին:

Ռուսական հեղափոխության ժամանակ հայրս ընտանիքով տեղափոխվել է Բուլղարիա: Այնտեղ ևս վաճառականությամբ է զբաղվել. մեծանուն Գյուլբենկյանի գործակատարն էր: Ես արդեն ծնվել եմ Բուլղարիայում՝ Վառնա քաղաքում, 1905 թվին: ■

«Հայրս մինչև կյանքի վերջ հիշում էր Ջաբիթ էֆենդիին»

Պատմում է Հակոբ Մարգարյանը

Մեր իսկական ազգանունը Մալխասյան է, սակայն ճակատագրի բերումով դարձանք Մարգարյան: Իմ հայրը՝ Հարություն Մարգարյանը, ծնվել է Վանի Եվջիլեր քաղաքում 1899թ.-ին: Հորս հայրը՝ Վարդանը, երբ սկսել են կառուցել Բեռլին-Բաղդադ երկաթգիծը, վերակացու է եղել: Այնտեղ տարբեր ազգերի աշխատողներ են եղել՝ հայեր, հույներ, թուրքեր, քրդեր, արաբներ: Երբ աշխատավարձ էին ստանում, այն բերում-պահ էին տալիս տատիս՝ Վարդուհուն: Նա բոլորի անունները գրանցում էր ցուցակում և այդ գումարները դնում էր սնդուկում:

Երբ սկսվել է 1915-ի կոտորածը, առաջինների շարքում տարել են Վարդան պապիս: Առաջին զոհերից մեկը նա է եղել: Նա ունեցել է մի լավ թուրք ընկեր՝ Ջաբիթ էֆենդիին, ով ամբողջ ընտանիքին փախցրել է և 4-5 տարի պահել իր տանը: Տատս էր, հայրս, հորս ավագ եղբայր Միհրանը՝ ծնված 1895թ., Հայկը (1898թ.) և նրանց քույրը՝ Աղավնին:

Նրանք թուրքի ընտանիքի հետ ապրել են, աշխատել: Այդ մարդը երբեք իր տղաներից չի տարբերել հորս, հորեղբայրներիս ... նրանց նույն կերպ կերակրել է, հագցրել ...

Միհրանը՝ մեծ եղբայրը, այդ քաղաքի խաղատանն է աշխատել: 1918-ին Միհրանին տանում են բանակ: Այդտեղ նրա թուրք հրամանատարն ասում է. «Կնոջս ու երեխայիս վերցրո՛ւ, տա՛ր Պոլիս, այնտեղից հետո կփախչես, ուր կուզես՝ գնա՛, միայն թե այլևս չվերադառնաս»:

Միհրանը հրամանատարի ընտանիքը հասցնում է Պոլիս: Այնտեղ նավահանգստում մի բուլղարական նավ է կանգնած լինում, գնում է, ասում, թե հայ եմ, ուզում եմ էստեղից փախչես: Նրան վերցնում են նավի վրա: Այսպես նա հայտնվում է Հունաստանում:

Երբ սկսվում է ջարդի երկրորդ ալիքը, Ջաբիթ էֆենդիին ասում է. «Ես այլևս



Սրբուհի և Հարություն, 1979 թ.

չեմ կարող ձեզ պահել, պետք է հեռանաք»: Նա խուրջինները ուտելիքով է լցնում, ճանապարհի համար ամեն անհրաժեշտ բան դնում, և տատիկս իր զավակների հետ ճանապարհ է ընկնում:

Թուրքի տղան հորս հետ կռված է լինում: Դե, երևի թուրք երիտասարդին դուր չէր գալիս, որ իր հայրը հայերին այդպես լավ էր վերաբերվում: Բայց ճանապարհելիս նա մոտենում է հորս, գրկում նրան և ասում. «Իմ մասին վատ չիիշես»:

Այդպես նրանք հասնում են մինչև Կիլիկիա՝ Դերսիմ քաղաքը: Ճանապարհին տարբեր դեպքեր են տեղի ունենում, սակայն նրանք առանց կորուստների տեղ են հասնում:

Իրենց հետ էր Միհրան հորեղբորս նշանած Եպրաքսիան: Ճանապարհին նա հիվանդանում է բնական ծաղիկով, ինչը շատ վտանգավոր է շրջապատի համար: Նրան մեկուսացնում են: Սակայն հայրս իտալացի բժշկին գումար է տալիս, որ այդ աղջկան կարողանան հիվանդանոցից դուրս հանել: Եվ նրան, դիակների մեջ դրած, հիվանդանոցից դուրս են հանում, բերում տուն: Ամեն օր բժշկին մեկ ոսկի էին տալիս, որ նրան տանը բուժի: Եվ Եպրաքսիան կենդանի է մնում:

Հասնում են Դերսիմ քաղաքը: Ամբողջ նավահանգիստը դիակներով էր լցված, մարդիկ դրանց վրայով քայլում էին: Գնում էին նավ բարձրանալու:



Չախից արջ՝ Հարություն և Հայկ



Սիրուհի և Հարություն,
1926 թ.

Այնքան շատ էին, որ նավից նրանց վրա եռման ջուր էին լցնում, որ չբարձրանան: Նավից մի հաստ ճոպան են զգում ամբոխի մեջ: Ով ճոպանի այս կողմում էր մնում, նա նավ էր նստում, ով մյուս կողմում՝ մնում էր ավին: Մեծ դժվարությամբ, բայց ողջ ընտանիքին էլ հաջողվում է նավ բարձրանալ: Մեկ էլ այդ թոհուրեհի մեջ տեսնում են, որ իրենց փայտե արկղը չկա: Կհիշեք, երևի, փողոցում կոշիկ մաքրողներն այդպիսի արկղ ունեին: Նրանք ողջ ճանապարհին այդպես փող էին աշխատել և ոսկիները պահել այդ արկղի գաղտնի դարակում: Հայկը նկատում է, որ արկղը ջրի մեջ լողում է: Նետվում է ջուրը և արկղը գրկած՝ նորից նավ բարձրանում:

Ազգբուն եղել են Չակինտոս կղզում: Ջարդերից հետո, երբ հայերը ցարուցրիվ էին, հայկական եկեղեցիներում իրենց մասին տեղեկություններ էին թողնում, թե «մենք գտնվում ենք այսինչ տեղում»: Եվ այսպես շատերը միմյանց գտնում էին:

Միհրանի նշանածը՝ Երաքսիան, եկեղեցում երկտող է թողնում՝ «մենք գտնվում ենք Չակինտոս կղզում»: Եվ մի գեղեցիկ օր դուռը բացվում է, ներս է մտնում Միհրանը:

Այնտեղ շատ գաղթականներ են եղել: Մի օր հորս ասել են, որ շատ գեղեցիկ աղջիկներ կան: Հայրս գնում ու տեսնում է տատիս՝ Սիրուհուն, որն այդ

ժամանակ 16 տարեկան էր: Հայրս ասում է. «Արի՛ գնանք, քեզ հետաքրքիր բաներ ցույց կտան»: Այդպես տանում է իրենց տուն և այլևս թույլ չի տալիս հետ գնալ: Դրանից հետո նրանք ամուսնանում են, դա 1926 թվականն էր, և տեղափոխվում են Աթենք: Այստեղ կոշիկի արհեստանոց են հիմնում, այնուհետև՝ խանութ: Մի անգամ հայրս պանդոկում խմում է և վիճաբանության բռնվում մի հույնի հետ: Սա ասում է. «Կորե՛ք, գնացե՛ք ձեր երկիրը, ի՞նչ գործ ունեք այստեղ»: Հայրս հարվածում է հույնին: Դրա պատճառով մոտ ութ ամիս բանտ է նստում: Դուրս է գալիս և որոշում, որ, իրոք, արդեն ժամանակն է գնալու Հայաստան: Ի դեպ, հայրս Նանսենյան անձնագիր ուներ:

Հասնում են նավահանգիստ: Այնտեղ ցուցակով անուններ էին կարդում և մարդկանց թույլ տալիս նավ բարձրանալ: Կարդում են՝ «Մարգարյան», ոչ ոք ձայն չի հանում: Նորից են կարդում, ոչ ոք չի արձագանքում: Այդ ժամանակ հայրս ասում է՝ «մենք ենք Մարգարյան», ընտանիքով նավ է նստում ու գալիս Կովկաս: Դա 1932 թվականն էր: Ահա այդպես մեր ազգանունը Մալխասյանից դարձավ Մարգարյան:

Հայրս մինչև կյանքի վերջ հիշում էր Չաբիթ Էֆենդիին, խաչակնքում ու ասում. «Թող Աստված նրան ամենայն բարիք տա»... ■

«Հայուհիների վարսերը ջրիմուռների նման ծածանվում էին ալիքների վրա»

Պատմում է Նաիրա Մկրտչյանը

Ես կպատմեմ իմ մայրական պապի՝ Սարգիս (Սերգո) Գ(Կ)ույունջյանի ընտանիքի պատմությունը:

Սերգո պապիկիս հոր անունը եղել է Գրիգոր (1876-1948), մոր անունը՝ Գայանե (1877-1959), որին Նենե են ասել: Նրանց երեխաներն են եղել Սարգիսը, Մանուկը, Վարդուհին և Սրբուհին: Ապրել են Իզմիր քաղաքում: Գրիգորը և նրա հայրը հայտնի ինժեներ-մեխանիկներ են եղել, իսկ պապը՝ ոսկերիչ, այստեղից էլ՝ նրանց ազգանունը. «կույունջու» թուրքերեն նշանակում է «ոսկերիչ»: Ասում են, որ իրենց ցեղից է եղել 19-րդ դարի անվանի գեղանկարիչ Արխիպ Կուինջին:

Ընտանիքի փրկվելու պատմությունը կարողացա վերականգնել՝ վերհիշելով մորս՝ Գայանե Գույունջյանի, և քեռուս՝ Գրիգոր Կույունջյանի (Մանուկի որդու) պատմածները, որ նրանք լսել են իրենց Գրիգոր պապից.

«Այդ օրը եկավ մեր հարևանը, որը կիսով չափ թուրք էր, կիսով չափ՝ Կովկասի մուսուլման ինչ-որ ազգի: Նա թուրքական բանակի սպա էր: Եկավ ու ասաց, որ պետք է արագ հավաքվել և փախչել, որովհետև ջարդ է սպասվում: Շատ արագ հավաքվեցինք, վերցրինք ծածկոցներ՝ փաթաթվելու համար, ուտելիք, տանը եղած գումարը ու փախանք: Պահած ոսկիները հանելու ժամանակ չեղավ:

Մեր ընտանիքի բոլոր անդամները՝ հատկապես աղջիկները, սիրունատես են եղել՝ սպիտակամաշկ, շեկ-կարմրավուն մազերով, խաժաչք: Թուրք հարևանն ասել է. «Ես չեմ կարող թույլ տալ, որ նման գեղեցիկ մարդկանց սպանեն»:

Նրա խորհրդով աղջիկների երեսին մուր քսեցինք ու գնացինք: Թուրքը մեզ էշերի վրա հասցրեց հունական բանակի մոտ: Նավահանգիստ տանող ճանապարհին ամեն քայլափոխի ժանդարմներ էին կանգնած: Ամեն մեկին



Գրիգոր պապ



Սարգիս Գույունջյան

հանում, մի ոսկի էի տալիս, տարբեր գրպաններում մեկական ոսկի էի դրել: Այդպես մի կերպ հասանք, նավ նստեցինք ու գնացինք Հունաստան: Այդպես մեր ընտանիքը փրկվեց:

Իզմիրում Ցեղասպանություն էր՝ ծրագրված և աննկարագրելի դաժանություններով, իսկ մենք այդ թուրք հարևանի շնորհիվ կարողացանք ժամանակին փախչել: Շատ հետո մեզ պատմեցին, որ երբ այդ թուրքը վերադառնում է, և իմանում են, որ նա մեզ օգնել է, նրա ողջ ընտանիքն իր հետ միասին կտոհրում են :

Մայրս պատմում էր, որ իր տատիկը՝ Նենեն, ամեն անգամ քնելիս հիշում էր և օրհնում այդ թուրքին: Նենեն պատմում էր նաև, որ հունական նավի վրայից տեսել է, թե ինչպես են հայերի գլուխները կտրում, և որքան դիակներ կան ծովի մեջ, «հայուհիների երկար, գեղեցիկ վարսերը ջրիմուռների նման ծածանվում էին ալիքների վրա»: Նա շատ էր տպավորված այդ տեսարանով, միշտ ողբալով դա էր հիշում:

Աթենքում Գույունջյանների ընտանիքն ապրել է մինչև 1932 թ.: Գրիգորն աշխատում էր Կենտրոնական բանկում չիրկիզվող պահարանների սպասարկման գծով: Նա հայտնի էր նրանով, որ ոչ միայն շատ լավ վարպետ էր՝ «ոսկի ձեռքեր» ուներ, այլև շատ բարի ու ազնիվ մարդ էր: Մի անգամ նա տեսնում է, որ բանկում չիրկիզվող մի պահարան է դրված: Հարցնում է, թե ինչու այն չեն օգտագործում: Բանկի աշխատողներն ասում են, որ այն վաղուց է այդտեղ, քանի որ դրա գաղտնի փականքը ոչ ոք չի կարողանում բացել: Գրիգորը հանձն է առնում փորձել բացել: Մի քանի օր չարչարվելուց հետո պահարանը բացվում է: Պարունակությունը տեսնելով՝ Գրիգորն ուշաթափվում է. այն լի էր դրամներով, ոսկեղենով և գոհարեղենով: Վարպետը ողջ գտածոն հանձնում է բանկին: Այս մասին գրում են Աթենքի բոլոր թերթերը:

1932թ.-ին Գույունջյանների ընտանիքը տեղափոխվում է Հայաստան՝ Երևան: Սարգիս Գույունջյանը եղել է Հայկական ՍՍՀ վաստակավոր ռացիոնալիզատոր, Հրուշակեղենի և կարամելի գործարանի գլխավոր մեխանիկը, սոցիալիստական աշխատանքի հերոս, ՍՍՀՄ ռացիոնալիզատորների և գյուտարարների ընկերության անդամ: Բանկում Սերգո պապիկիս անվանում էին «շոկոլադ պապիկ», որովհետև նրա մոտ երեխաների համար միշտ էլ քաղցրեղեն կգտնվեր:

Ընտանիքը բնակվում էր երկաթուղային կայարան չհասած՝ գետի ափին՝ Հոկտեմբերյան պողոտայի վրա (այժմ՝ Տիգրան Մեծ)՝ վերգետնյա երկաթուղային կամրջի մոտ: Նրանց տների տեղում այժմ արհեստական լճակ է:

Մի օր Սերգոն լսում է շոգեքարշի տագնապալի շչակը: Դուրս է գալիս տանից, տեսնում է՝ գնացքը կանգնել է կամրջի վրա, փնջում է, սև ծուխ է դուրս գալիս, մարդիկ իրար են անցել, մեքենավարն էլ գնացքն այդ վիճակում թողնում, փախչում է: Սերգոն իր եղբայր Մանուկի հետ գործիքները վերցնում է և վազում դեպի շոգեքարշը: Մեծ դժվարությամբ կարողանում են բացել բարձր տաքությունից շիկացած շոգեկաթսան, և գուրոշին ողջ ուժով դուրս է հորդում: Եթե մի փոքր ուշանային, այն կարող էր պայթել՝ հանգեցնելով բազմաթիվ մարդկային զոհերի: ■



Անահիտ Պարտիզպանյան

«Թուրք հարևանները, հասկանալով, թե ինչ ճակատագիր է սպասվում գերի ընկած հայերին, օգնում էին նրանց փախչել»

Պատմում է Անահիտ Պարտիզպանյանը

Երբ ես ծնվել եմ, պապս արդեն մահացած է եղել, այդ պատճառով, ցավոք, պապիս հուշերը չեն լսել, միայն տատիկիս՝ Արշալույս Քանքանյանին են տեսել: Տատիկս շատ էր պատմում Արևմտյան Հայաստանի մասին: Ասում էր, որ շատ լավ պայմաններում են ապրել, լավ տներ են ունեցել, սակայն ստիպված են եղել գաղթել:

Չնայած ինքը փոքր է եղել, երբ գաղթել են՝ 14 տարեկան, միշտ շատ դրական տպավորություններով էր խոսում իրենց տան, հայրենիքի գեղեցիկ բնության մասին: Այդ ժամանակ պապս՝ Պարտիզպանյան Մանվելը, 20 տարեկան է եղել: Վան քաղաքից են եղել: Ինչպես հասկանում եմ՝ այնտեղ հայությունը շատ լավ է ապրել, ընդհուպ՝ տանն աշխատողներ են պահել, մեծ հարստություն են ունեցել, սակայն գաղթի ժամանակ շատ քիչ բան են կարողացել բերել:



Արշալույս Քանքանյանը և Մանվել Պարտիզականը՝ թռեմիկներին գրկած

Երբ դպրոցական էի, տատս պատմում էր, որ գաղթելիս պատերի մեջ բավական մեծ հարստություն են պահել, ոչ ոք չի մտածել թե հեռանում են ընդմիշտ, մարդիկ հույս են ունեցել, որ մի օր դեռ կարող են վերադառնալ տուն:

Տատս պատմում էր, որ իրենց թուրք հարևաններն են փրկել, ասում էր՝ եթե դա չլիներ, զուցեև մենք էլ կենդանի չլինեինք: Գաղթելու ժամանակ գերության մեջ են ընկել բավականին մեծ խմբով: Բոլոր հայերին հավաքել ու փակել են մի վայրում: Հետաքրքիր է, որ այդ ընթացքում նրանց օգնության են հասել հենց տեղի թուրք հարևանները: Վերջիններս, տեսնելով գերի հայերի ճակատագրերը, հասկանալով, որ գերության մեջ ընկածներին սովորաբար չի հաջողվում ողջ մնալ, ոչ միայն տատիկիս ընտանիքին, այլև ամբողջ խմբին օգնում են փախչել:

Տատիկս պատմում էր, որ շատ լավ հարաբերությունների մեջ են եղել իրենց թուրք հարևանների հետ: Պատմում էր, որ կողք կողքի են ապրել և շատ ջերմ վերաբերվել միմյանց:

Պատմում էր, որ իր ընտանիքի հետ գերեվարվածների թվում է եղել նաև Սիլվա Կապուտիկյանի մայրը:

Միևնույն ժամանակ մեկ այլ շատ կարևոր հանգամանք է եղել. տատիկիս ընտանիքի թուրք ծառաներն այնքան հավատարիմ են եղել, որ իմանալով հայերի դեմ ծրագրվող ջարդի մասին՝ եկել և զգուշացրել են նրանց, որ փախչեն:

Սակայն տատս հիշում էր նաև ջարդի սարսափները. թե ինչպես են իրենց աչքի առջև հղի կանանց սրով խոցել, տղամարդկանց՝ գլխատել, երիտասարդ աղջիկներին՝ բռնաբարել: Ասում էր՝ հայ աղջիկներն իրենց լիճն էին նետում՝ նախընտրելով մահանալ, քան ընկնել թշնամու ձեռքը:

Այն ժամանակ աղջիկները վաղ էին ամուսնանում՝ 13-14 տարեկանում: Տատս նույնպես 14 տարեկանում է ամուսնացել: Նա պապիս հետ եկել է Հայաստան և հաստատվել Երևանում: Իրենց բերած որոշ զուամրով կարողացել են իրենց գործը հիմնել այստեղ և բավականին լավ պայմաններում ապրել: Երեք որդի են ունեցել:

... Նրանց տանջում էր հայրենիքի անվերջ կարոտը: Տատիկս շատ էր սիրում թռեմերին իր շուրջը հավաքել և պատմել Արևմտյան Հայաստանի մասին: Չնայած ընդամենը 14 տարեկան է եղել, երբ գաղթել են, և գաղթելուց ի վեր Երևանում է ապրել, մինչև կյանքի վերջ արևմտահայերենով էր խոսում: Նրանից շատ են լսել Վանա տառեխի մասին, Վանա ջրի, օդի մասին, և չնայած իրենք Երևանում էլ վատ պայմաններում չեն ապրել, միշտ կարոտով պատմում էր իրենց լքած տների մասին: Մեծ ընտանիք են ունեցել, սակայն այդպես էլ չկարողացան իմանալ, թե իրենց հարազատներն ինչ ճակատագրի են արժանացել: Տատիկս միշտ ասում էր. «Ճանապարհը բացվի, գնամ, իմ տունը գտնեմ»: Սակայն այն ժամանակ դրա մասին մտածել անգամ հնարավոր չէր: Շատ գրագետ կին էր և անվերջ կարդում էր. 85 տարեկան էր, երբ մահացավ. այդ տարիքում էլ առանց ակնոց էր կարդում:

Այսօր էլ դեռ փորձում ենք մեր հարազատներին գտնել: Ժամանակի տեխնոլոգիաների շնորհիվ շատ ավելի հեշտ է դա անել: Մեր ազգանունը յուրահատուկ է՝ Պարտիզականյան, և գիտեմք, որ այդ ազգանվան բոլոր կրողները Արևմտյան Հայաստանից են: Շատերն իրենք են կապի մեջ մտնում, փորձում ենք պարզել, թե արդյոք ազգակից ենք: ■

«Պապս հույս ուներ, որ երբևէ իր ընտանիքը կրկին կվերադառնա իր օջախը»

Պատմում է Պապան Պետրոսյանը


Երբ ես փոքր էի, միշտ զարմանում էի, թե իմ Վարդանուշ տատն իր որդիների արտասովոր անունները որտեղից է գտել: Բայց երբ մեծացա, ու տատս, հայրս, հորեղբայրներս պատմեցին Սամսոն պապիս ընտանիքի պատմությունը, հասկացա, որ դրանք ոչ միայն պատահական անուններ չեն, այլև տխուր պատմություն ունեն:

Սամսոն Պետրոսյանը հորս՝ Վարդանի հայրն է, ով ապրել է Կաղզվան քաղաքում: Պապիս հայրը՝ տիրացու Պետրոսը, ճանաչված, հարգված ու մեծահարուստ անձնավորություն է եղել Կաղզվանում, ում հորը Գրիգոր են կոչել:

1915 թվականի Ցեղասպանության օրերն էին: Սամսոն պապս տուն է վերադառնում և ընտանիքին տանը չգտնելով՝ ակամայից հիշում է իր հոր բառերը՝ ուղղված որդիներին. «Եթե որևէ հեռավոր տեղից տուն վերադառնաք ու դուռը փակ տեսնեք, կգնաք մեր ընկույզի ծառի տակը կփորեք, եթե դրա տակ թաղված լինի մեր ընտանիքի հարստությունը, ուրեմն փախել ենք ու լքել ենք մեր գյուղը»: Պապս փորում է ընկույզի ծառի տակն ու երբ տեսնում է կճուճով ոսկին, հոնգուր-հոնգուր լաց է լինում, նորից հողով ծածկում է այն՝ հույս ունենալով, որ երբևէ բոլորը կրկին կվերադառնան իրենց օջախը:

Ցեղասպանության օրերին թուրք ենիչերիները հատուկ հավաք էին անում՝ իբրև թե հայ երիտասարդներին բանակ տանելու նպատակով, բայց իրականում այդ երիտասարդներին բանտ էին նետում, որպեսզի չկարողանան կոտորածի ժամանակ պաշտպանել իրենց ընտանիքներին: Բանտում հերթով անուն, ազգանունները կարդալով՝ երիտասարդներին դուրս էին կանչում ու սպանում: Մի օր էլ պապիս անունն են կարդում: Ենիչերիների հրամանատարը մի ենիչերիի պատվիրում է «էդ գյավուրի» գլուխը կտրել, շորերն արյան մեջ թաթախել ու իրեն տալ:

Ենիչերին պապիս տանում է ամայի մի տեղ, որ սպանի: Վերջին անգամ հողին հրաժեշտ տալու համար պապս կռահում է ու մի քիչ հող է զցում բերանը: Հենց այդ պահին, երբ պապս կռացած էր, ենիչերիին շատ ծանոթ է թվում նրա թիկունքը: Նա հարցնում է պապիս որտեղից լինելն ու երբ իմանում



է, որ Կաղզվանի տիրացու Պետրոսի տղա Սամսոնն է, հրացանը ցած է զցում, փաթաթվում պապիս՝ ասելով, թե ինքը նրա հոր տանը ծառայություն է արել, ու իր ընտանիքին սովից փրկել է նրա հայրը՝ Պետրոսը: Նա պապիս հիշեցնում է, որ ինքը Ալին է և որ պապիս փոքր ժամանակ իր ուսերին է ման տվել: Պապս հիշում է նրան: Ալին Սամսոն պապիս չի սպանում: Նա սպասում է մինչև մութն ընկնի, ապա պապիս տանում է իր տուն, մի մոզի մորթում, պապիս շորերը թաթախում է արյան մեջ ու տալիս է իր հրամանատարին:

Թուրք ենիչերին պապիս վերաբերվում է ինչպես իր հարազատ որդուն, հագցնում է իր՝ հիվանդությունից մահացած որդու շորերը: Այսպես, թուրքերից զաղտնի մի քանի ամիս նա կարողանում է Սամսոն պապիս իր տանը պահել, սակայն այս ամբողջ ժամանակահատվածում պապս անընդհատ խնդրում է Ալին, որ իրեն հայաստան ուղարկի:

Ալիի մահացած որդին կին ուներ, ով ապրում էր Ալիի տանը: Պապս պատմել է, որ այդ կինը աննկարագրելի գեղեցկություն է ունեցել, և Ալին մշտապես համոզել է պապիս ամուսնանալ իր հարսի հետ ու իր տղան դառնալ: Բայց պապս ամեն անգամ մերժել է նրան: Երբ Ալին մի անգամ էլ է փորձել համոզել, պապս այնքան համարձակություն է ունեցել, որ ասել է. «Ուզում ես հենց էստեղ ինձ սպանի, բայց թուրք կին չեմ առնի»: Ալին վերջապես հասկանում է, որ պապիս համոզելն անիմաստ է, և գիշերով նրան անցկացնում է սահմանը: Վերջապես պապս հասնում է Էջմիածին, որտեղ և ճակատագրի բերումով հանդիպում է իր հորեղբայր Մինասին, ում հետ մի կերպ, այստեղ-այնտեղ ծվարելով՝ անցկացնում են գիշերները: Տեսնելով, որ այդպես շարունակվել չի կարող՝ հորեղբայրը համոզում է Սամսոն պապիս հեռանալ Էջմիածնից ու գնալ գյուղերում աշխատանք փնտրելու: Պապս թափառելով հասնում է Կոչ գյուղ (ինուն՝ Կվաշավան), որտեղ և ստեղծում է իր տունն ու ընտանիքը: ■

«Երբ թուրք զինվորին հրահանգել են կրակել գաղթականների վրա, նա օդ է կրակել»*

Պատմում է Տաթևիկ Գրիգորյանը

Մայրիկիս տատիկը՝ Գայանե Դիաթյանը, մեր ընտանիքի միակ երկարակյացն էր։ Նա մահացել է 2004 թ.-ին՝ 93 տարեկան հասակում։ Բնականաբար, յուրաքանչյուրս նրա հանդեպ հատուկ հարգանք էինք տածում։ Ցավոք՝ ես ընդամենը 14 տարեկան էի, երբ նա մահացավ, և շատ բան խորապես չեմ գիտակցել։ Հիմա եմ կարողանում հետադարձ հայացք նետել ու հասկանալ, որ նա սովորական մեկը չէր, այլ մարդ, ով ուներ յուրահատուկ ճակատագիր, և ուն ճակատագրի վրա Ցեղասպանությունը թողել էր իր հետքը։

Մորս տատի ծնողները՝ Արուսյակ ու Հմայակ Դիաթյանները, երկու դստրերի հետ Կարսում են ապրել։ Լսել եմ, որ նրանք Կարսում բավական հարուստ են եղել, ենթադրում եմ՝ առևտրով են զբաղվել։ Տատիկիս մայրը՝ Գայանեն, Ցեղասպանության տարիներին փոքր է եղել՝ 4 տարեկան, նրա ավագ քույրը՝ Նազիկը, լսել եմ, որ շատ զեղեցիկ է եղել, նրան միշտ թաքցրել են թուրքերից։

Այս պատմության մեջ հետաքրքիրն այն է, որ, իսկապես, անկախ այն բոլոր դաժանություններից ու վայրագություններից, որ մեզ հայտնի են, այս պատմության մեջ կա նաև հուզական մի կողմ... Կարսից գաղթի ճանապարհին (մանրամասները չգիտեմ, թե ինչ հանգամանքներում), երբ թուրք զինվորին հրահանգել են կրակել գաղթականների ուղղությամբ, նա օդ է կրակել փամփուշտները... Լավ հիշում եմ, Գայանե տատս այդ մասին միշտ պատմում էր կիսաթաց աչքերով։

Այնուհետև, շարունակելով գաղթի ճամփան, նրանց ընտանիքը հաստատվել է Ջավախքում։ Նա հայերենի ուսուցչուհի է դարձել և մեծ դժվարություններով լի կյանք ապրել։

Բնականաբար, այս պատմությունը չես կարող չհիշել, չես կարող դրականը քողարկել։ Բայցևայնպես, անկախ ամեն ինչից, կոտորածների հետևանքներն ավելի մեծ են...

Ես չորրորդ սերունդն եմ Ցեղասպանության ականատես վերապրողների։ Մանկուց գիտեի, որ իմ տատիկի մայրն ու հայրը երկուսն էլ հետաքրքիր



Դիաթյանների ընտանիքը Կարսում



Գայանե Դիաթյան

պատմություն ունեն, և ինձ համար Ցեղասպանության թեման մշտապես մեծ կարևորություն է ունեցել։ Այդ պատճառով էլ, ինքս՝ որպես լրագրող, զբաղվել եմ Ցեղասպանության ականատեսների պատմությունների հավաքագրմամբ։ Յուրաքանչյուր պատմություն իր մեջ մեծ հուզականություն ու մեծ վիշտ ունի։ Եվ շատ հետաքրքիր է, որ Ցեղասպանությունը վերապրածները միշտ պահպանում են իրենց հայրենիք վերադառնալու ձգտումը, Կարսում, Սուսալեռում թողած տունն ամենալավն է նրանց համար...

*Տաթևիկ Գրիգորյանի պատմությունը հրապարակվել է նաև «Արմենայրես» տեղեկատվական գործակալության կայքում։ ■



Աննա Չախվերոյան

«Թուրք ծառաների զգուշացումը փրկել է Ջրվանդյանների կյանքը...»

Պատմում է աստղաբան Աննա Չախվերոյանը

Ես կպատմեմ իմ մոր պապի ընտանիքի՝ Ջրվանդյանների պատմությունը: Նրանք ապրել են Վանում և ակտիվորեն մասնակցել են քաղաքի ինքնապաշտպանությանը: Մորս պապը՝ Տիգրան Ջրվանդյանը, ամուսնացած է եղել Արշալույս Էրջյանի հետ: Ջրվանդյանները հարգված ընտանիք են եղել Վանում: Տիգրանի հայրը հարուստ վաճառական էր և միաժամանակ քաղաքապետի խորհրդական: Նա ընդունել է Եվրոպայից ժամանող պատվիրակություններին: Ջրվանդյանները երեքհարկանի առանձնատուն են ունեցել հենց Վանի կենտրոնական փողոցներից մեկում և սպասավորներ են ունեցել, այդ թվում նաև թուրքեր:

Չենց այդ թուրք սպասավորներն էլ Ջրվանդյանների ընտանիքին զուշացրել են սպասվող ջարդերի մասին, թեև Վանում այդ ժամանակ արդեն խժոժություններ են եղել: Տիգրանը կնոջ՝ Արշալույսի և Յերեխաների հետ 1914 թվականի դեկտեմբերին գաղթել է Արևելյան Հայաստան: Տիգրանի ծնողները, ովքեր արդեն պատկառելի տարիքի են եղել, հրաժարվել են հեռանալ Վանից, մնացել են քաղաքում և մասնակցել քաղաքի ինքնապաշտպանությանը, նրանք զոհվել են ինքնապաշտպանական մարտերից մեկի ժամանակ:


Տիգրանն ու նրա ընտանիքը շատ զրկանքներ են կրել գաղթի ճանապարհին: Իրենց հետ վերցրել են միայն առաջին անհրաժեշտության իրերը և ոսկիներ, որոնց շնորհիվ էլ սկզբնական շրջանում կարողացել են գոյատևել: Գաղթի ճանապարհին կորցրել են նաև իրենց երեխաներին: Մորս հայրն արդեն ծնվել է Արևելյան Հայաստանում 1918 թվականին՝ այստեղ հաստատվելուց 4 տարի անց: ■

«Տատիկիս կարոտից մի մասնիկ մնաց մեր մեջ»

Պատմում է Անահիտ Ղազարյանը

Արբուհի տատիկս ծնվել է 1906 թվականին Վանի Ալյուր գյուղում, որը գտնվում է Վանա լճի արևելյան ափին: Նույն գյուղում էր ծնվել նաև Մամփրե պապս: Դեռ մանկուց նրանց ճակատագիրը որոշված է եղել. ծնողները նրանց «բաշիքյաթմա» էին արել: Մամփրե պապիս մասին իմ ունեցած տեղեկությունները շատ չեն, նա չէր սիրում խոսել: Ամեն անգամ, երբ տատիկս պատմում էր Ցեղասպանության մասին, նա ծխում էր և սրտի խորքից հոգոց հանում: Ավելի շատ տեղեկություններ ունեմ Արբուհի տատիկիս մասին: Նա հաճախ էր պատմում, կարծես չէր հանգստանում: Անանց կարոտ էր զգում իր հայրենի գյուղի հանդեպ և մինչև կյանքի վերջին պահն անընդհատ ասում էր. «Օր մը կերթամ իմ խոր տուն»:

Դեպքերի նախօրեին Ալյուր գյուղը սովորական առօրյայով է ապրել: Տատիկիս տուն այցելել է նրա հոր՝ Մարգար պապիկիս թուրք ծանոթներից մեկը, որպեսզի զգուշացնի սպասվող հարձակման մասին: Այդ պահին տանը եղել են տատիկս, նրա հորաքույր Նոյեմզարը, ով դեռ ամուսնացած չէր, և նրա մայրը՝ Ենգիբարը: Երբ թուրք ընկերը տեսել է, որ մեծ պապիկս տանը չէ, առաջարկել է նրանց իր տանն ապաստանել: Նրանք գնացել են և որոշ ժամանակ թաքնվել այնտեղ, սակայն հարևանները նկատել են, որ տանը հայեր կան, ուստի տանտիրոջն էլ էր վտանգ սպառնում: Ստիպված դուրս են եկել այդտեղից: Դա զուգահեյակ է այն պահին, երբ Ալյուր գյուղում սկսվել են սարսափելի կոտորածներ: Ի դեպ, Ալյուրը համարվել է տարածքի ամենամեծ և ամենահայաշատ գյուղը, ունեցել է երկու հայկական եկեղեցի, երկսեռ վարժարան: Բայց ամբողջ գյուղը մինչև լուսաբաց մոխրի է վերածվել: Տղամարդիկ, ովքեր հասցրել են փախչել, փրկվել են, մյուսներին կոտորել են, այրել, սպանել... Կանանց ու երեխաներին լցրել են եկեղեցին ու դռներն ամուր փակել: Շուրջ 40 օր անհաց ու անջուր մնացել են եկեղեցում: 41-րդ օրը դռները բացվել են: Բանտարկվածների մեծ մասը սովամահ է եղել: Կենդանի մնացածներին ստիպել են բռնել աքսորի ճամփան: Վանա լճի մոտով անցնելիս երկու կին խաչակնքվել են ու ժայռից նետվել...



Սրբուհի Բալուզյան կենտրոնում

Գաղթականների խմբին տարել են Սալմաստ: Այստեղ որոշ ժամանակ մնացել են վրաններում: Գաղթի ճանապարհին՝ նախքան Սալմաստ հասնելը, տատիկիս մայրը չի դիմացել ճանապարհի դժվարությանը, հիվանդացել է տենդով: Տատիկս փաթաթվել է մորը, խնդրել, որ վեր կենա, փորձել է տաքացնել, սակայն մայրը մահացել է: Հորաքույրը դժվարությամբ կարողացել է երեխային բաժանել արդեն անշնչացած մորից և տանել: Հորաքույր Նոյեմզարը երեխայի հետ նստել է պատահական մի պատի տակ: Քիչ հետո դարպասը բացվել է, և չադրայով մի կին նրանց ներս է կանչել, կերակրել: Մի փոքր հանգստանալուց հետո տատիկս և նրա հորաքույրը ճանապարհը շարունակել են գաղթականների մյուս խմբի հետ: Այսպես հասել են Սալմաստ: Սալմաստից մեկնել են Բաղդադ: Տատս պատմում էր, որ իրենք արմավենու ծառերի տակ էին քնում: Բաղդադից նրանց նավով տեղափոխել են Բաթում: Ամենավատն այն է, որ Բաթումում տատս և Նոյեմզար հորաքույրը կորցրել են միմյանց: Այս ընթացքում Մարգար պապս գալիս է ընտանիքի հետքերով, և ճակատագրի բերումով նրանց նավերը գրեթե միաժամանակ ժամանում են Բաթում: Այստեղ նա գտնում է Նոյեմզարին: Նրանք միասին երկար ժամանակ փնտրում են տատիկիս՝ Սրբուհուն, բայց ապարդյուն: Արդեն բոլորովին հուսալքված՝ նա իր քրոջ հետ մեկնում է Ամերիկա: Այդ ընթացքում Սրբուհին խառնվում է գաղթականների մի խմբի: Գաղթականների շարքում ճակատագրի բերումով նա հանդիպում է Մամփրե պապիկիս: Երկուսով



Ամերիկայում բնակվող Սրբուհու հարազատների նամակները

փնտրում են հորաքրոջը, սակայն նրանց ճանապարհները չեն խաչվում: Տատիկս Մամփրե պապիկիս հետ գալիս է Արևելյան Հայաստան՝ Արտաշատ: Հաջորդ տարի՝ 1921 թվականի աշնանը, ժամանում են Դավալու: Պապիկս և տատիկս ամուսնանում են, սակայն փնտրտուքները շարունակվում են: Ինչոր հրաշքով մեծ պապիկս կարողանում է ճշտել տատիկիս գտնվելու վայրը: Տատիկիս ուրախությունն այդ օրերին նկարագրել հնարավոր չէ... Սակայն նրանք չկարողացան հանդիպել: Այդպես էլ, հավերժ կարոտը սրտում, տատիկս հրաժեշտ տվեց կյանքին՝ անվերջ պատմելով, բարձրաձայնելով իր վշտի մասին...

Այդ կարոտից մի մասնիկ մնաց մեր մեջ, մեր արմատներում... ■



Կարապետ Բեքարյան

Թուրքիայի երկու «դեմքերը»

Պատմում է Ռուզան Բեքարյանը

Այս պատմությունն ընտանիքում բոլորը գիտեին, այժմ էլ գիտեն: Հայրական պապս՝ Կարապետը, Ցեղասպանության միակ վերապրածն էր ողջ մեծ գերդաստանից: Պատմության դրվագները բազմիցս լսել էին ու գիտեին և՛ տատս, և՛ հայրս, և՛ հորեղբայրս, թեև չէին սիրում այդ մասին խոսել: Իսկ երբ պատմելու առիթ էր լինում, հայրս՝ Ռաֆիկ Կարապետի Բեքարյանը, և հորեղբայրս՝ Մանուկ Կարապետի Բեքարյանը, փոքր երեխայի պես արտասվում էին:

Երբ ջարդերը սկսվել են, պապս Թոքատ գյուղում է եղել (Թոքատում ամառանոց ունեին, բնակվում էին Սեբաստիայում): Հարձակման օրը նրա հայրը և ողջ ընտանիքը արտում են եղել: Հայրը հասցրել է բռնել որդու՝ պապիս ձեռքից և նրան նետել խոտի դեզի մեջ՝ ասելով, որ ձայն չհանի, ինչ էլ որ տեսնի: Փաստացի պապիս աչքի առջև մորթել են ողջ ընտանիքին՝

քույրերին, եղբայրներին, հորը, մորը, մյուսներին... Հավանաբար տեսածի արդյունքում պապս կորցրել է գիտակցությունը, և երբ ուշքի է եկել, սպանված է տեսել բոլորին: Հորն ու մյուսներին գտել է սարսափելի վիճակում: Այդ ժամանակ նրանց թուրք հարևանները, ովքեր մինչ այդ դիակները հաշվելիս նկատել էին, որ տան կրտսեր տղան չկա, գտել են նրան, վերցրել և թաքցրել իրենց տան նկուղում:

Թուրք հարևանները պապիս պահել են մի քանի օր: Սակայն ինչպես պապս էր պատմում, այդ նույն հարևաններն իրենք են մի քանի անգամ վտանգավոր իրավիճակում հայտնվել: Ամեն ինչ այնքան լավ է հաշվարկված եղել պետական մարմինների կողմից, որ անգամ հայերի հարևան թուրքերի տները ժամանակ առ ժամանակ խուզարկվել են՝ հնարավոր թաքցված հայ երեխաներին գտնելու համար: Մի քանի նման խուզարկությունից հետո թուրք ընտանիքը սկսել է վախենալ: Լուրեր են տարածվել նաև, որ հայերին թաքցնելու համար ինչ-որ թուրքեր պատժի են ենթարկվել, եղել են զխատվողներ՝ հայերին օգնելու համար:

Ուստի տանտերը մի քանի օր անց գիշերով պապիս թաքուն տարել, հանձնել է Թոքատի ամերիկյան որբանոց, որտեղից էլ նրան տեղափոխել են Սալոնիկ: Այսպես նա փրկվել է: Պապս պատմում էր, որ երբ նրանց պատրաստվել են նավ նստեցնել, թուրք զինվորականներ են մոտեցել և ասել, որ տղաներին խմբերով պետք է տանեն բժշկական զննման: Սկզբում տարել են 10-15 տղաների, հետո՝ ևս մեկ խմբի: Պապս շատ ճարպիկ երեխա է եղել, հետաքրքրությունից բարձրացել է նավի կայանաձողի վրա: Այնտեղից տեսել է, որ տղաներին կանգնեցնում են մոտակա պատի տակ և զնդակահարում: Պապս վախից աղմուկ է բարձրացրել, ինչից հետո հասկացել են, թե ուր են տանում տղաներին, և նավի անձնակազմի ջանքերով կարողացել են կանխել մյուսների մահը:

Թոքատից պապս հայտնվել է Սալոնիկում: Նա կորցրել էր ամեն ինչ՝ հարազատներին, ունեցած ողջ գույքը... Նա, սեփական աչքերով տեսնելով հարազատների սպանությունը, նրանց դիակները, հույս չի ունեցել, որ կկարողանա գտնել արհավիրքը վերապրած իր թեկուզ ավելի հեռու բարեկամներից որևէ մեկին: Ջարմանալի չէ, որ պապիս տեսածն ու վերապրածը բերել էին որոշակի հոգեկան խանգարման, որի դրսևորումները մինչև կյանքի վերջ էլ ի հայտ էին գալիս:

Ամեն անգամ վերապրելով այդ մեծ արհավիրքը՝ ցավ էր ապրում նաև այն պատճառով, որ այդ ընթացքում կորցրել է տան Սուրբ Գրիքը՝ Աստվածաշունչը: Այն ժամանակ բոլոր հայ ընտանիքներում ընդունված է եղել տանը Սուրբ Գրիք ունենալ, որի վերջին հատվածում մանրամասն գրված են եղել տոհմի, գերդաստանի, ընտանիքի ծագման պատմությունը, այլ կերպ

ասած՝ ընտանիքի տոհմածառը: Պապս մեծ ցավ և ավստսանք էր ապրում իրենց ընտանեկան Սուրբ Գրքի կորստյան համար: Մշտապես հույս ունեւր, որ երբևէ կկարողանա գտնել այն, սակայն ապարդյուն:

Բայց պապս որոշ բանավոր պատմություններ էր հիշում, որ իրեն փոխանցել էին տան մեծերը, քանի որ հայ ընտանիքներում ընդունված է եղել փոքրերին 5-6 տարեկանից ծանոթացնել նախնիների, զերդաստանի պատմությանը: Պապիս այդ հիշողություններից ակնհայտ էր, որ դա իրենց տոհմի վերապրած առաջին արհավիրքը չէր եղել: Նա պատմում էր, որ մեր տոհմը սերել է Կիլիկիայի վերջին թագավոր Լևոնի ընտանիքից՝ նրա եղբայրներից մեկի աղջկա և ֆրանսիական դքսի ամուսնության արդյունքում: Դարեր առաջ մեր նախնիները կրկին հարկադրաբար, մազապուրծ լքել են Կիլիկիան: Փաստորեն, նրանք Սեբաստիայում հայտնվել էին Կիլիկիայից գաղթելուց հետո...

Փրկվելով պապս ամուսնացել է նույն որբանոցից Սալոնիկ տեղափոխվող տատիս հետ: Նա կամավոր մասնակցել էր Հայրենական մեծ պատերազմին, երկու-երեք անգամ վիրավորվել է, շատ դժվար կյանք է ապրել: Տարիներ անց հենց պատերազմից մնացած բեկորների հետևանքով էլ պապս մահացել է:

Հայրս և հորեղբայրս այս պատմությունը հիշելիս միշտ մտաբերում էին իրենց հոր խոսքերը, ով արհավիրքին զուգահեռ միշտ հիշել է նաև թուրք հարևաններին, նրանց ցուցաբերած վերաբերմունքը, այն, որ նրանք փաստորեն փրկել են իր կյանքը: Պապս միշտ ասել է՝ Թուրքիան իր համար երկու դեմք ունի՝ ցեղասպան՝ ի դեմս պետության և այդ ամենը կազմակերպողների, և Մարդ թուրքերի, ովքեր այդ արհավիրքի ընթացքում կյանքեր էին փրկում:

Պապս մշտապես կրկնում էր. «Երանի նրանց, ովքեր տատ ու պապ են ունենում, մեծ ընտանիք են ունենում, և ոչ ոք նրանցից չի խլում իրենց ընտանիքը: Եվ տա՛ Աստված, որ մեր սերունդները շփվեն Թուրքիայի մյուս դեմքի հետ, ոչ թե նրա, որին մեր պապերն ականատես եղան 1915 թվականին, և ոչ էլ նրա, որ ուրանում է Ցեղասպանությունը»: ■



Հարություն Բերբերյան



Հարություն և Մարիամ

«Հնարավոր չէ նկարագրել՝ որբան մեծ է լինում Հարություն պապի ցավն ու հուսահատությունը, երբ իր գյուղը գտնում է ավերված...»

Պատմում է Հարություն Բերբերյանը

Հարություն Բերբերյանը, ում անունն ու ազգանունը կրում են ես, մայրիկիս պապն է: Նրա պատմությունը շատ ողբերգական է ու անչափ հուզիչ: Արմատներով նրանք եղել են Վանից, բայց հետո տեղափոխվել են Անկարայի Յոզգաթ ավան: Զգիտեմ, թե ինչու է նրանց ազգանունը փոխվել ու դարձել Բերբերյան, բայց պատմել են, որ նրանք նախկինում Տեր-Գաբրիելյան ազգանունն են ունեցել, քանի որ Հարություն պապը և պապի պապը եղել են քահանաներ: Բերբերյան ազգանվան ծագման մի վարկած կա: Մայրիկիս պապի՝ Հարությունի հորեղբայրը ինչ-որ ժամանակ Ստամբուլում աշխատել է սափրիչ, թուրքերեն՝ «բերբեր»: Երևի թե հենց այստեղից էլ առաջացել է Բերբերյան ազգանունը:

Հարություն Բերբերյանը երիտասարդ տարիներին գնացել է Ստամբուլ՝ սովորելու: Նա շատ կրթված մարդ է եղել: Տիրապետել է մի քանի լեզվի, լավ մաթեմատիկա է իմացել: Հայաստան գաղթելուց հետո էլ աշխատել է դպրոցում և անվանի ու հարգված մարդ է եղել:

Յենց ուսանելու տարիներին՝ Ցեղասպանության ժամանակ, ինչ-որ մի թուրք (հավանաբար մեկը, ով հստակ տեղեկության է տիրապետել), զգուշացնում է Չարություն պապին, որ ջարդեր են լինելու: Չարություն պապը, կարողանալով խուսափել գինվորական հավաքագրումից, շտապում է իր հայրենի գյուղ՝ Յողզլաթ՝ գտնելու ու զգուշացնելու սպասվող վտանգի մասին եղբայրներին ու ծնողներին: Իհարկե, նրան չէր հաջողվի ողջ և առողջ դուրս գալ Ստամբուլից, եթե չլիներ թուրքերի օգնությունը: Վերջիններս Չարություն պապի համար կեղծ փաստաթղթեր են պատրաստում, ինչի շնորհիվ էլ նա կարողանում է հասնել իր հայրենի գյուղ: Թե որքան մեծ է լինում Չարություն պապի ցավն ու հուսահատությունը, երբ նա գյուղը գտնում է ավերված, հնարավոր չէ նկարագրել: Գյուղում ոչ ոք չկար՝ այդ թվում և նրա ընտանիքը: Չիմանալով ինչ անել՝ Չարություն պապը գնում է կողքի գյուղ, որտեղ ապրում էր նրա հոր ընկերը՝ հույս ունենալով, որ ընտանիքին կարող է այնտեղ գտնել: Մտնելով կողքի գյուղ՝ նրա առջև բացվում է դաժան մի տեսարան. ամբողջովին ավերված տներ ու փողոցներում ընկած դիակներ: Կանանց դիակների կույտի մոտ Չարություն պապը մի աղջիկ երեխայի է տեսնում (մոտ 12-14 տարեկան), ով կենդանության նշաններ էր ցույց տալիս: Վերցնելով երեխային ձեռքերի մեջ՝ Չարություն պապը նկատում է, որ նա որևէ վերք չունի և արյան հետքեր էլ չկան: Հասկանալով, որ աղջիկը թույն է խմել՝ նա երեխային տանում է մի գոմ, մածուն է խմեցնում ու ոտքերից կախում է գոմի երդիկից այնքան ժամանակ, մինչև այդ ամբողջ լեղին ու թույնը գալիս, թափվում են ստամոքսից: Փրկելով երեխայի կյանքը՝ Չարություն պապը ստանձնում է այդ երեխայի մասին հոգալու պատասխանատվությունը և նրա հետ ճանապարհ է ընկնում՝ փնտրելու իր հարազատներին: Ճանապարհին նրան հայտնում են, որ եղբայրներից մեկը էրգրումում է: Չույսով լցված՝ Չարություն պապն ու այդ փոքրիկ աղջիկը՝ Մարիամը, ուղևորվում են էրգրում, սակայն եղբորը գտնելու Չարությունի բոլոր ջանքերն ապարդյուն են անցնում: Միայն շատ տարիներ հետո է նրան հաջողվում եղբորը գտնել, ով փախել էր Նախիջևան, այնտեղից էլ Լիբանան:

Չույսը կտրած՝ Չարություն պապը երեխայի հետ անցնում է սահմանը և հասնում Երևան, որտեղից էլ ուղևորվում է Վարդենիս: Մի քանի տարի անց, երբ Մարիամը մեծանում է, Չարությունն ամուսնանում է նրա հետ: Նրանք ունենում են հինգ աղջիկ: Բերբերյանների ազգանունը պահպանելու և գերդաստանը շարունակելու համար էլ, երբ որ ծնվում են ես, ծնողներիս խնդրում են, որպեսզի ինձ անվանեն Չարություն ու տան հենց Բերբերյան ազգանունը: ■



Անգիլ Չալըմյան

«Չորաքրոջս հետ ամուսնանալու համար Մեհմեդի նկատմամբ հարազատները մահափորձ են իրականացնում»

Պատմում է Նուբար Չալըմյանը

Իմ նախահայրերը ծագումով Արևմտյան Հայաստանի Տիգրանակերտ քաղաքից են: Որևէ կապ Արևելյան Հայաստանի հետ երբևիցե չենք ունեցել: Ինքս ծնվել եմ Իրաքում: 11 տարեկան էի, երբ ներգաղթեցինք Արևելյան Հայաստան: Պապիս հոր կամ մոր մասին տեղեկություն ես չունեմ, նույնիսկ անունները չգիտեմ, որովհետև 15 թվականի Ցեղասպանության ժամանակ իմ հայրն ընդամենը 3 տարեկան է եղել: Նա չէր հիշում իր հորը, երբևէ նույնիսկ նրա նկարը չէր տեսել, քանի որ հրոսակները զավթել էին նրանց ողջ ունեցվածքը և այն կապոցում, որի մեջ շատ ու շատ իրեր են եղել, եղել է նաև նրանց ընտանեկան լուսանկարների ալբոմը: Պապիս տեսել և հիշում էր միայն ավագ հորաքույրս, ում մասին էլ կպատմեմ: Ցեղասպանության ժամանակ նա առնվազն 12-13 տարեկան աղջնակ է եղել: Ցեղասպանությունից մազապուրծ եղած տատիկիս՝ Սոլոմեին, ես ինքս էլ տեսել եմ: Նա ազգությամբ կիսով չափ ասորի էր:

Չալըմյանները բավականին մեծ տոհմ են եղել: Գերդաստանի մի մասը՝ պապիկիս ընտանիքը, հայ առաքելական եկեղեցու հետևորդներ են եղել: Մյուս մասը հարել է բողոքականներին. ինչպես գիտենք, Տիգրանակերտում



Ազնիվի որդին և հարսը



Ազնիվի դուստրը

գործում էր նաև ավետարանչական եկեղեցի: Բողոքականներին հարող մասը Ցեղասպանությունից մեկ տարի առաջ՝ 1914 թվականին, հեռացել է Թուրքիայից՝ մեկնելով Եվրոպա: Չեն կարող ասել՝ նրանք ավելի շուտ են զգացել այդ վտանգը, թե ոչ, բայց փաստը մնում է փաստ, որ նրանք գրեթե կորուստ չեն ունեցել: Իսկ պապիկս և նրա եղբայրները սպանվել են 1915 թվականի դեպքերի ժամանակ: Բավականին երկար ժամանակ նրանց ձեռք չեն տվել, քանի որ արհեստավորներ են եղել, իրենց արհեստի շնորհիվ որոշ ժամանակ կարողացել են փրկվել կոտորածներից:

Հորս ընտանիքը բնականաբար առնչվել է Տիգրանակերտում ապրող թուրքերի հետ, նրանք բոլորը հիանալի տիրապետում էին թուրքերենին: Մեհմեդ անունով մի թուրք, որին ես չեմ հիշում, Ցեղասպանության ընթացքում հորս ընտանիքին թաքցրել է: Այդ թուրքին հետապնդել են իր հարազատները, որպեսզի սպանեն, քանի որ նա օգնել էր «գյավուրներին»: Հետո նա ամուսնացել է իմ երեք հորաքույրներից մեծի՝ Ազնիվ Չալըմյանի հետ, չնայած նա հորաքրոջիցս 13-14 տարով մեծ է եղել: Նրանք ամուսնանում են և որոշում են թողնել Տիգրանակերտն ու հաստատվել Իրաքում: Մեհմեդի հարազատները՝ մասնավորապես եղբայրները, չեն հաշտվում այն մտքի հետ, որ իրենց եղբայրն ամուսնացել է հայուհու հետ և որոշում են հետապնդել ու սպանել նրան: Նրանք ծպտված գալիս են Իրաք, գիշերը մահափորձ

են իրականացնում, սակայն անհաջող: Մեհմեդը միայն վնասվածքներ է ստանում:

Մեհմեդն ու հորաքույրս ունենում են երկու զավակ՝ մի տղա և մի աղջիկ: Նրանք բոլորն էլ ունեցել են Թուրքիայի քաղաքացիություն: Հորաքրոջս տղան հիասքանչ տիրապետում էր հայերենին, և հորս հետ երկար տարիներ նամակագրության մեջ էր: Ազնիվ հորաքույրս մահացել է Ստամբուլում, ուր նրանց ընտանիքը տեղափոխվել էր նախքան իրանա-իրաքյան պատերազմը: Ցավոք՝ չունեմ այդ թուրք մարդու նկարը, ով փաստորեն փրկել է մեր ընտանիքը: ■

«Ստիպված իմ անուշիկ հայ մամայիս մուսուլմանական թաղում տվինք»

Պատմում է Սիլվա Խարչաֆչյանը

Ես կպատմեմ Շաֆիքա Ռամզի պատմությունը: Աս ընտանիքը Հալեպում մեր հարևանն էր, և մենք ընտանիքներով շատ մոտ էինք: Շաֆիքան ուներ երկու դուստր՝ Դիդար (1925) և Ուլքյար (1930): Դիդարը համալսարանում ֆիզիկայի դասախոս էր, շատ խելացի աղջիկ էր: Քույրը ինչ-որ հիվանդություն ուներ, այդպես էլ ողջ կյանքում չաշխատեց, բայց նա էլ խելացի էր: Տանը նստած՝ բարձր գնահատականներով ավարտեց քոլեջը:

Մեր ընտանիքը 1974-ին մեկնեց Կանադա՝ վերաբնակության: Ամուսնացա և 1978-ին կրկին եկա Հալեպ: Ամուսնուս հետ գնացինք Շաֆիքայենց տուն: Ներկայացրի՝ սա զևորզն է՝ իմ ամուսինը: Եվ Շաֆիքան մաքուր հայերենով ասաց. «Գևորզ, գիտե՞ս, ես ա՛լ հայ եմ», այսպես ես առաջին անգամ լսեցի նրա հայերենը: Այդքան տարի մենք հարաբերվում էինք, երբեք իրմե հայերեն չէի լսած, չգիտեի, որ անոր իսկական անունը Արուսյակ է:

1999-ին նորեն Հալեպ այցելեցի, իմացա, որ Արուսյակը մահացել է: Դիդարը հոնգուր-հոնգուր լաց էր լինում, իրեն կոտորում: Ջգացի, որ մի բան է նրան տանջում:

- Դիդա՛ր, ի՞նչ է եղել:

- Ախր դուն չես հասկնար, մենք ստիպվեցանք մամայիս տալու մուսուլմանական թաղում: Դուք ախր պետք է էստեղ լինեիք, ու մենք մամայիս հայկական քրիստոնեական թաղում կտայինք: Թե չէ՝ մենք ձեզանից բացի ուրիշ հայի չենք ճանաչում, իմ բոլոր շրջապատը մուսուլման է: Ստիպված իմ խեղճ անուշիկ հայ մամայիս մուսուլմանական թաղում ըրինք:

Դիդարը քիչ անց ասաց.

- Բայց գիտե՞ս, իմ թուրք հայրը և իմ թուրք մեծ մայրը շատ լավ մարդիկ էին և շատ լավ նայեր են իմ մամային:

Այդ ժամանակ ասացի նրան.

- Խնդրում եմ, պատմե՛ ինձ: Այսքան տարի հարաբերվել ենք, սակայն դուք



Շաֆիքա Ռամզի

ինձ երբեք չեք պատմած ձեր մամայի պատմությունը:

Եվ Դիդարը պատմեց, որ մայրը ծնվել է 1911 թ. Իզմիրում: 1915 թ. օգոստոսի 6-9-ը 4000 հայեր Իզմիրեն բռնի վտարվել են, հայկական թաղամասն էլ թուրքերն այրել են:

Այդ ժամանակ մայրը եղել է 4 տարեկան: Լրիվ մեծակ է մնացել, կանգնած է եղել գետի ափին: Հայրը՝ Մասուդ Ռամզին, եղել է զորքի հրամանատար, ձիու վրա անցնելիս է եղել, տեսել է երեխային, խոսեցրել: Այդ փոքր հասակում երեխան կարողանում է պատմել, որ իր մորը և 2 տարեկան եղբորը սպանել են, և ինքը լրիվ մեծակ է մնացել: Այդ մարդը նրան վերցնում, տանում է իրենց տուն և մորն ասում.

- Մամա՛, աս երեխան հայ է, արի, ինչքան կարող եմք, գաղտնի պահենք:

Թուրք մայրը պահում է երեխային, անունն էլ փոխում, դնում Շաֆիքա, ինչը նշանակում է «կարեկցանք»: Այդ թուրք կինը գիտեր, թե ում տանը հայ կար: Նա երեխայի ձեռքը բռնած գնում էր այդ տները, հայերին ուտելիք տալիս, շոր տալիս այնքան ժամանակ, մինչև նրանք կկարողանային հեռանալ: Իսկ այս աղջիկն այդպես էլ սրանց տանն է մնում, նրան պահում-մեծացնում են: Այդ թուրք զինվորականն ամուսնացած է լինում, երեխաներ է ունենում: Շաֆիքան արդեն 14-15 տարեկան է լինում, այդ մարդն ասում է մորը. «Ի՞նչ



Դիդար

Ենք անելու աս աղջկան: Ուրիշ թուրքի մը տալու փոխարեն, արի ես նրա հետ ամուսնանամ: Մեր տանը մեծացած, մեր պահած աղջիկն է»:

Դե՛, մուսուլմանական սովորությամբ կարելի է երկրորդ կին ունենալ, և նրանք ամուսնանում են:

Որոշ ժամանակ անց խոսակցություններ են տարածվում Իզմիրում, թե այս մարդը՝ Մասուդը, հայու հետ կապրի, հայ աղջկա հետ է ամուսնացել: Եվ որպեսզի ընտանիքը խնդիրներ չուենա, նրանց առնում, գալիս է Հալեպ: Իսկ առաջին ընտանիքը մնում է Իզմիրում:

Հալեպում 1930 թ.-ին ծնվում է երկրորդ դուստրը: Նա լինում է 2-3 տարեկան, երբ հայրը մահանում է: Հայրը Հալեպում ուսուցիչ էր աշխատում: Երբ Մասուդը մահանում է, Արուսյակը չի իմանում՝ ինչ անե: Երեխեքին վերցնում, գնում է հայկական որբանոց: Այնտեղ երեխաներին վերցնում են, Արուսյակին էլ ընդունում աշխատանքի՝ որպես տնտես-մայրիկ: Այդտեղ իմ տատիկն էլ տնտես-մայրիկ է լինում, և այդպես նրանք ընկերանում են: Մեր ընկերությունն այդտեղից է գալիս: Արուսյակը հայերեն լրիվ հասկանում էր:

Այս աղջիկները ո՛չ իսլամ էին, ո՛չ էլ թուրք, շատ հարգում էին իրենց մամային, բայց ո՛չ եկեղեցի էին գնում, ո՛չ մզկիթ: Երբ հրավիրում էինք մեր առիթներին՝ կնունք, հարսանիք, միշտ գալիս էին: Նրանք այդպես էլ չամուսնացան: Երևի հոգեբանական խնդիրներ կային... ■



Սուսաննա Մանուկյան

«Պապս գիշերները հաճախ արթնանում ու լացում էր՝ հիշելով եղբոր դաժան մահը»

Պատմում է Սուսաննա Մանուկյանը

Ցեղասպանության տարիներին պապս՝ Արմենակ Մկրտչյանը, ընտանիքի հետ ապրում էր Շերվանշեխ գյուղում: Նա կրթված մարդ էր, տիրապետում էր երեք օտար լեզվի՝ անգլերենի, թուրքերենի, քրդերենի: Աշխատում էր գյուղի դպրոցում, որտեղ հայ երեխաներին մայրենի լեզու և գրականություն էր դասավանդում:

1915 թվականի ջարդերի ժամանակ թուրքերը ներխուժում են գյուղ և, բաժանելով տղամարդկանց, կանանց և երեխաներին, աքսորում են տարբեր ուղղություններով: Պապս, շատ լավ գիտակցելով, որ աքսորի ժամանակ թուրքերը հայ տղամարդկանց մահվան դուռն են տանելու, որոշում է, ինչպես ինքն էր ասում, «ոչխարի պես սպանդանոց գնալու փոխարեն» վերցնել

իր՝ այդ ժամանակ նույն գյուղում գտնվող տիֆոլ հիվանդ եղբորը՝ Կնյազ Մկրտչյանին, և փախչել հարևան գյուղ Սիմոն՝ ապաստան գտնելու իրենց թուրք բարեկամներից ոմն Օսման աղայի տանը:

Նրանց մեծ դժվարություններով հաջողվում է հասնել և ապաստանել իրենց թուրք բարեկամի տանը: Օսման աղայի և նրա ընտանիքի հոգատար վերաբերմունքի շնորհիվ պապիս եղբայրը շուտով ապաքինվում է: Պապիկս պատնում էր, որ թուրքերը շատ հաճախ էին գալիս գյուղ և հետախուզում այնտեղի թուրքերի տները, քանի որ գիտեին, որ թուրք գյուղացիները, լավ հարաբերությունների մեջ լինելով իրենց հայ ծանոթների հետ, հաճախ էին փորձ անում թաքցնել հայերին իրենց տանը՝ ջանալով նրանց փրկել հայերի դեմ կազմակերպված Ցեղասպանությունից:

Մի օր էլ, երբ թուրքերը կրկին գալիս են հետախուզելու Օսման աղայի բնակարանը, պապիկս իր եղբոր հետ թաքնվում է գոմում: Երբ թուրքերը այնտեղից գտնում են թաքնվածներին, Օսման աղան կանգնում է գոմի դռան առջև և պարզելով ձեռքերը՝ թույլ չի տալիս, որ պապիկիս ու եղբորը տանեն: Այն բանից հետո, երբ թուրքերին հաջողվում է տանել պապիկիս եղբորը՝ Կնյազին, Օսման աղան ընկնում է թուրքերի խմբի հետևից, ովքեր մոտ տասներկու հայերի, քշում էին դեպի սպանդանոց, և պաղատում ազատել Կնյազին: Նա անգամ դիմում է թուրք պաշտոնյաների հետ հարցեր կարգավորելիս հաճախ աշխատող միջոցի և նրանց կաշառք է առաջարկում: Սակայն թուրքերն անդդվելի են մնում՝ սպառնալով համառելու դեպքում նույն բախտին արժանացնել նաև Օսման աղային:

Արդյունքում պապիկս ականատես է լինում, թե ինչպես են իր եղբորը և տասնմեկ հայ տղամարդկանց զնդակահարում խնուս գետի վրա: Հիշում են, որ պապիկս հաճախ գիշերներն արթնանում և լաց էր լինում: Երբ հարցնում էինք նրան՝ ինչն է իր վշտի պատճառը, նա պատասխանում էր, որ իր եղբոր դաժան մահն է հիշել:

Ցեղասպանության տարիներին պապս, բացի իր եղբորից, կորցնում է նաև ծնողներին, ովքեր աքսորի ժամանակ հիվանդանում են տիֆով և մահանում, ինչպես նաև իր ութ ամսական աղջկան, ով նույնպես, չդիմանալով աքսորի տանջանքներին, մահանում է: Բարեբախտաբար, Օսման Աղայի ընտանիքը օգնում է պապիս փախչել Հայաստան: Պապս գտնում է իր կնոջը՝ տատիս՝ Սիրանուշ Մկրտչյանին: Նրանք շարունակում են միասին ապրել: Պապս, ունենալով յոթ զավակ, կատարում է իր մոր պատգամը. «Տղա՛ս, յոթ որդով սեղան կնստե՛ս»: ■



Լուսյա Հովհաննիսյանի ընտանիքը



Լուսյա Հովհաննիսյանն ու Սոնա Չալգուշյանը

«Մամա՛, մամա՛, ելի՛ր, պիտի՛ աշխատենք, չէ՞»: մայրս չէր հավատում, որ տատիկս էլ երբեք չի արթնանա

Պատմում է Սոնա Չալգուշյանը

Տատիկս՝ Լուսյա Հովհաննիսյանը, ամուսնու՝ Գևորգ Հովհաննիսյանի՝ պատերազմ մեկնելուց հետո ընդամենը երկու տարեկան մայրիկիս՝ Հայկանուշի և այդ ժամանակ դեռ չծնված քեռուս՝ Նապոլեոնի հետ շարունակում է ապրել Ադանայում՝ իր հոր տանը:

Մեծ պապիկս ունեցվածքի տեր է եղել և վայելել է իր թուրք ռամիկների հարգանքը: Մայրս հաճախ նշում է, որ եթե մեծ պապս ականջալուր լիներ իր թուրք ռամիկների զգուշացումներին այն մասին, որ հայերի դեմ դավ է ծրագրվում թուրք կառավարության կողմից, միգուցե ամեն ինչ ավելի լավ ավարտվեր:

Երբ Ադանայում թուրքերը ծրագրում են հայերի ջարդերը, նրանք հավաքում են քաղաքի բոլոր հայ տղաներին՝ անկախ տարիքից, բոլոր նրանց, ովքեր կարող էին զենք կրել, և մեկուսացնում մի ձիանոցում: Մայրս հիշում է, թե

ինչպես մի օր իր պապիկն իրեն գրկեց և ասաց, թե իրենց թույլ են տվել այցելել ձիանոցում գտնվող իր քեռիներին: Այն բանից հետո, երբ քաղցրավենիք են վերցնում ու այցելում նրանց, մայրս այլևս երբեք չի տեսնում իր քեռիներին: Մյուս օրն առավոտյան թուրքերը ձիանոցը հրդեհում են:

Մի օր տատիկս որոշում է հավաքել հայ կանանց մի խումբ և գնալ մասնակցելու թուրքերի կողմից իրականացվող երկաթգծի կառուցման աշխատանքներին՝ գումար վաստակելու նպատակով: Կանայք, այն բանից հետո, երբ կառավարությունն ազատվել էր հայ տղամարդկանց մեծ մասից, այլ ելք չունենալով, տաժանակիր աշխատանքների էին անցնում թուրքերի մոտ, ինչպիսին է, օրինակ, քար կտրելը:

Երբ տատիկս ստիպված է լինում աշխատանքի բերումով ավելի հեռանալ Ադանայում գտնվող իրենց տնից, որոշում է երեխաներին ևս վերցնել իր հետ: Սակայն մի օր, մտածելով, որ ամուսինը կարող է վերադառնալ պատերազմից և փնտրել իրենց՝ որոշում է հետ դառնալ: Նրա աշխատանքային խումբը, որը միայն կանանցից և երեխաներից էր կազմված, վստահելով տատիկս և չցանկանալով նրանից բաժանվել, նույնպես որոշում է հետ վերադառնալ: Ի դեպ, աշխատանքային այդ խմբում կային տղա երեխաներ, ում մազերը կանայք չէին կտրում՝ վախենալով, որ թուրքերը նրանց էլ կսպանեն:

Չետոդարձի ճանապարհին նրանց վրա հարձակվում է թուրքական մի խառնամբոխ և սպանում բոլորին: Մայրս հիշում է, թե ինչպես թուրքերից մեկը իր գենքը դրեց եղբոր սրտին և փորձեց կրակել: Բարեբախտաբար, գենքը չի կրակում, և երեխային հաջողվում է փախչել: Մայրս նույնպես, ով այդ ժամանակ արդեն վեց տարեկան էր, կարողանում է հրաշքով փրկվել՝ անշարժ պառկելով իր մահացած մոր կողքին: Երբ թուրքերը հեռանում են, նա ձայն է տալիս մորը. «Մամա՛, մամա՛, ելի՛ր այլևս, պիտի՛ աշխատենք, չէ՞»: Մայրս չէր հավատում, որ Լուսյա տատիկս էլ երբեք չի արթնանա:

Բարեբախտաբար, այդ ժամանակ հայ կամավորականների մի ջոկատ, որի մեջ էր նաև մայրիկիս հորեղբոր տղան՝ Դավիթ Թուջարյանը, նույն տեղով անցնելիս է լինում: Նրանք թաղում են բոլոր մահացածներին, իսկ ողջ մնացած երեխաներին վերցնում իրենց հետ:

Դավիթ քեռին, շատ լավ հասկանալով, որ երեխաներին իր մոտ պահելը անվտանգ չէ, նրանց վստահում է իր թուրք ընկերոջը, ով երդվում է արյան գնով երեխաներին փրկել ռճրագործներից ու հանձնում է երեխաներին որբանոց: Մայրս պատմում է, որ Դավիթ քեռու թուրք ընկերն իրենց շատ լավ էր վերաբերվում. ինքը հացը չէր ուտում, տալիս էր նրանց: Նրան հաջողվում է երեխաներին ապահով անցկացնել սահմանը և հանձնել ֆրանսիացիներին, ովքեր երեխաներին տանում են որբանոց:

Այսպիսով՝ մորս և քեռուս հաջողվում է հրաշքով փրկվել Ցեղասպանությունից... ■



Մարգարիտա Սկրտչյան

«Տատիկիս հոր ընտանիքին թուրքերն են օգնել հասնել Արևելյան Հայաստանի սահմանին»

Պատմում է Մարգարիտա Սկրտչյանը

Ես՝ Սկրտչյան Մարգարիտաս, այս պատմությունը լսել եմ տատիկիցս: Ցեղասպանության վերաբերյալ նրա հիշողությունները հիմնված են իր մոր՝ Գյուլիզարի, և հայրական տատիկի՝ Աղավնու պատմությունների վրա:

Տատիկիս մայրը ծնվել է 1908 թվականին Վանի Արտամետ գյուղում: Նրանց ընտանիքը եղել է բազմանդամ և բավականին հարուստ:

Իր ողջ կյանքի ընթացքում նրան հետապնդել է մի միտք. «Պետք է վերադառնալ հայրենի գյուղ և վերադարձնել այն ամենը, ինչ մեզ էր պատկանում»:

Մեր մեծ տատիկը՝ Գյուլիզարը, Ցեղասպանությունը վերապրած այն փոքրաթիվ մարդկանցից էր, ով հաճախ էր իր ցավը մեղմելու համար պատմում հայրենի գյուղի և այն ամենի մասին, ինչ թողել էր այնտեղ: Պատմում էր նաև այն բոլոր տանջանքների մասին, որոնց ենթարկել էին իր հարազատներին, բարեկամներին ...

Տատիկիս տատն էլ՝ Աղավնին, առանձնահատուկ ցավով է միշտ հիշել, թե ինչպես ջարդի տարիներին, պատճառաբանելով, թե գյուղի հայերին փրկելու համար ժողով են հավաքում, մի տեղ են հավաքել 137 հայերի և ողջ-ողջ այրել... Ոչ-ոքի չի հաջողվել փրկվել:

Դրանից հետո սկսվել է հայերի տարերային գաղթը, որի ժամանակ հայկական ընտանիքները մասնատվել են, ընտանիքի շատ անդամներ՝ անհետ կորել:

Գյուլիզարը ևս կորցրել է ընտանիքը, սակայն բարեբախտաբար կարողացել է անցնել Արևելյան Հայաստան: Այստեղ նա հայտնվում է Էջմիածնի ամերիկյան մանկատանը և սկսում հարցուփորձ անել հարազատներից: Նրան հաջողվում է պարզել, որ Աֆոն անունով իր եղբայրը ևս այդ մանկատանն է եղել, սակայն երբ փորձում է գտնել նրան, պարզվում է, որ ամերիկացիները երեխաներին տեղափոխել են արտերկիր: Այլևս ոչ մի լուր իր եղբոր մասին նա չի ստանում:

Մանկատան աշխատակիցներից մեկը եղել է Թաթուլ Ալթունյանի քույրը՝ Շուշանիկը, ով համակրանքով է վերաբերվել Գյուլիզարին: Մի քանի տարի անց հենց նա է տատիկիս հոր՝ մեծ պապիս ընտանիքին խորհուրդ տվել որպես հարսնացու ընտրել հենց Գյուլիզարին:

Տատիկիս հոր ընտանիքը ևս գաղթած է եղել նույն գյուղից՝ Վանի Արտամեստից:

Տատիկս պատմում էր, որ ի տարբերություն Գյուլիզարի՝ նրանք խուսափում էին հիշել Ցեղասպանության արհավիրքները: Երբեմն, սակայն, խոսելով ջարդի տարիներից, պատմել են դեպքեր, թե ինչպես են որոշ թուրքեր և քրդեր օգնել հայերին: Նրանց էլ թուրքերն են օգնել հասնել Արևելյան Հայաստան: Աղավնու ամուսնուն թուրքերն օգնել են մինչև սահման հասցնել ընտանիքին և վերմակների մեջ թաքցրած իրենց ոսկին: Չնայած տատիկիս հոր ընտանիքը կարողացել է բարեհաջող հասնել Արևելյան Հայաստան, տատիկիս պապը՝ Աղավնու ամուսինը, հայրենի տունը կորցնելու վշտից շուտով սրտի կաթված է ստացել և մահացել:

Աղավնի տատիկը պատմել է նաև մի դեպքի մասին, երբ ջարդից փրկելու նպատակով հարևան թուրքերից մեկն իր տանը թաքցրել է մի հայ աղջկա, նրան թուրքի շորեր են հագցրել և պահել այնքան ժամանակ, մինչև որ հարմար է եղել սահմանն անցկացնել և Արևելյան Հայաստան ուղարկել: Աղավնի տատիկը միշտ պատմել է, թե ինչպես են ստիպված եղել թողնել հայրենի գյուղը: Նրա հիշողություններում տպավորվել էին Արտամեստի խնձորի այգիները, որոնցով գյուղը հայտնի էր, այդ խնձորների յուրահատուկ բույրը:

Աղավնի տատիկն եռթամբ շատ պարզ կին էր. ապրել է 127 տարի: Կյանքի ողջ ընթացքում նա ևս երազում էր վերադառնալ հայրենի գյուղ: Մի անգամ հարազատներից մեկին անգամ ասել է. «Որքա՞ն կարմիր փող տամ, որ ինձ տանեն իմ գյուղ, իմ չրերը հետ բերեն»:



Դավիթ Ավետիսյան

«Մեկ օրում մեծ պապիկիս ընտանիքը կորցնում է ամեն ինչ...»

Պատմում է Դավիթ Ավետիսյանը

Այս պատմությունն ինձ պատմել է տատիկս՝ Թերեզա Նալբանդյանը, իր պապիկի մասին: Երբ նա պատմում էր, լսում էի ուշադիր ու տխրում, իսկ հիմա, երբ ես եմ պատմում, մարմնովս դող է անցնում. կարծես՝ ինքս ներկա եմ եղել ու սեփական աչքերով Ցեղասպանություն ասված արհավիրքը տեսել:

Տատիկիս պապը՝ Աբաջյան Մարտիրոսը, մտավորականի ընտանիքից էր: Նա ծնվել և մեծացել էր Կարսում: Մարտիրոսն ամուսնացած էր և ուներ 6 երեխա: Կարսում մեծ պապիկս Մշակ թերթի խմբագիրն էր: Նա շատ կենսուրախ և բարի մարդ էր: Նրան բոլորն էին սիրում:

1915 թվականն էր... Մեծ պապիս հարևանությամբ ապրում էր Գյուլիզար անունով մի թուրք կին, ով թուրք փաշայի քույրն էր: Մի օր, պատահաբար լսելով եղբոր խոսակցությունը, թե գիշերը հայերին կոտորելու են, Գյուլիզարը շտապում է զգուշացնել այդ մասին Աբաջյանների ընտանիքին, ում նկատմամբ մեծ հարգանք էր տածում: Մեծ պապս էլ իր հերթին զգուշացնում է՝ ում կարողանում է, և, զգալով, որ չի կարողանա պաշտպանել իր ընտանիքին ու գերդաստանին թուրքերից, առաջարկում է հարազատներին փախուստի դիմել: Նրանք շատ հարուստ էին ու շատ ոսկի ունեին, կճուճներով տան պատերի մեջ էին պահում, սակայն փրկվելու ու ապրելու ցանկությունն ավելի



Աբաջյան Մարտիրոսն ու նրա կինը

մեծ էր: Ժամանակ չկորցնելով՝ Մարտիրոս պապը թողնում է ամենը, վերցնում է ընտանիքին ու հարազատներին և ճանապարհ է ընկնում:

Փախուստի ճանապարհին նրանց առջև սարսափելի տեսարան է բացվում: Փողոցներում մեծերի ու մանուկների դիակներ էին: Նրանք սարսափահար գնում էին առաջ՝ չիմանալով՝ ինչ է իրենց սպասվում առջևում: Այդ ժամանակ տատիկիս մայրն ու հայրն արդեն ամուսնացած էին, և ծնված էին տատիկիս ավագ քույր ու եղբայրը: Փախուստի ժամանակ տատիկիս մայրը երեխաներին պարանով կապում է իրար՝ մեկին մեջքից, մյուսին՝ կրծքից, որպեսզի չկորցնեն իրար: Սակայն ճանապարհին՝ այդ թոհուրոհի մեջ, երեխաները երկուսն էլ կորչում են, ու այդպես էլ չեն գտնում նրանց: Միայն տարիներ հետո է հաջողվում պարզել, որ ինչ-որ ամերիկացիներ վերցրել են նրանց, հետո տեղափոխել Ամերիկա:

Ի վերջո, քանի ժամ ճանապարհ անցնելուց հետո նրանք հայտնվում են թուրքերի շրջափակման մեջ: Մարտիրոս պապն ու նրա ընտանիքը չեն իմանում՝ ինչ անել: Եթե աջ գնային, գետում կխեղդվեին, ձախ գնային, կընկնեին թուրքի սրի տակ: Չիմանալով, թե ինչ անել՝ Մարտիրոս պապը խուճապահար ծնկի է գալիս և աղաչում թուրքերին, որ վերցնեն այն ամենը, ինչ ունեն, միայն



Աբաջյանի նկարի հետևի հատվածը թուրքական կնիքներով

թե ձեռք չտան երեխաներին: Թուրք զինվորների պատասխանը հետևյալն է լինում. «Ո՛չ, մեռնելու եք բոլորդ»: Այն պահին, երբ թուրքը, բարձրացնելով սուրը, պատրաստվում է գլխատել Մարտիրոսին, չգիտես թե որտեղից հայտնվում է նրանց հարևանուհին՝ Գյուլիզարը, ով, թերևս գիտակցելով, որ Աբաջյանները չեն կարողանալու անվտանգ փախուստի դիմել, շտապել էր նրանց օգնության: Նա կտրում է թուրք զինվորների առջևը, հանում է գլխաշորը և նետում գետնին՝ զինվորների առջև: Թուրքերը նրան ճանաչում են: Գյուլիզարը հրամայում է զորքին, որ ձեռք չտան այդտեղ կանգնած մարդկանց և ճանապարհ տան, որ անցնեն: Թուրք զինվորները սրերն իջեցնում են, և Մարտիրոս պապն ու իր հարազատներն անցնում են: Ահա այդ թուրք կնոջ շնորհիվ է, որ Աբաջյան Մարտիրոսի գերդաստանը փրկվում է թուրքի սրից: Նրանք չորս օր ու չորս գիշեր գնալով՝ հասնում են Վրաստան: Որոշ ժամանակ անց տեղափոխվում են Հայաստան և բնակություն հաստատում Գյումրիում: Աբաջյանների գերդաստանից միայն Մարտիրոս պապիս հորն են թուրքերը սպանում, երբ նա դաշտում է լինում:

Սա էր իմ պատմությունը, որը պատմելիս կարծես զգացի այն սարսափը, որը Աբաջյանների գերդաստանն էր այդ տարիներին ապրել: Նրանք ունեին ամեն ինչ և մի օրում կորցրեցին՝ տուն, ունեցվածք, ընկերներ ու հարազատներ: Սարսափելի է, երբ անգամ մտածում ես այդ մասին... ■

«Ջարդերի ժամանակ պապիկիս երկու եղբայրներին և ծնողներին սպանում են»

Պատմում է *Լուսինե Մարդեյանը*

Պապս՝ Սուխան Խաչատուրի Մարդեյանը, ծնվել է 1902 թվականին: 1915 թվականին նա ապրել է Ղարսի Ղզնչաղչաղ գյուղում: Ջարդերի ժամանակ նրա երկու եղբայրներին և ծնողներին թուրքերը սպանում են, ավագ եղբորը՝ Աղասիին, հաջողվում է լքել գյուղը և հեռանալ Չայաստան: Այսպիսով՝ ջարդերի հետևանքով ընտանիքի ողջ մնացած անդամները բաժանվում են՝ փախչելով տարբեր վայրեր:

Պապիկս, կորցնելով կապն ընտանիքի անդամների հետ, ստիպված է լինում որպես գառնարած մնալ ոմն թուրք Բիրդան Աղի փաշայի տանը, ում ընտանիքի հետ նախկինում մտերիմ էին: Բիրդան Աղի փաշան, պապիկիս լավ գառնարած համարելով, համոզում է նրան մնալ իր մոտ՝ ասելով, որ ի տարբերություն թուրք կառավարության՝ իր ընտանիքը հայերի դեմ ոչինչ չունի, և խոստանում է նրան վճար չպատճառել: Այսպիսով՝ նրանք պապիկիս իրենց ընտանիքում են պահում՝ որպես թուրքի՝ չբացահայտելով նրա հայ լինելը:

Ի տարբերություն իրենց հոր՝ Բիրդան Աղի փաշայի որդիները, իմանալով, որ պապիկս հայ է, չեն ցանկացում, որ նա մնա և ապրի իրենց հետ: Նրանք դավեր են նյութում պապիս դեմ. գողանում են գառները, մորթում և մեղքը բարդում պապիս վրա: Պապիս վերաբերվում են որպես թշնամու: Պապս հաճախ է ակնատես եղել, թե ինչպես են վերջիններս պարծենում իրենց հոր մոտ, թե հայ են սպանել կամ ինչ-որ վճար պատճառել որևէ հայ ընտանիքի:

Բիրդան Աղի փաշայի տանը տասը տարի ապրելուց հետո մի օր պապիկս պատահաբար խոսակցության է լսում, որի ժամանակ ընտանիքը քննարկում էր իրեն գլխատելու հարցը՝ իբրև թե իրենց վստահությունը չարաշահելու և գառներին գողանալու համար: Այս խոսակցությունը լսելով՝ պապս շփոթվում է՝ չիմանալով ինչ անել: Այդ ժամանակ Բիրդան Աղու մայրը, բարեսիրտ գտնվելով, խորհուրդ է տալիս փախչել՝ ցույց տալով Չայաստան տանող ճանապարհը:



Լուսինե Մարդեյան

Այլ ելք չունենալով՝ պապիկս որոշում է փախչել: Ճանապարհին պապիկս հանդիպում է խարույկի շուրջ նստած մի խումբ թուրք երիտասարդների, ովքեր թեև գլխի են ընկնում, որ պապս հայ է, նրան չեն վճարում, հակառակը՝ օգնում են և ուղեկցում դեպի Չայաստան:

Ցավոք, պապիկիս ճանապարհին այնքան էլ անխոչընդոտ չի լինում: Ճանապարհի կեսին նա նկատում է, որ իր հետևից ձիավորներ են գալիս: Բարեբախտաբար, նրան հաջողվում է թաքնվել քարանձավում և մի քանի օր մնալ այնտեղ: Բիրդան Աղի փաշայի մայրն այնքան մեծահոգի էր գտնվել, որ ոչ միայն օգնել էր պապիկիս փախչել, այլև իմանալով, որ մի քանի օրվա ճանապարհ ունի, նրա հետ սնունդ էր դրել: Դրա շնորհիվ պապս կարողանում է մի քանի օր թաքնվել քարանձավում: Թուրքերը, չգտնելով պապիկիս, կարծում են՝ նրան հաջողվել է անցնել սահմանն ու Չայաստան փախչել: Պապս գալիս է Չայաստան, գտնում է իր մեծ եղբորը, ով հաստատվել էր Շիրակի մարզի Բաջուլի (այժմյան Չայկավան) գյուղում, և այսպես փրկվում է: ■

«Պապիկիս երկու եղբայրներին զորակոչում են թուրքական բանակ, նրանցից այլևս ոչ մի լուր չեն ստանում»

Պատմում է Ավետիս Խաչատրյանը

Ես Ավետիս Սարիբեկի Խաչատրյանն եմ: Ինձ կոչել են պապիկիս պատվին, ում անունը եղել է Ավե (ամենայն հավանականությամբ, Ավետիսի կրճատված տարբերակն է):

Մեր տոհմի ազգանունը եղել է Ժամհարյան, մենք սերում ենք Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից: Տատիկիս՝ Մարիամի ընտանիքը ևս Բայազետից է եղել, նրանց ազգանունը Հունանյան է:

Ավե պապս ծնվել է 1901 թվականին: Պապիս ընտանիքը հիմնականում զբաղվել է հողագործությամբ և անասնապահությամբ: Պապիս հայրը՝ Խաչատուրը, առաջին կնոջ մահից հետո ամուսնացել է երկրորդ անգամ պապիկիս մոր՝ Մախմուրի հետ: Հայրս իր ազգանունը գրել է պապի անունով՝ Խաչատրյան: Խաչատուրն ունեցել է 7 զավակ՝ Արշակը, Արտաշեսը, Սարգիսը, Արսենը, Վահանը, Ավեն և միակ դուստրը՝ Մարգարիտը: Պապս ընտանիքում եղել է կրտսերը:

Տատիկիս ընտանիքը՝ Հունանյանները, եղել են կաշեգործներ, ովքեր անգամ Արևելյան Հայաստանում շարունակել են զբաղվել իրենց արհեստով: Տատս՝ Մարիամը, ծնվել է 1909 թ.-ին: Տատիս պատմելով՝ իրենք ապրել են Բայազետ ամրոցի պարիսպների մոտ: Նա միշտ ասում էր. «Եթե հիմա էլ գնամ, կարող եմ գտնել մեր տան տեղը»:

Նրանք լավ հարաբերություններ են ունեցել տեղի թուրք պաշտոնյաների հետ: Եղել են հնազանդ քաղաքացիներ, վճարել են հարկերը: Պապս առևտուր է արել քրդերի հետ:

Բայազետում համեմատաբար հանգիստ է եղել վիճակը, սակայն աստիճանաբար սկսել են լուրեր հասնել երկրի տարբեր շրջաններում հայերի



Մարիամ Հունանյանը հարազատների հետ

ջարդերի մասին: Թուրք պաշտոնյաներից մեկը, այդ ընթացքում մոտենալով պապիս հորը, ասել է. «Ձուլում է լինելու»,- և խորհուրդ է տվել հեռանալ: Նա հայտնել է նաև, որ պապիկիս եղբորը՝ Արշակին, ով եղբայրներից ամենամեծն է եղել և ֆիզիկապես ամենաուժեղը, պատրաստվում են բանակ զորակոչել: Պապիս հայրը այդ ժամանակ արդեն ծեր է եղել: Նա ասել է, որ Արշակը՝ որպես ավագ, պահում է ընտանիքը, մյուսները փոքր են, և եթե նրան տանեն, մյուսները կկոտորվեն: Պաշտոնյան առաջարկել է Արշակին թողնել և զորակոչել մյուս երկու եղբայրներին՝ Արսենին և Վահանին, ովքեր դեռահաս են եղել: Պատմում են, որ նրանք եղել են շատ գեղեցիկ տղաներ և շատ զիլ ձայն են ունեցել: Պաշտոնյան պնդել է, որ դա միակ տարբերակն է: Երկար տարակուսանքից հետո ընտանիքը համաձայնվում է. Արսենին և Վահանին զորակոչում են բանակ, և նրանցից այլևս ոչ մի լուր չի ստացվում:

Պապիս եղբայրներից Արտաշեսը եղել է ֆիզայի և ինքնապաշտպանական տարբեր ջոկատների կազմում պայքարել է ջարդարարների դեմ: Նա ևս անհետ կորել է:

Պապիկիս հայրը՝ Խաչատուրը, մահանում է Բայազետ քաղաքում իր բնական մահով:

Այս դեպքերից հետո, հաշվի առնելով թուրք պաշտոնյայի զգուշացումը, հայերին մնում էր միայն մեկ տարբերակ՝ տեղափոխվել Արևելյան Հայաստան:

Ժամհարյաններից սահմանն անցել են պապիկիս մայրը, Ավե պապս, նրա եղբայրներ Արշակը, Սարգիսը, քույրը՝ Մարգարիտան, ինչպես նաև նրանց հորեղբայր Նավոն, ով կույր էր: Նրանք իրենց հետ բերել են իրենց



Խաչատրյանների ընտանիքը

շարժական գույքը, անասունները: Բերել են անգամ պղնձե կաթսաներ, որոնք մինչ օրս կան: Պապիկիս և տատիկիս ընտանիքները, անցնելով Արաքսը, ժամանակավորապես բնակվել են Հայաստանի տարբեր վայրերում: Տատիկս ասում է, որ փնտրել են այնպիսի տեղ, որի, կլիման նման կլիներ իրենց հայրենի քաղաքի կլիմային: Եղել են Ապարանում, Բջնիում, Մեղրաձորում, Նոր Բայազետում: Վերջապես հաստատվել են Ծաղկաձորում:

Այն ժամանակ ընդունված է եղել խնամախոսության գնալ միայն ծանոթների ընտանիքներ: Պապիկիս ընտանիքը լավ գիտեր Բայազետից գաղթած Հովնանյանների ընտանիքին: Ուստի պապիկիս՝ Ավեի եղբայրները, խնդրում են տատիկիս ձեռքն իրենց եղբոր համար: Նրանք ամուսնացել են 1929թ.-ին: Ունեցել են 4 զավակ՝ հայրս՝ Խաչատրյան Սարիբեկը, հորեղբայրներս՝ Խաչատրյան Վոլոդյան և ժամհարյան Աղվանը, հորաքույրս՝ Խաչատրյան Լիդան:

Ավե պապս զոհվել է Երկրորդ աշխարհամարտում: ■



Չռիփսիմե Խանգելյան

«Տատիկս շուտով իմանում է, որ հայրական տանը բոլորին սպանել են»

Պատմում է Մարթա Սինոնյանը

Տատիկս՝ Չռիփսիմե Գևորգի Խանգելյանի հայրական ընտանիքը բավականին հարուստ է եղել: Ապրել են Նախիջևանի Շարուր գյուղում: Հայրը՝ Գևորգ Խանգելյանը, եղել է 12 գյուղի գյուղապետ, մեծ թվով անտառներ ու հողատարածություններ են եղել նրա տնօրինության տակ: Ունեցել է մի շատ մտերիմ թուրք ընկեր, ով ջարդերից առաջ եկել և զգուշացրել է, որ թուրքերը պատրաստվում են հարձակվել: Նա առաջարկել է օգնել Խանգելյանի ընտանիքին փախչել Հայաստան: Սակայն Գևորգը հրաժարվել է՝ ասելով, որ նախ պիտի բոլոր հայերին օգնի գաղթել, հետո միայն իր ընտանիքը տեղափոխի: Այդ ժամանակ՝ դեռ 13 տարեկան տատս ամուսնացած է եղել նույն գյուղի մի հարուստ ընտանիքի տղայի՝ Աշոտ Մելիք-Առաքելյանի հետ: Նա ունեցել է կոշիկի մեծ գործարաններ և զբաղվել է առևտրով. ապրանքը հաճախ է տարել արտերկիր վաճառելու: Այդ օրերին էլ նա իր ծառայի հետ գործի բերումով գտնվել է ԱՄՆ-ում: Տատս արդեն ունեցել էր մեծ մորաքրոջս, ով այդ ժամանակ դեռ բարուրի երեխա է եղել:



Մարթա Սիմոնյանը՝ Հռիփսիմե խանգելոյանի գրկում

Շուտով նա իմացել է, որ իր հայրական տանը բոլորին սպանել են: Տատս պատմում էր, որ հորը դաժանաբար սպանել են՝ ջրաղացի քարի տակ դնելով գլուխը, իսկ տատիկիս երկու եղբայրներին կապել են ձիերի պոչերից, քարշ տվել, մինչև մահանան: Միևնույն ժամանակ տատիկս կորցրել է քրոջը. վերջինս երևի ջարդերի ժամանակ ինչ-որ կերպ կարողացել է փախչել, և նրանք այլևս կապ չեն ունեցել: Այս ամենը, սակայն, տատիկս իմանում է այն բանից հետո, երբ նույն թուրքը, ով մտերիմ էր հոր հետ, գալիս է տատիկիս տուն՝ զգուշացնելու, որ հենց այդ գիշեր թուրքերն իրենց տուն են հասնելու: Նա տատիկիս օգնում է գիշերով թաքուն անցնել սահմանը և գալ Հայաստան: Տատիկիս հազիվ հասցնում է իր բարուրի երեխային փաթաթել գորգի մեջ, մի փոքր արկղիկով վերցնում է ոսկեղենի մի մասը, որոշ իրեր և փախչում (այդ արկղիկը հասել է մեզ, մինչ օրս այն պահում ենք): Տատիկս ասում էր նաև, որ իրենց հարստության մի մասը՝ ոսկիները, կճուճով գցում է տան մոտակա ջրհորը՝ մտածելով, որ հետագայում գուցե հետ գան ու հանեն: Այսպես տատիկիս հաջողվում է փախչել, նա գալիս է երևան: Հրապարակի մոտ այն ժամանակ սեփական տներ են լինում, որտեղ էլ տատիկս, իր բերած ոսկիները մաս-մաս վաճառելով, վարձով ապրում է: Նա որոշակի գումարի դիմաց լվացք է անում՝ իր ու երեխայի գոյությունը պահպանելու համար:



Հռիփսիմե խանգելոյանն իր ընտանիքի հետ

Տատիկիս ամուսինը, գտնվելով ԱՄՆ-ում տեղեկություն է ստանում, որ բոլոր հայերին կոտորել են, ու երևի թե կարծելով, որ իր ընտանիքն էլ են ոչնչացրել՝ որոշում է մնալ ԱՄՆ-ում: Մի խոսքով՝ տատս կապ չի ունենում նրա հետ: Շատ տարիներ անց տատիկս, հետաքրքրվելով և հետախուզական ինչ-որ ծառայությունների դիմելով, պարզել էր, որ նա, իսկապես, իմանալով կատարվածի մասին, չի վերադարձել, մնացել է ԱՄՆ-ում և մահացել է 60-ականներին:

Տատիկիս ընտանիքից կարողացանք գտնել միայն նրա քրոջը: Ցեղասպանությունից տարիներ անց հայրս գնացել էր Թիֆլիս և իր ընկերոջ ծանոթի տանը հանդիպել տատիկիս քրոջը, ում կորած էինք համարում և ով փախչելով փաստորեն հաստատվել էր Վրաստանում:

Երևանում տատիկս ամուսնացել է նույն բակում բնակվող Աշոտ Բեկնազարյանի հետ և ունեցել զույգ աղջիկներ, որոնցից մեկն էլ իմ մայրն էր: Պապիկս՝ Աշոտ Բեկնազարյանը, էջմիածնի Գևորգյան ճեմարանի սան էր, նա շատ կրթված մարդ էր և աշխատում էր խմբագրությունում: Կինը մահացած է եղել, 2 երեխա է ունեցել, որոնց էլ հետագայում մեծացրել է տատս:

Հիշում եմ՝ հետագայում տատիկս ինչ-որ անցաթուղթ էր հանել և հաջողեց նույնիսկ գնալ իրենց գյուղը: Նա ուզում էր տեսնել՝ ինչ վիճակում է իրենց տունը, և հույս ուներ գտնել իր պահած կճուճով ոսկին: Սակայն տեսնելով, որ թե՛ ջրհորը, թե՛ շրջակա ամեն ինչ հողին է հավասարեցված՝ տատիկս սարսափած վերադարձել էր: ■



Վերոնիկա Բերբերյան

«Յիշողություններս քանդվում են թելի կծիկի պես...»

Պատմում է Նաիրա Մկրտչյանը

Վերոնիկա Գասպարի Բերբերյան (1907-1999)

Կներկայացնեմ իմ հորական տատի՝ Վերոնիկա Գասպարի Բերբերյանի պատմությունը: Նրա ընտանիքը կարողացել է սկզբում փախչել Նախիջևան, իսկ այնուհետև՝ տեղափոխվել Երևան: Փոքրուց լսել եմ նրա պատմությունները: Նա ասում էր. «Երբ դուք ինձ հարցեր եք տալիս, հիշողություններս քանդվում-բացվում են թելի կծիկի նման»:

Վերոն տատս մանրամասն պատմում էր, թե ինչպես են նրանք ապրել ներկայիս Թուրքիայում, Բողազլանում, ինչպիսին էր իրենց ընտանիքը: Վերոն տատս պատմում էր նաև, թե ինչպես են ջարդի ժամանակ հայերին կոտորել, թե ինչպես են իրենք շուրջ 40 մարդ իրենց տանը պահել, քանի

որ գավառաքաղաքի հազարապետի հրամանով իրենց ընտանիքին ժամդարմներն իրավունք չունեին ձեռք տալ:

Տառս իր և իր մյուս ազգականների, հարևանների պատմությունները բոլոր ցանկացողներին պատմում էր: Նա պատմում էր շատ մանրակրկիտ՝ անուշ արևմտահայերենով: Պատմությունը սովորաբար սկսվում էր այսպես. «Մեր ընտանիքն ապրել է Անատոլիայի Յոզղատ գավառի Բողազլան քաղաքում: Մեր թաղը Քիլիսե մահալ կոչվեր, այսինքն՝ եկեղեցու թաղ: Պապս՝ Հակոբ քահանան, Սբ Աստվածածին եկեղեցու ավագ քահանան էր: Ունեի երկու հորեղբայր՝ Հարությունը (1915թ.-ին 20 տարեկան էր) և Խաչերը (նա էլ 15 տարեկան էր):

Լավ էինք ապրում. հողագործությամբ էինք զբաղվում: Երբ հայրս թուրքական զինվոր էր, օր մը իրիցկին տատիկս երազ կտեսնե, թե իբր հայրս տունին յուրվիքին (որմնախորշ, որտեղ անկողիներն էին դարսում) մեջը լիքը գանգեր, ոսկորներ բերեր, լցրեր է: Տառս կհարցնե՝ Գասպար, ինչու՞ հոս բերիր, լցրիր: Հայրս կպատասխանե՝ օրին մեկը թանգարան պիտի շինվի, աս ամբողջը մեջը պիտի դրվի, որ աշխարհը տեսնա:

Եվ այս երազից հետո սկսվեց... Տղամարդկանց հանդից, տնից, խանութից հավաքեցին՝ իբր, պատերազմ է, բոլորը պիտի զնան բանակ: Հետո եկան բոլորի տներեն ինչքան զենք, դանակ կար հավաքին-տարին...

Մեկ էլ դարոցական հորեղբայրս շնչակտուր ներս ընկավ՝ գլուխը պատերին խփելով. «Քսան դուրուշի փամփուշտը խնայեցին, կացինով էին կոտորում բոլորին»: Հորեղբորս թաքցրինք: 50 օր տղամարդ էին փնտրում, որ մորթեն: Ատկե վերջը մարագի մեջեն դեպի հայաթը փորելով տեղ բացինք, որ հորեղբայրս թաքնվում էր էնտեղ օրվա մեջ՝ Գիշերը բացում էինք, որ օդ առնի:

Դրանից հետո՝ 1916 թ. մարտին դայմադամը հրամայեց. «Մեկ կիլոգրամ հայու միս ողջ չպիտի մնա, բոլոր հայերին պիտի կոտորեք»:

...Մեր տան պատից մի մեծ քար էին հանած, հորեղբայրս՝ Հարություն Բերբերյանը, սողում, մտնում էր մեջը ու թաքնվում էր՝ ով գալիս էր ժամդարմներեն՝ չէր գտնում:


Իմ իրիցկին տատս, որը պահած էր ադ Հարություն հորեղբորս, օր մը կերթա հազարապետ Սելամի բեկին քովը, որն ամուսնացած էր մեզի ծանոթ հայ աղջկա մը հետ, կըսե հազարապետին. «Սելամի՛ բեկ, Հարությունը տունն է, ի՞նչ պիտի ըլլա»: Հազարապետ Սելամի բեկը կոճակը համազգեստին վրայեն կպոկե, կըսե. «Աս կոճակը ժամդարմին հետ որ դրկեմ, Հարությունը

թող ելլե ու գա»։ Առավոտուն ժանդարմ մը եկավ, թախ-թախ դուռը զարկավ, ըսավ. «Հարությունը թող գա դայմադամին քովը իր սափրիչի գործիքներով»։ Հարություն հորեղբայրս իր սափրիչի գործիքները հավաքեց, ժանդարմներուն հետ դուրս գնաց։ Ադ պահուն ալ թուրք սափրիչ մը դայմադամին կթրաշեր։ Ադ ալ առաջին անգամ ածելի կզարնե, դայմադամին երեսը կարյունե։ Սելամի բեկը դայմադամին կըսե. «Թող Հարությունը թրաշե»։ Հարություն հորեղբայրս կհանե իր գործիքները, առոք-փառոք դայմադամին կթրաշե, կվերջացնե։ Դուրս է գալիս, որ տուն գա, կտեսնա գերդաստաններով բոլորին կապկպած արքայք եւ տանում։ Դայմադամը կհրամայե. «Ժանդարմ մը թող Հարությունին տուն տանե»։ Հարությունը եկավ տուն։ Ան քսան տարեկան էր, բայց արդեն ութսունի չափ էր երևում։ Հարություն հորեղբայրս տեսավ, որ ճար չկա. «Ալ թուրքին չափտի հավատամ,- ըսավ, խաշխաշի յուղն ու կապույտ պղինձարջասպի քարը խառնեց իրար, ըսավ, - ես իմ կնոջս կխմեմ, վերջը ես ալ կխմեմ, դուք ինչ կուզեք՝ եղե՛ք»։ Հարություն հորեղբայրս թույնը կնոջը խմցուց՝ ճիշտ երեք ռոպե վերջը ընտանիքին ներում եկավ։ Քսանհինգ հոգի հորեղբորս սայիյեն ազատվան։ Հորեղբայրս իսկույն տասնհինգ ձվի դեղնուցը իրար խառնեց, կնոջը խմցուց։ Կինը փսխեց, ազատվեցավ, ողջ մնաց։

Մեր գերդաստանը շատ մեծ էր։ Մեր գերդաստանեն շատերը թուրքական կառավարությանն էին ծառայում, պաշտոնյաներ էին։ Օրինակ՝ հայրս թարգմանիչ էր, Կարապետ աղային մեծ եղբայրը դատապաշտպան էր։

...1918-ին արդեն ջարդը դադարած էր։ Զինադադար էր։ Թուրքեր եկած լցված էին հայերուն տները։ Օր մը թուրք կնիկներ մը եկան մեր դուռը զարկին, ջուր խնդրեցին։ Մամաս ըսավ ինձի. «Վերոնիկա՛, ջու՛ր բեր»։ Ադ չադրայով թուրք կնիկներն մեկը մոտեցավ մորս, գաղտնի ըսավ. «Մայրի՛կ, դուք հայ եք, ի սեր հայության, ինձի ասոնց ձեռքեն ազատեք։ Իմ անունը Աննիկ է։ Ինձի փախցուցած են»։ Մայրս ըսավ. «Այսօր դուն գնա, ես փեսայիս հետ խոսիմ, տեսնանք՝ ի՞նչ կրնանք ընել»։ Փեսան իրիկունը տուն եկավ։ Մամաս պատմեց։ Փեսան ըսավ. «Երեխա մը դրկենք, Աննիկին թող բեր»։ Տասը տարեկան Հակոբիկին դրկեցինք։ Ան գնաց Աննիկին բերավ։ Թուրքերը կտեսնան Աննիկը չկա։ Եկան լցվան մեր տունը, ըսին. «Տվե՛ք մեր աղջիկը»։ Իրիցկին տատիկս օգնություն պրոջաց։ Ժանդարմ մը կանցներ դուրսեն, եկավ։ Տատիկս ըսավ. «Աս թուրքերը էկած են, աղջիկ կուզեն։ Մենք խաբար չենք»։ Ժանդարմն ադ թուրք կնիկներին դուրս հանեց մեր տունեն, Աննիկը մնաց մեր տունը։ Ազատվեցավ։ Վերջը մենք Աննիկին որբանոց դրինք։ Էնտեղեն Բեյրութ կտանին որբերին։ Մի խոսքով՝ Աննիկը հայ մնաց։

Կհիշեմ՝ ջարդին երրորդ օրն էր, թուրքի չադրայով մայրս չորս տարեկան քրոջս հետ գնում է իր մոր տունը։ Մայր ու աղջիկ խորհուրդ անելու ժամանակ սայլերը բերել են, դրսում՝ գոռում-գոչյուն։ Բոլորին արքայք եւ տանում։ Մայրս



Ձեռագիր գրառում Հակոբ քահանայի նկարի ետևում



Հակոբ քահանա

կըսե. «Ես հոս չե՛մ ապրիր»։ Ժանդարմը կըսե. «Էդ շուկայի կողմից գնա ձեր տունը»։ Մայրիկս կշշկվե, չորս տարեկան քրոջս կկորսցնե։ Մայրիկս մի կերպ եկավ տուն։ Մեկ էլ տեսանք՝ փոքր թուրքիկս մինակը եկել, գտել էր մեր տունը։ Ուրախացանք, իրար գտանք։ Բայց մայրիկս պատմեց, որ տատիկին տարին սայլերով։ Ես վազեցի դուրս իյնալ-էլլալով գացի տատիս տունը հասա, տեսա՝ դռները բաց, մեջը դատարկ։ Մարիամ տատիկս արքայք մեջ մեն մենակ կմնա։ Դու մի ըսեր՝ ժանդարմներ կուզան կմորթեն։ Մի Սարդալայի Աննա մը կար։ Ան մտել էր դիակներին տակը, շունչը բռնած մնացել էր։ Հետո, որ ժանդարմները գնում են, աս Աննան կամաց-կամաց փորսող կուզա, մեր գեղին կմոտենա, ամմա՛ ուռած փքված, տկլոր։ Մի հատ թաշկինակ անգամ չէին թողած, որ ամոթը ծածկեր։ Թաղին թուրք լակոտները կտեսնան ասոր, կըսեն. «Ամա՛ն, դե է գալիս», - վախից փախչում են։ Աննան կուզա իր տունը։ Կտեսնա՝ դուռը բաց։ Իր տասնչորս տարեկան մի հատիկ տղան տված կըլլա դրացի թուրքին։ Կերթա ադ թուրքին։ Թուրքը տունը մի ոչխար կմորթե, մաշկը կհանե, Աննային մեջը կփաթթե, Աննային վերքերը կբուժե։

...1924-ին զինադադարեն ետքը, երբ Քեմալ Աթաթուրքը եկավ կառավարության գլուխը, հայերը բողոքեցին, ըսին. «Թուրքերը մեզի շատ վնասներ տվին, մեր հարազատներուն մորթեցին», հետո դատավարություն եղավ - շատ թուրք մեծավորներ պատժվեցան: Մի հայ աղջիկ պահված էր թուրքի տանը: Ադ թուրք մարդ ու կինը էդ հայ աղջկան պահում էին իրենց տղի հետ ամուսնացնելու համար, բայց հայ աղջիկը սիրահարված էր Խաչեր հորեղբորս վրա: Օրին մեկը ան լուր դրկեց, որ ես ուզում եմ Խաչերի հետ ամուսնանալ: Հայերը հեռագիր քաշեցին, իբր թե էդ աղջկա հորեղբայրը հեռու երկիրեն կանչում է իրեն: Էդ աղջիկը կփախչի թուրքի տունեն, եկավ մեր տունը: Թուրքը, որ իր տղայի համար պահած էր էդ աղջիկը, կըսե. «Ես սրա քիթն էի մաքրում, ո՞նց դավաճանեց մեզի»: Դրանց տղան սպայական դպրոցն ավարտեց, եկավ մեր տունը: Խնդրեց, աղաչեց: Հորեղբայրս մտածեց, որ մի փորձանք կելլա, նորեն կփախցնեն աղջիկին, Եփրեն կառապանին ըսավ. «Գիշերը ձիերդ լավ կկերակրես, մեր հարսին կտանիս Կեսարիա»: Մենք անոր գլխուն չադրա գցեցինք, դրկեցինք Կեսարիա: Բայց էդ սպա թուրքը կառավարությանը լուր կուտա, կըսե՝ գտեք իմ հայ հարսնացուին: Բայց մի թուրք հարյուրապետի կին կար, որը հայ էր, գնում է, խնդրում է, որ էդ հայ աղջիկը արդեն հայ մարդու է առած, հիմա ալ հղի է՝ պիտի ազատվի: Եսպես էդ թուրքերը թշնամացան մեզի հետ: Էդ թուրքը էկավ ըսավ. «Երկու ժամ ձեզի ժամանակ, դուրս պիտի գաք ձեր տնից»: Մենք ստիպված դուրս եկանք մեր տնից: Գնացինք մի թուրքի տուն, որը մեզի հետ լավ էր: Էդ թուրքը մեզի իր տունը առավ, հաց տվեց: 1924-ին մենք փոխադրվանք Պոլիս: Մեկ տարի մնացինք Պոլիսի գաղթակայանը: Ռուսաստանեն նավ եկավ, մեզի յոթ հոգիով Բաթումի բերավ: Մեզի հետ ոչ մի տղամարդ չկար: Բաթում եկանք, աղքատություն էր տիրում: Հորեղբայրս եկել էր մեզ դիմավորելու: Գնացինք նստանք, մազութով էր գնացքը աշխատում: Մեզ իջեցրին Դավալլու կայարանը, վրանների տակ, հաց-մաց բաժանեցին: Հորեղբայրս մեզ տարավ Նախիջևան՝ հայրիկիս մոտ: Հազիվ մեկուկես տարի միասին ապրեցանք, հայրիկս մահացավ: Հետո եկանք Երևան»: ■



Սարգիս Թորոսյան

«Սպասվող ջարդի մասին հորս ընտանիքին գգուշացնում է նրանց թուրք ընկերը»

Պատմում է Սարգիս Թորոսյանը

Երկու ծնողներս էլ ցեղասպանությունից փրկվածներ էին: Հայրիկս 8 կամ 9 տարեկան է եղել, երբ խուսափելով ջարդերից՝ ընտանիքի հետ միասին կարողացել է փախչել Հունաստան, իսկ մայրս այդ ժամանակ ընդամենը մեկ տարեկան է եղել:

Հայրիկս ընտանիքի հետ միասին նախ տեղափոխվել է Հունաստան, ապա՝ 1927 թվականին, Հայաստան: Այն ժամանակ հայրս 14 տարեկան է եղել: Նրա ազգանունը սկզբնապես «Սուլյան» է եղել: Անձնագիր ստանալու ժամանակ հայրս արդեն խնդրել է փոխել ազգանունը և պապիկիս պապու անունն է վերցրել, դարձրել իրեն ազգանուն՝ Թորոսյան: Սուլյան ազգանունը չէր սիրում, այն թուրքերեն ջուր բառից էր սերում:

Մինչև ջարդերը ծնողներիս ընտանիքներն ապրել են Կոստանդնուպոլսի մերձակայքում գտնվող Բիլեջիք քաղաքում: Մորս՝ Մութաֆյանների ընտա-

Որքան էլ է այդ նույն քաղաքում ապրել՝ նույն փողոցի վրա: Երկու պապերս ընկերներ են եղել: Ջարդից փրկվելու ժամանակ նրանք հայտնվել են նույն նավի մեջ: 1915 թվականի ջարդից ծնողներիս ընտանիքները կարողացել են խուսափել: Նրանք հեռացել են իրենց բնակավայրից, բայց մնացել են երկրի տարածքում, որոշ ժամանակ անց կրկին վերադարձել են հայրենի Բիլեջիք:

Բայց կոտորածի երկրորդ ալիքի ժամանակ հայրական պապիս թուրք ընկերը նրան զգուշացրել է, որ հաջորդ օրը պիտի նորից ջարդ լինի և անհրաժեշտ է հնարավորինս շուտ փախչել երկրից: Հայրս չի պատմել, և ես էլ չգիտեմ, թե ով է եղել պապիկիս այդ «թուրք ընկերը»՝ հարևան, գործընկեր, թե՞ պարզապես մտերիմ մարդ: Հայտնի է միայն, որ այդ լուրն ստանալուն պես պապիկս անմիջապես կառք է կանչել, այնտեղ նստեցրել հայրիկիս և վճարել, որ նրան հասցնեն նավահանգիստ: Պապս տատիկիս հետ հետո պիտի միանար հայրիկիս: Կառքի շարժվելուն պես Սարգիս պապս վազել է հետևից ու ձայն տվել որդուն՝ «Թորգո՛ւմ, բռնի՛ր», ու մի կապոց է մետել նրա ուղղությամբ: Ողջ ճանապարհին հայրս ամուր գրկել է կապոցը՝ չիմանալով, թե ինչ կա այնտեղ: Կառքից իջնելուց հետո զարմանքով բացահայտել է, որ կապոցում իր մեկ տարեկան քույրն է:

Հորաքույրս արդեն ողջ չէ, բայց հաճախ էր կրկնում. «Եղբայրս չլիներ, Աստված գիտի՝ ինչ կլիներ ինձ հետ»...

Հայրս այդ ժամանակ 8-9 տարեկան է եղել...

Հայրս պատմում էր, որ նավապետին իրենք ոսկով են վճարել, որ իրենց Հունաստան՝ Սալոնիկ հասցնի: Սակայն թուրքիայում արդեն սկսվել էր «հայերի որսը», և նույնիսկ նավերից սկսել էին հավաքել հայ տղամարդկանց: Այդպես մորս հայրն ու եղբայրը գերի են ընկել, իսկ Սարգիս պապս կարողացել է հնարամտություն բանեցնել և խուսափել գերությունից:

Բայց մինչև Հունաստան հասնելը մեկ այլ դեպք էլ է պատահել: Թուրք նավապետը փորձել է շրջել նավի ուղղությունը, որ հայերին նորից թուրքական ափի մոտ իջեցնի: Հայրս պատմում էր, որ այդ ժամանակ ալեկոծություն է բարձրացել, և հակառակ ուղղությամբ նավարկելն անհնար է դարձել: Նավապետն այդ ժամանակ ասել է. «Ամեն դեպքում դուք Աստված ունեք»...

Հայրս միշտ հիշում էր այս խոսքերը:

Աստծո օրհնությամբ նավը հասնում է Հունաստան: Մորս ընտանիքը Սերեզում է բնակություն հաստատում: Այդ ընթացքում գերությունից կարողանում են ազատվել նաև մորական պապս ու մորեղբայրս և միանում իրենց ընտանիքին Սերեզում, որտեղ և ապրում են մինչև 1947 թվականը, այնուհետև տեղափոխվում Հայաստան:

Հորս ընտանիքը շուտ է գալիս Հայաստան՝ 1927 թվականից: Ծնողներս հանդիպում են արդեն Երևանում, այստեղ էլ ամուսնանում են: ■



Էլեանորա Յազիչյան

«Ջարդերի ժամանակ պապիս եղբորը հենց տան առջև են մորթել»

Պատմում է Էլեանորա Յազիչյանը


Իմ մայրական կողմը Վանից է: Պապս ծնվել է 1850-60-ական թվականներին. Ցավոք, ծննդյան հստակ տարեթիվը չեմ հիշում: Պապիս ընտանիքը՝ Մելիքյանները, հարգված է եղել: Պապիս հայրը իրենց գյուղապետն է եղել: Նրանց գյուղն ընկած էր Վանա լճի Կտուց կղզի տանող հատվածում (այն ժամանակ Կտուցը թերակղզի է եղել): Պապիս եղբայրը Մեջլիսի անդամ է եղել և սեփական նավն է ունեցել, որը հետո տվել է պապիս: Հենց այդ նավով պապիս ընտանիքը բազմաթիվ հայերի կյանք է փրկել:

Պապս Աղբյուր Սերոբի զինակիցն է եղել: Տատս ևս մասնակցել է իրենց գյուղի ինքնապաշտպանությանը: Նրա հերոսությունների մասին մեր բարեկամները բազմաթիվ պատմություններ էին պատմում: Հիշում էին, որ մի օր, երբ տղամարդիկ սարերում են եղել, և գյուղում միայն կանայք են եղել,

քրդեր են հարձակվել գյուղի վրա: Տատիկս առանց վարանելու տղամարդու շորեր է հագել, ձի է հեծնել, զենք վերցրել և սկսել է հալածել նրանց: Արդյունքում հրոսակները սարսափած թողել են ավարը և փախուստի դիմել: Քրդերի շեյխը, լսելով այս պատմությունը, եկել է պապիս հոր՝ Մելիքի մոտ, որ տեսնի, թե «ով է այն քաջը, որ համարձակվել է իր հերոսներին վախեցնել»: Մեծ պապս պատվիրել է թեյ բերել: Տատս թեյը բերել, մատուցել է, հետո կանգնել է դռան մոտ, որ վերցնի բաժակները: Թեյը խմելուց հետո քուրդ շեյխը կրկին պահանջել է ցույց տալ «իր հերոսներին վախեցնողին», և մեծ պապս ասել է. «Արդեն 15 րոպե է՝ այդ քաջը կանգնած է քո առջև»: Քուրդ շեյխը ապշահար հեռացել է: Մորաքույրս պատմում էր, որ Վանում բոլորն էին տատիս նման պայքարում, բոլորն էլ կռվել գիտեին՝ կին, երեխա:

Ջարդերի ժամանակ պապիս եղբորը, ով Մեջլիսի անդամ էր, հենց տան առջև են մորթել: Մերոնք չեն կարողացել փրկել նաև պապիս քրոջ երկու աղջիկներին, որոնց գողացել են, չնայած հայ կանայք փախչելիս իրենց դեմքին ցեխ էին քսում, որ տգեղ երևան և խուսափեն գերեվարվելուց:

Առևանգված աղջիկների մյուս քույրն ու երկու եղբայրները բարեբախտաբար փրկվել են: Ջարդի ժամանակ նրանք վազել են հարևան թուրքերի տուն, ովքեր երեխաներին թաքցրել են անկողինների տակ: Հրոսակները կասկածելով ներխուժել են նաև նրանց տուն, սրերով ստուգել են անկողինը, բայց, բարեբախտաբար, սրերը չեն հասել երեխաներին: Պապս ջարդարարների հեռանալուց հետո բոլորին հավաքել է և նավով տեղափոխել ռուսական տարածքներ: ■



Մենո Վահրադյան

«Ծանոթ մի թուրք հորս ու պապիս զգուշացրել է, որ եկեղեցին շուտով հրկիզվելու է»

Պատմում է Ղարիկո Մելքոնյանը

Երբ 2000 թվականին զնացի Ղարս ու Ղարսի բերդից նայեցի շուրջբոլորս. աչքիս առջև հայտնվեցին գաղթականների շարանները... Այդ օրվանից լալիս են. հասկացա, թե ինչ տառապանքների միջով են անցել ծնողներս...

Մայրս ցեղասպանության ականատեսներից է եղել, սակայն նա այնքան քիչ էր պատմում տեսածի ու ապրածի մասին, որ ես մինչև Ղարսում լինելը շատ բան չէի պատկերացնում... Նա Սարիղամիշից է եղել: Ցեղասպանության ժամանակ, բազմաթիվ հայ երեխաների նման, նա էլ հայտնվել է ամերիկյան մանկատանը: Մորս մորեղբայրը թարգմանիչ է եղել, և հենց նա էլ գտել է մայրիկիս: Երեխաների անվան ցանկում կարդալով «Թորոսյան Տիրուն» անուն-ազգանունը՝ հասկացել է, որ դա իր քրոջ աղջիկն է:

Մայրս տեղափոխվել է մորեղբոր մոտ, սակայն նրա քրոջը՝ Մարգարիտին,

արդեն տեղափոխել էին ԱՄՆ: Մորս եղբայրների մասին, ցավոք, տեղեկություն չկա...

Հայրս՝ Վահրադյան Սենոն, ծնվել է 1907 թվականին, Նորաբեր, այն ժամանակ՝ Քյալալի գյուղում, որի տարածքում այժմ ջրամբար են կառուցել: Հայրս ևս եղել է ցեղասպանության ականատեսներից: Թուրքերը հարձակվել են և գյուղի բոլոր բնակիչներին աքսորել առանց տարիք և սեռ հաշվի առնելու: Հայրս այդ ժամանակ հիվանդ է եղել: Երբ զինվորներից մեկը ցանկացել է կրակել նրա վրա, մեկ այլ զինվոր ասել է. «Ափսոս չէ՝ գնդակ ծախսես, առանց այդ էլ գյավուրը մեռնում է»: Այդպես հայրս ողջ է մնացել: Նա միշտ զարմանքով էր հիշում, որ ամբողջ գյուղին տեղափոխել են յոթ-ութ եմիչերիներ, սակայն հայերը, չնայած որ մեծաթիվ են եղել, չեն պաշտպանվել նրանցից:

Աքսորի ճանապարհին հորս մայրն անհետացել է, նրա մասին տեղեկություն այդպես էլ չենք ունեցել: Իսկ հորս ու պապիս, ողջ մնացած հայերի հետ, փակել են եկեղեցում: Այստեղ ծանոթ մի թուրք հորս ու պապիս զգուշացրել է, որ եկեղեցին շուտով հրկիզելու են:

Նրանք փախուստի են դիմել և փրկվել... ■



Գևորգ Հովհաննիսյան

«Հրամանատարները մտադրվել էին լուսաբացին մորթել բոլոր հայ զինվորներին»

Պատմում է Սոնա Չալգուշյանը

Ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց առաջ մորս կողմից մեծ պապիկիս ողջ գերդաստանն ապրում էր Ադանայում: Երբ սկսվում է պատերազմը, պապս՝ Գևորգ Հովհաննիսյանը, թողնում է իր հղի կնոջը՝ Լյուսյային, դստերը և մորս՝ Հայկանուշին, ինքը գնում պատերազմ՝ կռվելու:

Պապիկիս թուրքական բանակում վերցնում են որպես սևագործ զինվոր, ում զենք չէին տալիս, և ով կարող էր լինել, օրինակ՝ միայն բանակի խոհանոցում: Բայց քանի որ պապս հմուտ զինվոր էր և տիրապետում էր տարբեր ռազմական հմտությունների, շուտով որոշում են բացառության կարգով նրան զենք տալ և վերցնում են լիարժեք ծառայության:

Մի գիշեր, երբ պապիկս զորամասում քնած է լինում, նրա կողքին պառկած թուրք զինվորը, ում Ալի էին անվանում, արթնացնում է նրան ու հորդորում իր մյուս հայ ընկերոջ հետ փախչել, քանի որ թուրք հրամանատարները մտադրվել էին այդ լուսաբացին մորթել բոլոր հայ զինվորներին: Պապիկիս թուրք ընկերը նրան ասում է, թե ինքը չի կարող տեսնել՝ ինչպես են նրանց



Սոնա Չալգուշյան

մորթում կամ հանդուրժել, որ սվինն իրեն տան ու ստիպեն դա անել:

Ականջալուր լինելով թուրք ընկերոջ խոսքերին՝ պապս արթնացնում է իր հայ ընկերոջը, և որոշում են միասին փախչել: Բայց քանի որ պապս այնտեղ այլ հայ ընկերներ էլ ուներ, նա Ալիին խնդրում է մյուսներին էլ զգուշացնել: Վերջինս, սակայն, պատասխանում է, թե ինքը չի կարող դա անել, քանի որ միայն իրենց երկուսի համար էր նախապես պայմանավորվել: Պարզվում է, որ հայ զինվորներին փրկելու գործն իր վրա էր վերցրել ոչ միայն Ալին. նրան էին միացել նաև շատ այլ թուրք զինվորներ, ովքեր զգուշացրել էին հնարավորինս մեծ թվով իրենց հայ ընկերների:

Ալիին հաջողվում է պապիկիս ու նրա ընկերոջն ապահով դուրս բերել գորամասից: Այնուհետև նրանց ասում է, թե այլևս չի կարող նրանց օգնել, քանի որ եթե թուրք հրամանատարները պարզեն, որ աջակցել է հայերին, իրեն ևս կսպանեն: Այսպիսով՝ պապիկս իր ընկերոջ հետ ճանապարհ է ընկնում՝ բացի իր զենքից այլևս ոչինչ չունենալով:

Երբ նրանք գորամասից հեռանում են մոտ 10-15 կիլոմետր, հանկարծ նկատում են, որ հեռվից ինչ-որ գորամիավորում է մոտենում: Նրանք պահ են մտնում մի քարի հետևում: Սակայն զինվորները նկատում են նրանց: Բարեբախտաբար պարզվում է, որ դա Ջորավար Անդրանիկի ջոկատներից մեկն է:

Ձինվորները, չհասկանալով, որ նրանք հայ են, և տեսնելով, որ նրանց մոտ

զենք կա, պապիկիս և իր ընկերոջը՝ որպես թուրքի, գերի են վերցնում: Սակայն հարցուփորձ անելով և գլխի ընկնելով, որ նրանք հայ են՝ վերցնում են իրենց շարքերը: Դրանից հետո պապս ու նրա ընկերն Անդրանիկի ջոկատների կազմում մասնակցում են մի շարք կամավորական մարտերի: Այն բանից հետո, երբ Ջորավար Անդրանիկը որոշում է կայացնում ցրել իր զորքը, նա իր զինվորներին անցկացնում է Արևելյան Հայաստան և ազատ արձակում:

Այսպիսով՝ պապիկս տեղափոխվում է Թբիլիսի: Վրաստանում պապս, կորցնելով կապը ընտանիքի հետ և հույս չունենալով, թե կարող է նրանց գտնել, կրկին ամուսնանում է մեկ այլ հայ աղջկա հետ և շարունակում այնտեղ ապրել: Հետագայում մորս հաջողվում է գտնել իր հորը և նրանք հանդիպում են Հայաստանում: Հիշում են, որ դրանից հետո պապս պահում էր կապն ընտանիքի հետ և հաճախ էր գալիս մեզ տեսակցելու: ■

«1915-ին պապիս մազերը մեկ օրում սպիտակել են...»

Պատմում է Ռուբեն Սաֆրաստյանը

Պապս՝ Արամ Սաֆրաստյանը, Վանեցի է: 1909 թվականից Վանից դուրս է եկել և ուսուցչություն է արել Արևմտյան Հայաստանի տարբեր դպրոցներում: Հետագայում տեղափոխվել է Կ.Պոլիս և ընդունվել է Պոլսի համալսարան: Միաժամանակ նա վարել է հասարակական գործունեություն, մի շարք հոդվածներ է հրատարակել պարբերականներում: Դեռ ուսանողական տարիներից սկսել է Կ.Պոլսում հրատարակել հայկական առաջին մանկավարժական ամսագիրը: Եղել է նաև ՀՅԴ անդամ:

1915թ.-ի ապրիլին ձերբակալվել են Պոլսի համալսարանում սովորող հայ ուսանողները: Նրանց տարել են ոստիկանական կենտրոն: Բայց իրենց դասախոսներից մեկը՝ Ջեքի բեյը, կարողացել է ազատել ձերբակալված հայ ուսանողներին այնտեղից:


Հիշում եմ, նա ասում էր, որ բացի դրանից՝ նաև փորձ է արվել թունավորելու հայ ուսանողներին, ովքեր սովորում էին Պոլսի համալսարանում: Դա եղել է հայ ուսանողների առաջին խումբը, որովհետև մինչև 1911թ.-ը հայերին թույլ չէին տալիս ուսանել Պոլսում:

Հետագայում պապս դարձել է ընդհատակում գործող Դաշնակցության ղեկավարը Կ.Պոլսում: 1919 թ.-ին տեղափոխվել է Հայաստան, դարձել է Հայաստանի առաջին հանրապետության խորհրդարանի պատգամավոր, նույնիսկ քարտուղարն է եղել: Հետագայում զբաղվել է գիտությամբ: Թուրքագետ է եղել, հրատարակել է բազմաթիվ աշխատություններ. խորհրդային շրջանում ենթարկվել է ձերբակալությունների, աքսորի:

Նրա եղբայրը՝ Ալբերտ Սաֆրաստյանը, և քույրը՝ Արաքսի Սաֆրաստյանը, մասնակցել են Վանի ինքնապաշտպանությանը, հետո տեղափոխվել են Հայաստան: Ծնողները նույնպես տեղափոխվել են Հայաստան, սակայն 1915-ին համաճարակի ժամանակ մահացել են:



Արամ Սաֆրաստյան



Էջ Սաֆրաստյանի օրագրից

Պահպանվել են Արամ Սաֆրաստյանի օրագրերը: Մի տետրն ընդգրկում է 1913-ից 1916 թթ.-ի իրադարձությունները, և խորհրդանշական է, որ 1915թ.-ին վերաբերող որոշ էջեր գրված են կարմիր թանաքով:

Հիշում եմ՝ պատմում էին, որ 1915 թ.-ի ապրիլին, երբ տարածվել է հայերի զանգվածային սպանությունների լուրը, պապիս մազերը միանգամից սպիտակել են:

Իսկ տատիկս տրապիզոնցի էր, նրա հարազատների մեծ մասը ոչնչացվել է: Տրապիզոնում հայերին հիմնականում տանում, ծովում խեղդում էին:

Պապս աշխատություններ է հրատարակել, որոնք վերաբերում էին հայերի ծանր վիճակին Թուրքիայում: Եվ, փաստորեն, Ջեքի բեյը փրկել է մարդու, ով հրատարակել է «Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» քառահատորյակը: ■



Հայկանուշ Բզեկյան

Թոքատի ոսկե ջրհորների գաղտնիքը

Պատմում է Նունե Բեքարյանը

Իմ հոր ընտանիքը, ինչպես Հայաստանում են ասում, գաղթականների ընտանիք է եղել: Նրանք Արևելյան Հայաստանում հայտնվել են 1924 թվականին, մինչ այդ ապրել են Արևմտյան Հայաստանում. Կիլիկիայի ջարդերից հետո գաղթել են Սեբաստիա և հիմնավորվել այնտեղ: Ես այս բոլոր պատմությունները լսել եմ տատիկիցս՝ Ցեղասպանության ականատեսը նա դարձել էր յոթ տարեկանում:

Տատիկիս ընտանիքը մեծ հեղինակություն է վայելել Սեբաստիայում: Ունեցել են տներ և՛ Սեբաստիայում, և՛ Պոլսում: Սեբաստիային հարող փոքր Թոքատ գյուղում էլ ամառանոց են ունեցել: Տատիկիս հորական պապը հայտնի մարդ է եղել Սեբաստիայի եկեղեցական համայնքում, նրան Տեր Բզեկ են անվանել, ազգանունը Բզեկյան էր: Բնականաբար, որպես մեծ հեղինակություն վայելող մարդ՝ բազմաթիվ թուրք ընկերներ է ունեցել: Ջարդից առաջ ողջ գերդաստանով Թոքատում են եղել, երբ վիլայեթի բարձր պաշտոնյաներից մեկը, ինչպես տատիկս էր ասում՝ «երկրորդ մարդը», գալիս է Թոքատ և այցելում է տատիկիս պապին: Տատիկս պատմում էր, որ այդ ընթացքում մեծահասակները երկար նստել և զրուցել են: Տանտերերը թուրք պաշտոնյային սուրճ, անուշեղեն են հյուրասիրել, բայց նա հրաժարվել է: Ինչպես պատմում էր տատս, թուրքի հետ զրույցից հետո պապը սենյակից

դուրս է եկել սևակնած, մթնած, ընտանիքի բոլոր անդամներին հավաքել է մեծ սենյակում, թենեքեներով՝ պղնձե մեծ սկուտեղներով, բերել է տան ողջ ոսկին և ասել. «Ով ինչքան կարող է, թող վրան առնի»:

Տատիկս ասում էր. «Դա մի բան էր, որ մեզ մինչ այդ թույլատրված չէր անել: Բոլորիս համար նաև թգաչափ ոսկե գինդեր կային պահված. այդ գինդերը բոլորիս ականջներին կախեցին:» Տատիս խոսքով իրենք լսել էին, թե ինչպես է թուրք պաշտոնյան ասել. «Տե՛ր Բզեկ, ջարդ է սպասվում, մեծ ջարդ: Դու հնար ունես, հարուստ մարդ ես, կարող ես ընտանիքդ հավաքել և փախչել»:

Տատս պատմում էր. « Մնացած ոսկիները պապս լցրեց տան ջրհորը, մեզ բոլորիս կանգնեցրեց ջրհորի պատի մոտ և ասաց՝ ով որ փրկվի, թող գա գտնի ոսկիները»:

Տատս պատմում էր, որ Թոքատի հայկական տներում ջրհորները տանն էին կառուցում, որպեսզի հարձակումների ժամանակ ստիպված չլինեն տանից դուրս գալ, բայց և կարողանան ջուր հանել:

«Առավոտյան բոլորս զնացինք մեր տները, մի մասը՝ Սեբաստիա, մյուսներս՝ Պոլիս», - պատմում էր տատս:

Տատիկիս ընտանիքը գալիս է Պոլիս, նրա հայրը Պոլսում զինվորական է եղել: Տատս պատմում էր, որ լարվածություն էր զգացվում, տարբեր լուրեր էին պտտվում... մեծերը հավաքվում էին սենյակներում, խոսում էին, լացում էին, փոքրերին ներս չէին թողնում: «Մի օր հորս թուրք զինվորական ընկերներից մեկը գաղտնի եկավ մեր տուն: Քույրս՝ Սաթենիկը, ինձնից երկու տարի փոքր էր: Խառնաշփոթի մեջ մեր մասին մոռացան, և ես ականջ դրեցի: Լսեցի, որ զինվորականն ասաց, թե մի շաբաթվա ընթացքում այստեղ էլ է սկսվելու... «Ջարդը կամաց-կամաց գալիս է, կնոջդ վերցրո՛ւ և փախի՛ր: Դուք դեռ ջահել եք, երեխաներ կունենաք: Ո՞վ չգիտի, որ սրանք քո երեխաները չեն: Ես ամեն ինչ կկազմակերպեմ, որ դու Պոլսից դուրս գաս: Ես քո արած լավությունները չեմ մոռացել», - հիշում էր տատս թուրք զինվորականի խոսքերը: Տատս մինչ այդ զրույցը չի իմացել, որ իրենք իրենց մոր առաջին ամուսնության գավակներն են, և, փաստորեն, իրենց հայրն այլ մարդ է, որին չեն էլ ճանաչել: Շատ ազդված լսածից՝ տատս որոշում է քրոջ հետ փախչել տանից:

«Մեր տան փողոցի վերջում ամերիկյան որբանոց կար, առավոտյան ես հագնվեցի, վերցրի քրոջս ու միասին գնացինք որբանոց: Մեզ որոշ ժամանակ փնտրելուց հետո գտան, հայրս խիստ բարկացավ, բայց հետո հասկացան, որ փրկվելու համար մեզ որբանոց տանելը լավագույն տարբերակն է, որի մասին մինչ այդ ոչ ոք չէր մտածել: Որբանոցից իմացան, թե մեզ ինչ ուղղությամբ են տանելու և խոստացան անպայման մեզ գտնել: Մայրս որբան հնարավոր էր ոսկի կախեց մեզ վրա ու պատվիրեց չափսոսալ՝ փոխել հացով, հագուստով... այն ամենով, ինչի կարիքը կունենանք: Այսպես մեզ Պոլսից ֆրանսիական նավերով տեղափոխեցին Սալոնիկ, որտեղ մնացինք մինչև 1924 թվականը:



Հայկանուշ Բզեկյանն իր փոքր որդուն, հարսի և թոռնուհուն հետ

Հիշում եմ, որ նավ բարձրանալիս մի զինվորական քրոջս ականջից քաշեց ոսկե գինդը և ականջն էլ հետը պոկեց: Նրան մի կերպ վիրակապեցին և արնահոսելով նավ տեղափոխեցին:

Հայրս, ինչպես խոստացել էր, գտավ մեզ և մինչև կյանքի վերջը հարազատ երեխաների պես մեծացրեց՝ Ցեղասպանության տարիների մասին հիշողությունները չէին լքում նրան»,- պատմում էր տատս:

Տատս շատ լավ ֆրանսերեն և թուրքերեն գիտեր: Իր մտքերով միշտ թռչատում էր: Ասում էր, որ մի օր անպայման գնալու և գտնելու է իրենց տունը: Մահվանից առաջ նույնիսկ հաջողել էր թուրքիա մեկնելու թույլտվություն ստանալ, բայց չհասցրեց իրագործել երազանքը: Ինձ միշտ ասում էր, թե կարող է գծել իրենց տան հատակագիծը և նշել ջրհորի տեղը, որպեսզի ես կարողանամ գտնել իրենց ոսկիները... ■



Սոնա Պողոսյան

«Մեծ տատիկիս բռնությամբ ստիպում են հեռանալ տանից»

Պատմում է Սոնա Պողոսյանը

Մեծ պապս՝ Խաչիկ Պարթևը, և մեծ տատս՝ Աղավնի Սեյիսյանը, Ցեղասպանության տարիներին բնակվում էին Էրզրում քաղաքում: Մեծ պապս աշխատում էր որպես ռազմական բժիշկ թուրքական բանակում և մեծ հարգանք էր վայելում թուրք զինվորների շրջանակում: Աշխատանքի բերումով նա հաճախ ստիպված էր լինում երկար ժամանակով բացակայել տանից:

Երբ թուրքական կառավարությունը սկսում է հայերի զանգվածային տեղահանությունը Էրզրում քաղաքից, հերթը հասնում է նաև մեծ ծնողներիս ընտանիքին: Մի օր, երբ մեծ պապս աշխատանքի բերումով կրկին բացակայում էր տանից, թուրքերը ներխուժում են նրանց բնակարան և ստիպում ընտանիքին հեռանալ այնտեղից: Մեծ մայրս խուճապահար վերցնում է իր միակ դստերը և հեռանում՝ միայնակ թողնելով իր հիվանդ սկեսրոջը, ով, չնայած թուրքերի հարկադրանքին և մեծ մորս պաղատանքին, հրաժարվում է լքել իր բնակարանը՝ անկարող լինելով բռնել գաղթի երկար ճանապարհը:

Ցավոք, մեծ պապիս հետագայում այդպես էլ չի հաջողվում գտնել իր ծնողին:

Առաջացած խառնաշփոթի մեջ մեծ տատիս անգամ չի հաջողվում կապ հաստատել ամուսնու հետ և նրանից օգնություն խնդրել: Այսպիսով՝ թուրքերի հարկադրանքով դատեր հետ միասին առանց ամուսնու ինացության մեծ տատս ստիպված է լինում մյուս հայերի նման բռնել գաղթի ճանապարհը՝ չինանալով, թե ինչ է սպասվում իրենց առջևում:

Բարեբախտաբար, ճանապարհին նա հանդիպում է մի թուրք կնոջ, ով, ծանոթ լինելով մեծ պապիս, տատիս խորհուրդ է տալիս օգտագործել իր ամուսնու հեղինակությունը թուրքերի շրջանում և խուսափել բռնի տեղահանումից: Այսպիսով, հետևելով բարի կնոջ խորհրդին, մեծ մայրս թուրք զինվորներին հայտնում է իր ամուսնու ով լինելը և խնդրում նրանց օգնել իրեն գտնել ամուսնուն:

Թուրք զինվորները, ճանաչելով մեծ պապիս և ելնելով նրա նկատմամբ տածած իրենց հարգանքից, օգնում են մեծ տատիս խուսափել բռնի տեղահանումից և գտնել ամուսնուն: Այսպիսով՝ մեծ պապիս ընտանիքին թուրք զինվորների օգնությամբ հաջողվում է փախչել և ապաստան գտնել Վրաստանի Իմերեթ շրջանի Օրջոնիկիձե գյուղում:

Վրաստանում մի քանի տարի բնակվելուց հետո նրանց ընտանիքը տեղափոխվում է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատում Գյումրիում: Այստեղ ևս մեծ պապիկս շարունակում է զբաղվել իր մասնագիտությամբ: Նրանք ունենում են ևս երկու զավակ: ■



Սարգիս Սուվարյան

«Մահվան դատապարտված մի խումբ հայ երիտասարդների մի թուրք է վերցնում, որպեսզի աշխատեն իր համար»

Պատմում է Սարգիս Սուվարյանը

Հայրս՝ Սուվարյան Ավետիսը, ծնվել է 1901 թվականին Արաբկիր քաղաքում: Երբ սկսվել է կոտորածը, նրա հորը՝ իմ պապին, շատերի հետ որպես զինվոր հավաքագրել և տարել են: Հենց այսպես էլ պապս սպանվել է: Հայրս միայնակ է մնացել իր փոքր եղբոր հետ, ում որոշ ժամանակ անց հանձնել են ամերիկյան որբանոց: Հայրս պատմում էր, որ մարդկանց խմբերով հավաքում էին Եփրատի ափին, ոտքերն ու ձեռքերը կապում, նստեցնում նավակների մեջ, հասցնում մինչև գետի կենտրոն և նավակները խորտակում՝ խեղդելով մարդկանց: Հայրս այդ խմբերից մեկի մեջ է եղել, որոնք, սպասում էին իրենց մահվանը: Այդ պահին միջին ապրուստի մի թուրք է մոտեցել ափի մոտ հավաքված խմբին և մի քանի երիտասարդների ու պատանիների վերցնելու ցանկություն հայտնել, որպեսզի նրանք իր համար աշխատեն, անասնապահություն անեն: Ընտրված տղաների շարքում է հայտնվել նաև հայրս, ով այդ ժամանակ 14-15 տարեկան է եղել: Այսպես այս թուրքը վերցրել



Ավետիս Սուվարյան
ձախ կողմում



Արաբկիրի միություն

է 4-5 տղաների, որոնք մի քանի շաբաթ աշխատել են նրա համար, հետո որոշել են փախուստի դիմել:

Հայրս հիշում էր, որ գիշերներն իրենք ճանապարհ էին ընկնում և շարժվում դեպի հարավ, իսկ ցերեկները թաքնվում էին գերեզմաններում: Երբեմն նրանց նկատել են թուրք հասակակից երեխաներ, պատահել է՝ վեճի են բռնվել նրանց հետ: Այսպես տարատեսակ փորձությունների միջով նրանք հասել են Սիրիա՝ Հալեպ քաղաք, որտեղ դրությունը համեմատաբար հանգիստ է եղել: Սիրիայից հայրս անցել է Լիբանան: Բեյրութում նա սկսել է աշխատել, որոշ ժամանակ անց գտել է նաև եղբորը, ով ամերիկյան որբանոցի սաների հետ ևս հասել էր Բեյրութ: Հայրս որբանոցից վերցրել է եղբորը և հոգ տարել նրա մասին:

Մայրս ևս որբատան երեխա է եղել՝ նույնպես Արաբկիրից, ով նույն ճանապարհով էր հայտնվել Բեյրութում: Մորս ընտանիքն Արաբկիրում կաշվի մշակման մեծ գործարան է ունեցել: Մորս հայրը՝ Կարապետը, հարուստ և ազդեցիկ մարդ է եղել, նրան գտնելու համար նրա եղբայրներին տանջանքների են ենթարկել և ստիպել բացահայտել նրա տեղը: Այսպես պապս ու նրա եղբայրները սպանվել են, մայրս տանը մնացել է մենակ:

իր 3-4 տարեկան եղբոր և քառասուն օրական քրոջ հետ: Երեխաների մայրը՝ տատս, հիվանդացել է և բժիշկ չլինելու պատճառով մահացել: Բարեկամներից ոմանք անզամ ցանկացել են քառասուն օրական փոքրիկին էլ թաղել մոր հետ, սակայն տատիկիս քույրը թույլ չի տվել: Մայրս պատմում էր, որ իրենք օրեր շարունակ սոված են մնացել, թեև որոշ ժամանակ անց կենդանի մնացած բարեկամներից լսել են, որ տան առաջին հարկում պատերի մեջ պահված ոսկի է եղել, ինչի մասին իրենք ոչինչ չեն իմացել: Փորձելով մի կերպ գոյատևել՝ փոքրիկները սիսեռով ճաշ են պատրաստել և, չզհտակցելով վտանգը, կերակրել են նաև երկու ամսական իրենց քրոջը: Վերջինս, դժբախտաբար, խեղդվել է...

Ես ծնվել եմ 1937 թվականի փետրվարի 6-ին Բեյրութում: 1946 թվականին 6-րդ քարավանով մենք եկանք Հայաստան, մեզ տեղավորեցին Կիրովականում: Այնուհետև մեծ դժվարությամբ տեղափոխվեցինք Երևան, որտեղ բնակվում էր հորս քեռու տղան, և տեղավորվեցինք նրա տանը: Այնտեղ մեկ տարի բնակվելուց հետո հողամաս ստացանք, սկսեցինք տուն կառուցել և դեռևս կիսակառույց վիճակում տեղափոխվեցինք մեր տուն: Հայրս շինարար մարդ էր, շատ արհեստավարժ էր, ժամանակի ընթացքում կարողացավ կառուցել իր տունը և մեծացնել իր երեք երեխաներին: ■



Հայկանուշ Դողոզյանի ընտանիքը

«Մայրս ասում էր՝ թուրքին շնորհիվ էր, որ ես հայր ու մայր ունեցա»

Պատմում է Եղիսաբեթ Կաթրջյանը

Մեր ընտանիքը և՛ թուրքերից տուժած է, և՛ թուրքերի կողմից փրկված: Հայրս՝ Խաչիկ Կաթրջյանը, ճերախ գյուղից էր: Նա որք է եղել, ծնողներին կոտորել են Ցեղասպանության ժամանակ, իսկ քրոջը՝ Եղիսաբեթին, ում անունը ես կրում եմ, փախցրել են: Հորս իր խնամքի տակ է վերցրել մորեղբայրը, իսկ մյուս հորաքրոջս՝ իրենց հորեղբայրը:


Մանկությունը ծանր հետք էր թողել հորս հիշողության մեջ. ողջ կյանքում ոչինչ չէր ուզում ունենալ:

Երբ մեծ էինք, ասում էր. «Աղջի՛կս, ոչինչ պետք չի՛: Փոստ մը ըլլա, փոստի վրա քնենք, որովհետև թուրքերը կուզան... նորից կփախչենք»:

Հետո պարզվեց, որ նրա ընտանիքը բավական հարուստ է եղել: Երբ պետք էր տանը որևէ բան պատրաստել, ասում էր. «Աղջի՛կս, ադանք բաները մեր տանը ծառաները կընեին»: Պատմում էր, որ հայրենիքում գեղեցիկ, մեծ տուն են ունեցել... Իսկ մենք զարմանում էինք:

Երբ մեր տանը խոսակցություն էր լինում, հայրս միշտ ասում էր՝ «ադ թուրքերը...», իսկ մայրս ասում էր. «Թուրքին շնորհիվ էր, որ ես հայր ու մայր ունեցա»:

Մայրիկիս ընտանիքը Խազկալից է եղել: Իրենց ասում էին խազկալցիներ: Պապս ու տատս՝ Հարությունն ու Սաթենիկը, Դողոզյաններ էին, Դողոզյանն ազգանունը չէ, թաղի անունն է՝ Դողոզլար: Ժամանակի ընթացքում այդպես են գրանցել և դարձել են Դողոզյաններ:



Խաչիկ Կաթրջյանը քրոջ և քրոջ որդու հետ

Մայրս՝ Հայկանուշը, ծնվել է 1914թ.-ին: 1915-ի ջարդերի ժամանակ նրանց անընդհատ գյուղից գյուղ են արքարել:

Աքարի ժամանակ հերթական գյուղում թուրք խոջայի 16 տարեկան տղային են դանակահարել ու պապիկիս անունն են տվել՝ իբրև թե նա է արել: Երբ որ հրով, սրով եկել են, որ ամբողջ ընտանիքին կոտորեն, հարևան թուրքը, ով գյուղի հարուստներից մեկն է եղել, կանգնել և ասել է. «Ո՛չ, Հարությունը հոս էր այդ ժամանակ»: Այդպես մորս ընտանիքը փրկվել է:

Անցնելով արքարի ծանապարհը՝ հայտնվել են Սալոնիկում: Պապս պատմում էր, որ արքարի ճանապարհն այնքան ծանր է եղել, որ մտածել են նույնիսկ երեխային՝ մորս, թողնել ծառի տակ և գնալ, բայց հետո որոշել են մինչև վերջ տանել նրան: Այսպես 1915-1916 թվականներին փախել են Հունաստան՝ Սալոնիկում մայրս սովորել է Գյուլբենկյանի հիմնած դպրոցում, իսկ 1932-ին տեղափոխվել են Հայաստան:

Մայրս այդ թուրքի շնորհիվ է իր ծնողների հետ մեծացել և միշտ հիշում էր այդ մասին:

Հայրիկս նույնպես գաղթել է Հունաստան՝ Աթենք, նրանք Հայաստան ավելի ուշ են տեղափոխվել: Ծնողներս արդեն այստեղ են հանդիպել՝ Հայաստանում: ■



Մանուկ Ավետիքյան և Արմանուշ Մելքոնյան

«Իրեն փրկած թուրքի տանը հայրս ապրել է 13 տարի»

Պատմում է Օհաննես Քուլաք Ավետիքյանը

Հորս անունը Մանուկ է, Մանուկ Գրիգորի Ավետիքյան. նա Կեսարիայի պատկառելի մարդկանցից էր այժմյան Յոզղատ կոչվող գավառում: Յոզղատի նահանգի Յյուռնէջ գյուղում, որն այժմ անվանում են Քոնուքլար (թուրք.՝ Յյուրընկալներ), կար հայկական դպրոց, եկեղեցի և քուլեջ:

Հորս նախնիներն Անիից էին: Բայց երբ 1021 թ.-ին Սենեքերիմ թագավորը տեղափոխվում է Սեբաստիա, իմ նախնիները նույնպես ամենքի հետ միասին գաղթում են:

Հորս գյուղի անունը Յյուռնէջ է, որ նշանակում է, հուրն իջել է անտառի մեջ: Մի բացատ է բացվել, այդ բացատում գյուղ են կառուցել: Այդ շրջանում մինչ այսօր անտառ կա: Կողքին Ակտա լեռն է, որտեղ 1915-ից հետո հայ ֆիդայիները պատերազմել են՝ թե՛ մորս, թե՛ հորս գերդաստանից:

Հորս գերդաստանը Ավետիքյան է. մեծ հորս անունը Ավետիք էր: Ավետիքը «ծուռ» մարդ էր, Սասնա ծռերի պես՝ հերոս: Մի անգամ մեծ հորս մոտ գալիս են տասանորդ հարկահավաքի, նա վճարում է, սակայն երբ նորից են գալիս

հարկ հավաքելու, մեծ հայրս չի վճարում՝ ասելով, թե ինքն արդեն մեկ անգամ վճարել է: Հարկահավաքն ասում է, թե նորից պետք է տա, մեծ հայրս զայրանում և նրան ծեծում է: Միջադեպը հարթվում է, քանի որ պապս ծանոթ է ունենում: Սակայն որոշ ժամանակ անց այս հարկահավաքը կրկին գալիս է պապիս մոտ, արդեն փաշայի հովանու ներքո, Ավետիքը կրկին հրաժարվում է վճարել: Մեծ հայրս ծեծում է հարկահավաքին, նրան պատժում են՝ կտրելով ականջը, քանի որ հրաժարվում է հնազանդվել: Այդ պահից ի վեր մեր տոհմի մականունը Քուլաքսոյան է՝ առանց ականջ:

1915-ին հայրս ընդամենը 12 տարեկան է եղել, երբ նրա աչքի առջև սպանել են պապիս, մեծ մորս, հորս քրոջն ու ավագ եղբորը: ...Հայրս ամեն գիշեր մղձավանջներ էր տեսնում՝ իր ընտանիքի սպանության տեսարաններով:

Մի թուրք՝ Շերքեթ անունով, ցանկանալով փրկել երեխաներին, վերցրել է հորս՝ Մանուկին, և նրա կրտսեր քրոջը՝ Դալիթային: Այդ մարդը, սակայն, ասել է, որ երեխաներն իր մոտ կարող են ապրել թրքացվելու դեպքում միայն: Մանուկը պետք է անունը փոխեր, դառնար Շերքեթ: Թուրքը որոշ ժամանակ պահել է հորս և նրա քրոջը: Որոշ ժամանակ անց հայրս Դալիթային հանձնել է մանկատուն: Ինքը, սակայն, չի գնացել:

Նա մտածում էր, որ հոր թողած հողերն իրեն են պատկանում և ցանկանում էր կրկին տիրել դրանց: Քույրը մանկատան մյուս երեխաների հետ տեղափոխվում է Բեյրութ, որտեղ էլ մեծանում և ամուսնանում է մի ռուս զինվորի հետ:

Հայրս՝ Մանուկը, իրեն փրկած և ապաստան տված թուրքի մոտ ապրել է 13 տարի: Ամառներն արտում, ձմեռները ախոռում է ապրել: Ասում էր, որ այդ թուրքն իր տարիքի աղջիկ է ունեցել, որի հետ էլ մեծացել են: Այդ թուրքը նրան խորհուրդ է տվել տիրություն անել իր հոր հողերին:

Մի օր Մանուկը գնացել է հայրական տուն, որտեղ արտում ինչ-որ անծանոթի է հանդիպել, ով պնդել է, թե դրանք իր հողերն են: Մանուկին պահած թուրքը, խոսել է արտում հանդիպած անծանոթի հետ և ասել, որ երեխայի ամբողջ ընտանիքը սպանվել է, մի՞թե հնարավոր չէ գոնե հողերը թողնել նրան: Նրանք համաձայնության են եկել, և Մանուկը գնացել է այդ հողերի սեփականատիրոջ վկայականը ստանալու: Այնտեղ նրան ասել են, որ քանի որ իր հայրը ժամանակին չի հնազանդվել իշխանություններին, այդ հողերն այլևս իրեն չեն պատկանում, այլ պետության սեփականությունն են: Հայրս ժամանակին այդ թղթերն իր ձեռքով է այրել՝ ասելով, որ իրենից ամենը վերցրել են, ու թո՛ղ դա էլ իրենց մնա...

Մանուկի մյուս քույրը՝ Ծիածան անունով, մի թուրք կրոնականի հետ էր ամուսնացել, սակայն հաճախ էին հանդիպում հորս հետ: Հորաքրոջս թուրք



Մանուկ Ավետիքյան և Արմանուշ Մելքոնյան

ամուսինն էլ մի օր պատմում է հորս, որ հայ, սակայն կրոնափոխ եղած մի աղջիկ կա, և առաջարկում է ամուսնանալ նրա հետ: Այդ աղջիկը մայրս էր՝ Արմանուշը, որը «ծուռ» Մելքոնյան էր: Մորս հայրը մասնակցել է Չամաքալեի պատերազմին թուրքական բանակի կազմում, այդ պատճառով նրան ավելի ուշ են քսորել: Մորս՝ Արմանուշին, փրկել են չերքեզները, նրանք խոսում էին իվոներեն: Ես գիտեմ՝ իվոները չերքեզների մասնիկ են, սակայն նրանք թրքացած էին: Երբ մեծ հայրս պատերազմից վերադառնում է, իր գյուղը դատարկ է գտնում: Մայրս՝ Արմանուշը, անվանափոխվել, դարձել էր Աիշե, իսկ տատս՝ Չոփիսիմեն էլ՝ Գյուլսիմա: Այնուհետև հայրը միացել է նրանց, Յակուբ անունով: Ծնվել են նրանց երկու կրտսեր դստրերը: Այնուհետև՝ ամուսնու մահվանից հետո, Չոփիսիմեն իր աղջիկների հետ վերադարձել է Յյուռնեջ գյուղ: Այստեղ էլ հայրս՝ Մանուկ Ավետիքյանը՝ Շերքեթը, ամուսնացել է Աիշեի հետ:

Հայրս ինձ խրատել է, որ երբեք ու երբեք չգնամ Յյուռնեջ, որովհետև ինքն այնտեղ շատ դաժան իրողությունների է ականատես եղել:

Այնուհետև հայրս տեղափոխվում է Կեսարիա՝ ընտանիքին էլ հետը տեղափոխելով: Տարիներ անց նրանք գաղթել են ԱՄՆ, որտեղ էլ ծնվել են ես: Մեր գյուղի՝ Յյուռնեջի անունն այսօր Քոնուքլար է: Այն այսօր ներառված է Յոզղատ նահանգի սահմաններում: ■

«Ցեղասպանությունից փրկված մորս պատմությունը հրաշք է հիշեցնում»

Պատմում է Դոնարա Թարջումանյանը

Ցեղասպանությունից փրկված մորս պատմությունը հրաշք է հիշեցնում՝ իրական հեքիաթ...

Իսկապես, հրաշք էր այն տարիներին փրկվելը, գոյատևելը գրեթե անմարդկային պայմաններում, խուսափելը յաթաղանից ու հետագայում ընտանիք կազմելը, երջանիկ ապրելը ...

Նույնիսկ չգիտեմ էլ՝ կարելի է արդյոք մորս կյանքը երջանիկ անվանել: Մանկության տարիներին ապրած արհավիրքը, տեսած դաժանությունները միշտ նրա աչքերում էին... Մայրս Ցեղասպանությունից փրկվածներից էր...

Մայրս՝ Սիրանուշ Հակոբյանը, ծնվել էր 1912 թվականին, Կարսում: Ծննդյան օրը չէր հիշում, պատմում էր միայն, որ այդ օրը Վարդավառի տոն է եղել, հուլիս ամիսը: Փոքրիկ երեխա է եղել, երբ Արևմտյան Հայաստանում սկսվել է եղեռնը: Թուրքական կոտորածները Կարս են հասել մի փոքր ավելի ուշ: Ինչպես գիտեք, մինչև 1918թ. Կարսը ռուսական հպատակության տակ էր, իսկ 1918-ին ժամանակի ամենաանմատչելի քաղաք-ամրոցը հանձնվեց թուրքերին: ...Հանձնվեց ու սկսվեց մղձավանջը, որ մինչև կյանքի վերջ մորս աչքերում էր:

Կարսի հայերի մի զգալի հատված գրի գնաց կոտորածներին, մեծ մասն էլ բռնեց գաղթի ճամփան: Մայրս երկու եղբայրների՝ Մնացականի ու Համբարձումի հետ մեծաթիվ հայ գաղթականների շարքերում էր: Պատմում էր, որ իրենց բոլորին մի ախոռ էին տարել: Մայրս փոքր էր եղել, բայց ամեն մանրուք տպավորվել էր: Պատմում էր, որ ախոռում, շարժվելու տեղ չկար, օդ չկար ... Մորս հիշողության մեջ տպավորվել էր, որ զինվորներն ամեն օր գալիս, մի քանի հոգու անուն էին տալիս ու տանում նրանց... Բոլորն էլ գիտեին, որ տանում են սպանելու: Մի օր էլ գալիս են ու հարցնում՝ ովքեր են Սիրանուշը, Մնացականն ու Համբարձումը... «Մենք իրար նայեցինք ու հասկացանք, որ մեր հերթն էլ հասավ», - պատմում էր մայրս:



Սիրանուշ Հակոբյանն ու ամուսինը

Նրանց երեքին տարան, բայց թե ո՞ւր՝ չգիտեին: Որք երեխաներն ավելի ուշ են գլխի ընկնում, որ իրենց փրկել են: Հայտնվելով մի մեծ պալատում՝ նրանք հանդիպում են իրենց հորեղբոր աղջկան՝ Աղավնուն:

Աղավնու պատմությունն էլ հետաքրքիր է: Նրան ջարդի տարիներին մի թուրք փաշա էր տեսել ու սիրահարվել: Աղավնին ամուսնացել էր թուրքի հետ, տեղափոխվել նրա ամրոց: Սակայն աղջիկը միշտ տխուր էր... Թուրք փաշան ցանկացել է որևէ բան անել նրա համար, որպեսզի ուրախանա: Աղավնին էլ խնդրել է, որ իր հորեղբոր զավակներին ջարդից փրկի: Թուրք փաշան, ինչպես տեսնում եք, կատարել է կնոջ խնդրանքն ու փրկել հայ որբերին:

Թուրքի տանը մորս ու քեռիներիս լավ են ընդունում, նոր հագուստ են տալիս, կերակրում: Մայրս հաստատ չէր հիշում, բայց ասում էր, որ բավական երկար՝ մոտ մի տարի ապրել են այնտեղ, մինչև որ թուրքերը բացահայտել են փաշայի արարքն ու սկսել հետապնդել: Փաշան կնոջը՝ Աղավնուն, վերցրել ու հեռացել է՝ որբերին նորից մենակ թողնելով:

Չեն հիշում, թե հետո մայրս եղբայրների հետ ուր է գնում, բայց արդյունքում իրենց հորեղբոր կնոջը՝ Աղավնու մորն են գտնում: Նրա օգնությամբ տեղափոխվում են Գյումրի:

Մայրս պատմում էր, որ որոշ ժամանակ Գյումրիում ապրելուց հետո լուր է տարածվում, թե թուրքերը դուրս են եկել Կարսից, բոլոր գաղթականները կարող են վերադառնալ (ամենայն հավանականությամբ 1919 թվականին է եղել, երբ հայկական բանակը կարճ ժամանակով ազատագրեց Կարսը):

Կարսի ազատագրման լուրը լսելով՝ Հայաստանում ապաստան գտած մեծ թվով կարսեցիներ, որոնց թվում էր մայրս իր եղբայրների հետ, նորից ճամփա են ընկնում հայրենի քաղաք: Այս անգամ Կարսում նրանք շատ կարճ են մնում: Քիչ անց, երբ քաղաքը ռուս-թուրքական համաձայնությամբ վերջնականապես անցնում է Թուրքիային, նրանք նորից բռնում են գաղթի ճամփան դեպի Հայաստան: Այս անգամ որբերը մենակ են մնում. հորեղբոր կինը ճանապարհին մահանում է: Ճանապարհին մայրս կորցնում է նաև փոքր եղբորը, ով անհայտ հիվանդությամբ է հիվանդանում ու մահանում:

Մորս ու ավագ եղբորը բերում են Երևան: Երևանում որբերին մանկատուն են հանձնում. ներկայիս Սունդուկյան թատրոնի մոտակայքում այն ժամանակ մանկատուն էր գործում: Այնտեղ նրանց համար նոր կյանք է սկսվում... ■



Ալիկ Սարգսյան

«Մեծ պապիկս երկու ժամ ուներ Վանից հեռանալու համար»

Պատմում է Ալիկ Սարգսյանը

Այս պատմությունը լսել են մայրիկիցս, սակայն միայն վերջերս ավելի մանրամասն իմացա նրա պապիկի ընտանիքի կյանքի մասին Վանում, այն մասին, թե ինչպես են նրանք հրաշքով փրկվել կոտորածից: Նախնիներս գաղթել են Վանից Ցեղասպանության տարիներին: Նրանց մի մասը բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում:

Այս պատմությունը մայրիկիս պապիկի մասին է, ով ծնվել և մինչև 1915 թ. ջարդերն ապրել է Վանում:

Նիկողոս Գրիգորի Չարխչյանը ծնվել է 1884 թվականին: Ավարտել է դպրոցը, որից հետո դարձել է սափրիչ: Նա ունեցել է մեկ դուստր: Չնայած սիրել է իր արհեստը, սակայն եղել է նաև շատ գործունյա: Քրտնաջան աշխատանքի և մեծ կամքի շնորհիվ, նա դարձել է խոշոր հյուրանոցների, վարսավիրանոցների, «չայխանաների» սեփականատեր: Գործի բնույթից ելնելով՝

նա շատ է շփվել թուրքերի հետ և շատերի հետ բավականին լավ հարաբերությունների մեջ է եղել: Նրա թուրք հարևանները Նիկողոսի և նրա ընտանիքի անդամների անբաժան ուղեկիցներն էին: Սակայն նրանց հարաբերություններն էլ են փոխվել, երբ սկսվել են թուրքերի կողմից իրականացվող ջարդերը:

1915 թվականի ապրիլին Նիկողոսը լինում է իր հյուրանոցներից մեկում, երբ նրան է մոտենում ռազմական հանդերձանքով մի թուրք սպա և զգուշացնում, որ Նիկողոսն ունի ընդամենը 20 րոպե ժամանակ իր տունը և 2 ժամ Վան քաղաքը լքելու համար: Մայրս պատմում էր, որ շատ տարօրինակ էր, որ այդ մասին հայտնում է մի անծանոթ սպա, ում Նիկողոսն ընդհանրապես չգիտեր: Ինչևէ, նման լուրը սարսափեցնում է մեծ պապիկիս, և նա շտապում է իր ընտանիքի հետ որքան հնարավոր է արագ հեռանալ Վանից: Նիկողոսն իր հետ վերցնում է այն, ինչ հնարավոր էր 20 րոպեի ընթացքում՝ առաջին անհրաժեշտության պարագաներ, որոշակի գումար՝ ոսկով: Կնոջ, 2 տարեկան երեխայի և ծնողների հետ բռնում է գաղթի ճամփան՝ իր ողջ ունեցվածքը թողնելով թուրքերին: Սակայն նրանց փախուստն առանց կորուստների չի լինում: Չարխչյանների ընտանիքին ճանապարհին ոչ միայն թալանում են, այլև ենթարկում են հալածանքների, Նիկողոսի ծնողները մահանում են խուլերայից: Նիկողոսն իր ընտանիքով կարողանում է հասնել Արևելյան Հայաստան, հաստատվել և շարունակել իր կյանքն այստեղ: Հետագայում պարզ է դառնում, որ այդ նույն թուրք հարևանները, ովքեր մշտապես հյուրընկալվել էին Նիկողոսի տանը, վաղուց տեղյակ են եղել թուրքերի ծրագրերի մասին, սակայն թաքուն են պահել: Չնայած Նիկողոսի կյանքի ընթացքում պատահած բազմաթիվ դժվարություններին, տանջանքներին՝ նա ապրել է բավականին երկար՝ 96 տարի, և մահացել 1980 թվականին: ■



Պատմիկ Գևորգ Քենդիկյան

«Չորաքրոջս ընտանիքին թուրք ընկերներն ուղեկցել են մինչև Հայաստանի սահման...»

Պատմում է Համեստուհի Քենդիկյանը

Ծնողներս ապրել են Արևմտյան Հայաստանի Արաբկիր քաղաքում: 1896 թ.-ին՝ կոտորածների առաջին ալիքի ժամանակ, տատիկս աչքի առջև սպանել են Գևորգ հորեղբորս ու կախել ծառից: Տատիկս դրանից հոգեկան ծանր խանգարում է ստացել, երկար բուժվել է: Սակայն մինչև կյանքի վերջ էլ հոգեկան որոշ խնդիրներ ուներ: Այնուհետև պապիկս են տարել, երկու հորեղբայրներիս, հորեղբորս բոլոր բարեկամներին, մնացել է միայն հայրս, ով փոքր է եղել: Նա 1904 թ.-ին է ծնվել. նրան մահացած եղբոր անունով կոչել են Գևորգ:

Տատիկս պատմում էր, որ պատերազմի ավարտից հետո բոլոր արաբկիրցիներով գնացել են Հալեպ, որտեղից էլ Բեյրութ են տեղափոխվել:

Հայրս պատմում էր իր ընկերական շրջապատի մասին: Ասում էր՝ շատ թուրք ընկերներ է ունեցել, ովքեր, ինչպես ինքն էր ասում, նեղության պահին միշտ օգնել են, չեն թողել, որ մեզ վնասեն: Մեկի անունը լավ են հիշում՝ Մստաթևիկ: Ասում էի՝ «այդ ի՞նչ անուն է», ասում էր՝ «թուրքի անուն է»:



Քենդիկյանների ընտանիքը

Իսկ հորաքրոջս՝ Տիգրանուհու անուսինը՝ Սարգիս Սուրյանը, պատմում էր, որ ջարդի ժամանակ իրենք դարբին են եղել և սարերում պայտեր են պատրաստել: Թուրքի մեջ նրանց մոռացել են, չեն արքորել: Նրանք Արաբկիր են վերադարձել, երբ իրավիճակը հանդարտված է եղել 1924-ին, հետո գաղթել են Հայաստան:

Նրանց թուրքերն են օգնել փախչել: Չորաքրոջս անուսինը հիշում էր, թե ինչպես են իրենց թուրք ընկերներն իրենց ունեցած-չունեցած ոսկեղենը վերցրել, դրել իրենց գրպանները, գորգերն ու ողջ ունեցվածքը կապել են իրենց ջորիների վրա և ուղեկցել մինչև Արևելահայաստանի սահման: Թուրքերն այդ ոսկեղենն իրենց մոտ են պահել ու ասել. «Եթե հարձակում լինի, ձեզ մոտից կխլեն, մեզ մոտ ապահով կլինի»: Այդպես թուրքերը նրանց բերել հասցրել են սահմանին, ոսկեղենն ու ունեցվածքը վերադարձրել են ու ճանապարհել Հայաստան:

Երևանում նրանք Կինոյի տան մոտ մեծ տուն էին գնել, գերդաստանով ապրում էին, սեղան էին նստում 14 հոգով:

Չորաքրոջս անուսինը միշտ երախտագիտությամբ էր հիշում այդ թուրքերին: Ասում էր, որ լավ թուրք հարևաններ են ունեցել, ովքեր «տիրություն էին անում, չէին թողնում, որ ասպատակեն»: Բայց դաժան մարդիկ էլ են եղել, որ օգտագործել են առիթը, սպանել ու թալանել են: Ամեն դեպքում, շատ են լսել, որ թուրքերի թվում եղել են նաև շատ օգնողներ: ■

«Երբ սկսվում է Մեծ ջարդը, թուրք հարևանն ապաստան է տալիս տատիս ընտանիքին»

Պատմում է Սուրեն Ավետիսյանը

Տատիկս՝ Սիրանուշ Համբարձումյանը, ծնվել է 1905 թվականին: Նա Վանի Արտամետ գյուղից էր: Երբ սկսվում է Հայոց մեծ ջարդը, տատիկիս ընտանիքին որոշ ժամանակով ապաստան է տալիս թուրք հարևանը:

Տատս ասում էր. «Ճիշտ է՝ թուրք էին, բայց շատ լավ մարդիկ էին: Մենք շատ մտերիմ էինք ընտանիքներով: Աղուհացի մարդիկ էին»:

Բայց թուրք հարևանները ևս երկար ժամանակ չէին կարող թաքցնել տատիս ընտանիքին: Այդ ժամանակ, ինչպես հազարավոր այլ հայեր, նրանք ևս ստիպված են լինում հեռանալ Արտամետից:

Գաղթի ճանապարհին երկու զինվոր մոտենում են տատիս փոքր քրոջը և փորձում հանել մատի արծաթե մատանին: Դժվարանալով հանել մատանին՝ նրանցից մեկը բարձրացնում է դաշույնը, որ կտրի աղջկա մատը: Այդ պահին մոտենում է մեկ այլ թուրք զինվոր ու թույլ չի տալիս: Ի վերջո, մատանին թրջելով կարողանում են հանել մատից:

Բայց ավելի ուշ, հյուժվելով սովից ու հոգնածությունից, տատիկիս քույրն ու մայրը մահանում են գաղթի ճանապարհին:

Տատս պատմում էր, որ ճանապարհին քայլելիս մարդիկ ուժասպառ ընկնում էին, և բոլորը գիտեին, որ այդ ընկածն այլևս չի բարձրանալու:

Հայ գաղթականների խումբը, որոնց թվում էր նաև տատս, կարողանում է անցնել Արաքսը և հասնել այժմյան Արմավիրի Շայրար գյուղ: Որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո տատիկս տեղափոխվում է Էջմիածին՝ ամերիկյան մանկատուն:

Տարիներ անց տատս հանդիպում է պապիս, ով արմատներով Սուշից էր: Նրանք վաղուց էին տեղափոխվել Ապարանի Քուչակ գյուղ: 1929 թվականին նրանք միասին տեղափոխվում են Երևան:

Հիշում են՝ երբ հավաքվում էինք ընտանիքով, և տատս սկսում էր խոսել իր մանկությունից, միշտ կարոտով էր պատմում իրենց կորսված տան ու գյուղի մասին: Իր հարազատ Արտամետի խնձորի մասին խոսում էր հատուկ



Սիրանուշ Համբարձումյան

Սիրանուշը իր հարսի և թոռների հետ

հիացնումքով: Պատմում էր, որ Արտամետի հարսները սնդուկներում միշտ խնձոր էին պահում, երբ սնդուկը բացում էին, բույրը տարածվում էր ողջ սենյակով...

Շատ էր ուզում գոնե մեկ անգամ այցելել իր համար այդքան հարազատ Արտամետ: Այնտեղից հեռացել էր, երբ ընդամենը ինը տարեկան էր եղել, բայց համոզված ասում էր. «Եթե մեկ անգամ էլ ոտքս ընկնի մեր գյուղ, միանգամից կգտնեմ մեր տունը»: Ցավոք, տատիս այդ մեծ ցանկությունն այդպես էլ չիրականացավ:

Վանեցիներին բոլորը միշտ ժլատ են համարում, սակայն տատս իսկապես շատ առատաձեռն կին էր: Նրան մեր ծանոթները միշտ հարցնում էին. «Դու վանեցի ես, ինչպե՞ս է, որ այսքան հյուրասեր ես», ինչին ի պատասխան՝ ասում էր. «Վանեցիները ժլատ չեն, պարզապես միշտ ունեն իրենց վաղվա օրվա պաշարը»: ■

«Տատիկիս հորը մահից փրկել է իր թուրք հրամանատարը»

Պատմում է *Գրիգոր Ավետիսյանը*

Հայոց ցեղասպանության տարիներին հրաշքով փրկվածներից է եղել նաև 1907 թվականին ծնված տատիկս՝ Մարտիրոսյան Աղավնին: Տատիկս ընտանիքի հետ ապրել է Բուրսայի նահանգի ճարախ գյուղում, որը Բուրսայից մոտ 100 կիլոմետր հեռավորության վրա է գտնվել և հայտնի էր իր բուժիչ՝ տաք և սառը լողավազաններով: Գյուղում հիմնականում զբաղվում էին մետաքսագործությամբ: 1915 թվականին տատիկիս հորը զորակոչել են բանակ և ընտանիքում մնացել են միայն կանայք: Տատիկս պատմում էր, որ իրենց տեղահանելու ժամանակ թուրքական կառավարությունն իրենց՝ որպես զինվոր տված ընտանիքի հատկացրել է սայլեր՝ իրերը տեղափոխելու համար, մինչդեռ մյուս ընտանիքները նման «առավելություն» չունեին: Գաղթի ժամանակ նրանք բոլորի հետ միասին հասել են Դեր Ջոր տանող երկաթգծին, վրաններ խփել և սպասել իրենց հերթին: Տատիկս պատմում էր, որ դա իրենց համար փրկություն էր թվում. ոչ ոք չգիտեր, որ այդ գնացքներով իրենց տանելու են կոտորելու:

Շուտով հասնում է և իրենց հերթը, չորս կանայք՝ տատիկս, իր մայրը, տատիկիս տատն ու մորաքույրը տեղավորվում են գնացքում: Տատիկս պատմում էր, որ իրենք դեմքերին մուր էին քսում, որ տգեղ երևան, քանի որ գեղեցիկ աղջիկներին թուրքերը տանում էին: Երբ տատիկս ընտանիքի հետ միասին արդեն գնացքում էին, գնացք է բարձրանում նաև մի պատանի և հարցնում, թե կան արդյոք այնտեղ Բուրսայից եկածներ: Տատիկիս տատիկն է արձագանքում՝ ասելով, որ իրենք ճարախից են: Դրանից հետո պատանին խորհուրդ է տալիս նրանց շտապ իջնել գնացքից: Սկզբում ծեր կինը չի հասկանում, թե ինչու պիտի իջնեն. ախր, հազիվ իրենց հերթն է եկել: Սակայն, բարեբախտաբար, այդ տղային հաջողվում է իջեցնել նրանց և ողջ գնացքից երկի միայն իրենք են փրկվում...

Փրկվելուց հետո նրանք աշխատանքի են անցնում շուկայում, ապրուստի չնչին միջոց հայթայթելու համար օգնում են առևտրականներին, տարբեր



Աղավնի Մարտիրոսյանի փաստաթուղթը՝ տրված Բուլղարիայում

գործեր անում: Հենց շուկայում էլ նրանք պատահաբար հանդիպում են բանակ զորակոչված տատիկիս հորը՝ Գրիգորին: Հանդիպումն անակնկալ էր, քանի որ բոլորն արդեն գիտեին, որ բանակ զորակոչված հայ տղամարդկանց թուրքերը կոտորում էին: Սակայն պարզվում է, որ տատիկիս հորը մահից փրկել է իր թուրք հրամանատարը: Վերջինս, լավ իմանալով, որ Գրիգորն արհեստավարժ հողագործ է, տանում է իր կալվածք՝ այգեգործ աշխատելու: Փաստորեն ստացվում է, որ տատիկիս հոր փրկությունը հնարավոր եղավ թուրքի շնորհիվ: Ընտանիքի հետ վերամիավորվելուց հետո նրանք նորից տեղափոխվում են հայրենի ճարախ, մոտ 2 տարի ապրում այնտեղ, իսկ արդեն 1922 թվականին՝ հունական բանակի նահանջի ժամանակ շարժվում են Բուրսա, այնտեղից նավով տեղափոխվում Բուլղարիա և փրկվում Ցեղասպանության երկրորդ ալիքից: Բուլղարիայում տատիկս ծանոթանում է պապիկիս հետ, ամուսնանում են և 1933 թվականին երկու որդիների հետ միասին տեղափոխվում Հայաստան: ■



Անահիտ Ղազարյան

«Փախի՛ր, գնա՛, թող ճրագս չմարի»

Պատմում է Անահիտ Ղազարյանը

Երբ ծանոթացա «100 տարի... Իրական պատմություններ» ծրագրին, այդ ժամանակ նախկին աշակերտուհիներից մեկը՝ Սուսաննա Ստեփանյանը, այցելել էր ինձ: Զրույցի ընթացքում պատմեցի ծրագրի մասին, և պարզվեց, որ նրա պապիկին Ցեղասպանության ժամանակ փրկել են թուրքերը: Նա ինձ պատմեց հայրական կողմից իր պապի պատմությունը:

Նրանք եղել են Շատախից: Ցեղասպանության տարիներին նրա պապիկը մոտ 13-14 տարեկան է եղել: Շատախի բոլոր բնակիչներին թուրքերը հավաքել են և փակել եկեղեցում, որ հրդեհեն: Սուսաննայի խոսքերով իր պապի ընտանիքը շատ մեծ է եղել: Նրա մեծ պապը՝ Ստեփանը, զգալով, թե ինչ ճակատագիր է սպասում իր ընտանիքին, այդ թվում որդուն՝ Հակոբին, փորձում է ելք որոնել: Բայց ի՞նչ էլք գտնել, երբ բոլորի ձեռքերը կապված էին, այն էլ՝ մեջքի ետևում: Հանկարծ նա նկատել է, որ եկեղեցու պատը մի փոքր խարխված է, և քարը հնարավոր է տեղահանել: Հակոբի հայրը սկսել է հարվածել պատին ձեռքերով, մեջքով: Նույնիսկ այդ դժվարին պահին նա չի

մոռացել իր դավանանքի մասին ու չի հարվածել ոտքով. եկեղեցու պատին ոտքով հարվածելը մեղք էր համարում: Կինն անընդհատ լաց էր լինում՝ խնդրելով, որ ամուսինը մի ճար անի, փրկի տղային՝ իր Հակոբին:

Ի վերջո, ինչ-որ հրաշքով, նա կարողացել է տեղահան անել դարավոր այդ եկեղեցու մի կտոր քար՝ որդուն ասելով. «Փախի՛ր, գնա՛, թող ճրագս չմարի»: Հակոբը նիհարիկ տղա է եղել, մի կերպ դուրս սողոսկելով եկեղեցու պատին բացված անցքից՝ սկսել է վազել: Հանկարծ լսել է թուրքի բղավոցը. «Գյավուրի տղեն փախավ»: Հետո հաջորդել է կրակոցը... Հակոբը զգացել է, որ մեջքին կապված իր ձեռքերը հանկարծ տաքացան, բայց շարունակել է խելակորույս վազել: Նա վազել է՝ չիմանալով, թե ուր է հասել: Հանկարծ ուշաթափվել է և ընկել:

Արթնանալով տեսել է, որ ինչ-որ թուրքի տանն է: Կողքին հղի մի թրքուհի է կանգնած, իսկ իր ձեռքերը կապկաված են տարբեր լաթերով: Այդ պահին գիտակցել է, որ վիրավոր է, սակայն առաջին միտքն այն է եղել, որ ինքն ազատ է, փրկվել է: Թրքուհին նրան կերակրել է և ստիպել, որ թաքնվի, քանի որ տղային փնտրելիս են եղել: Թուրքի տանը՝ պատի տակ, անկողիներ են շարված եղել: Կինն առաջարկել է Հակոբին պառկել անկողիների տակ: Քիչ հետո լսվել է թուրքերի գոռոռոցը և թրքուհու պատասխանը, ով վստահեցրել է, որ տղան իր տանը չէ: Ի վերջո, զինվորները հեռացել են: Հետո թրքուհին ուտելիքի կապոց է տվել տղային, ցույց տվել փախուստի ապահով ճանապարհը: Հենց այսպես էլ փրկվել է շատախցի Հակոբը՝ Ստեփանի որդին, ով տարիներ անց իր թոռներին պատմել է. «Երբ հեռանում էի, ծխի հոտ զգացի: Ետ նայեցի... եկեղեցին այրվում էր...»

Նա փախել է և հասել Արարատի մարզի Ավշար գյուղ, այնտեղ ամուսնացել է, երեխաներ ունեցել: Թոռնուհու խոսքերով նա մշտապես ցանկացել է Արագն անցնել ու գնալ, մեկ անգամ էլ տեսնել հայրենի տունը... ■

«Կոտորված գերդաստանի երկու փրկված շիվ ուխտ արեցին, որ հյուսվեն միմյանց և դառնան հաստաբուն կաղնի...»

Պատմում է Եղիսարեթ Բալթայանը

Մայրս՝ Ազնիվ Բալթայանը, Սեբաստիայի Տիվրիկ քաղաքից էր: Նա Ցեղասպանության զոհ դարձած գերդաստանի միակ փրկվածն է:

Մայրս պատմում էր, որ մի թուրք հարևան են ունեցել, ով շատ հարազատ է եղել իրենց: Մի երեկո, երբ տան տղամարդիկ պանդխտության էին մեկնել, այս թուրք փաշան այցելում է իրենց: Մայրս ասում էր, որ իրենց տանը նա կարծես ընտանիքի անդամ լիներ: Փաշայի մայրը մահացել էր ծննդաբերության ժամանակ, և Ազնիվի մեծ մայրը՝ Նազիկը, իր որդու պես նրան պահել, մեծացրել էր: Թուրքը Նազիկին «մեծ մամ» էր ասում:

Մայրս՝ Ազնիվը, այդ ժամանակ 6 տարեկան էր: Նա իր երկու քույրերի հետ դուրս է գալիս հյուրին դիմավորելու և ականատես է լինում խոսակցությանը: Ներս գալով և սեղանի շուրջ տեղավորվելով՝ թուրքը Նազիկ «մեծ մամին» հայտնում է, որ «թուրքական կառավարության որոշում կա՝ տեղահան անել հայ ազգաբնակչությանը, կոտորել և բնաջնջել հայ ազգը»: Նա Նազիկին առաջարկում է իր տանն ապաստան գտնել և նույնիսկ մի առանձին անկյուն է խոստանում հատկացնել սրբապատկերների համար, որտեղ Նազիկ մամը կաղոթեր: Նա ասում է, որ լինելով մեծ հնարավորությունների տեր՝ կկարողանա նրանց ողջ ընտանիքը պաշտպանել: Այս ժամանակ բոլորը տագնապած սպասում են Նազիկի արձագանքին, նա էլ մերժում է՝ ասելով, թե որտեղ հայ ժողովուրդը, այնտեղ էլ իր գերդաստանն ու ընտանիքը, եթե բնաջնջեն հայերին, նրանց հետ թող իր ընտանիքն էլ կոտորվի: Այս լսելով՝ թուրք փաշան հեռացավ և այլևս չվերադարձավ, իսկ մի քանի օր անց կատարվեց այն, ինչի մասին նա ասում էր:

Երբ գալիս է ապրիլը Բալթայան գերդաստանը մյուս հայ ընտանիքների հետ միասին բռնում է գաղթի ճանապարհը: Քանի որ մայրս փոքր էր, նրան գրկից գիրկ էին փոխանցում, շատ հաճախ հոգնում էր, տատին խնդրում, որ կանգ առնեն՝ հաց ուտելու կամ ջուր խմելու: Ճանապարհին պատահած մի դեպքի ժամանակ նրա աչքի առջև սպանում են իր քույրերից մեկին՝ գլուխը կտրելով նետում ջուրը, ինչը մայրս շատ ծանր է տանում:



Սեբաստիայի Տիվրիկ քաղաքը

Ճանապարհի մի հատվածում գաղթականների քարավանը դադար է առնում, այդ ընթացքում նաև նկատում են, որ թուրք զինվորականների վերաբերմունքն իրենց հանդեպ փոխվել է. նրանք բռնության ոչ մի քայլ չէին անում, հակառակը՝ հորդորում էին հանգիստ և դանդաղ գնալ, քանի որ դեռ երկար ճանապարհ ունեին անցնելու:


Չեռվում տեսնելով ամերիկյան որբանոցի աշխատակիցներին՝ բոլորը հասկանում են թուրքերի խորամանկության պատճառը:

Ամերիկացիները հավաքագրում էին անչափահասների, որոնց շարքերում ընդգրկվում է նաև մայրս՝ Ազնիվը: Քրոջ մահն իր աչքերով տեսած մայրս դժկամությամբ է բաժանվում տատից և մյուս քրոջից: «Տուն ու տեղ ստեղծի՛ր ու մի՛ մոռացիր գերդաստանը,- Ազնիվին կրծքին սեղմելով՝ ասում է Նազիկ տատը: - Չիշողությանդ մեջ կպահես՝ս տանջանքներիդ ճանապարհը»:

Չեռացող բեռնատարի միջից մայրս աչքը չի կտրում երկար ձգվող քարավանից՝ փնտրելով իր քրոջն ու տատին:

Մայրս ամուսնանում է Ազարիա Պատրակչյանի հետ, ով նույնպես Սեբաստիայից էր՝ Պատրին գյուղից: Նրանք հանդիպել էին որբանոցում: Քսան տարի Յունաստանի Սալոնիկ քաղաքում ապրելուց հետո 1946 թ.-ին տեղափոխվում են Հայաստան: Երկուսի գերդաստանն էլ ապրել էր որբերգությունը, ինչպես իրենք էին ասում. «Երկուսն էլ կոտորված գերդաստանների փրկված շիվեր էին և ուխտ էին արել, որ հյուսվեն միմյանց ու դառնան հաստաբուն կաղնի»...

Պատմությունը «Կաղնու դալար շիվը» վերնագրով տպագրվել է նաև «Խարիսխ» ամսագրի 2005 թ. մարտ/ապրիլ համարում: ■



Ելիզավետա Գալուկյանի ընտանիքը

«Լենինի կողմից Կարսը Թուրքիային հանձնելուց հետո հայերի հանդեպ ավելի դաժան կոտորածներ են սկսվել...»

Պատմում է Ջուլիետա Արաջյանը

Մորս ընտանիքը Կարսից է եղել: Մայրս՝ Ելիզավետա Գալուկյանը, 1914 թվի ծնված էր: Շատ հարուստ ընտանիք էր. անթիվ ոսկի ունեին, խալիներ... Պապիկս խանութ ուներ Կարսում և կարողանում էր իր ընտանիքի բարեկեցությունն ապահովել: Մայրս պատմում է, որ մինչև Ցեղասպանությունն իրենց տունը մոտ է եղել մի թուրք էֆենդու տան, ով պատվավոր մարդ էր: Պապիկս ամեն օր նրան միս էր մատակարարում: Այս թուրքը հաճախ տատիկիս խնդրել է, որ այդ մտով ընթրիք պատրաստի իր համար: Տատիկս էլ, նրան հարգելով, կատարել է ցանկությունը: Քանի որ մսի քանակությունը սովորաբար շատ էր, թուրք էֆենդին տատիկիս խնդրում է ամեն օր ընթրիքը բաժանել կարիքավոր հայերին՝ չքավորներին:

Սակայն մի գիշեր հարձակում է եղել Կարսում. մորս ողջ ընտանիքին գերել են ու տարել սպանելու: Որոշ ժամանակ անց ընտանիքի չափահաս անդամները վերադարձել են: Մորս խոսքերով իր տատն իրեն ասել է, թե այդ



Ելիզավետա Գալուկյան կենտրոնում

պահին հարևան երկու թուրք են եկել և ջարդարարներին քշել: Թուրքերն ասել են, որ մորս ընտանիքը պետք է փախուստի դիմի, այդ դեպքում իրենց ոչինչ չի սպառնա: Գիշերը փախուստի դիմելով՝ մի կերպ կարողանում են թիֆլիս մեկնող գնացքի վագոններում տեղավորվել՝ մտածելով, որ կհաստատվեն թիֆլիսում: Սակայն Կիրովականի մոտ հասնելիս գնացքը կանգ է առել, հայտարարվել է, որ ռուսները Կարսը գրավել են: Մորս ընտանիքը կրկին հետ է դառնում: Վերադառնալով մի քանի տարի նորից կարողանում են ապրել Կարսում: Իրենց ունեցվածքը պահում էին կարասների, կուժերի մեջ:

Սակայն Լենինի կողմից Կարսը Թուրքիային հանձնելուց հետո հայերի հանդեպ ավելի դաժան կոտորածներ են սկսվել: Այս անգամ արդեն մորս ընտանիքը փախել է և հաստատվել Գյումրիում: Մայրս պատմում էր, որ ջարդերի ժամանակ իր աչքի առջև հղի կնոջ փոր են բացել, երեխան ընկել է... Առհասարակ դաժան վերաբերմունք էր հայերի հանդեպ, որը մորս՝ այն ժամանակ դեռ երեխայի մեջ շատ է տպավորվել: Փախուստի ժամանակ տատս միայն հասցրել է մի քանի ոսկյա իրեր երեխաներին հագցնել կամ կապել մարմիններին, միայն դրանք են հասցրել Հայաստան, ինչն էլ հետագայում իրենց բավականին օգնել է: Այստեղ հաստատվել են Գյումրիում, բերած ոսկեղենը վաճառելով՝ կարողացել են իրենց ապրուստն ապահովել մինչև մայրս ամուսնացել է, և արդեն հայրս է հոգացել ընտանիքի կարիքները: Հայրս Ալաշկերտից էր, մշեցի էր և մորիցս 14 տարով մեծ: Հայրս էլ Անդրամիկի ջոկատում է կռվել: Նրա եղբայրն էլ թուրքական բանակում է կռվել և հարգված մարդ է եղել: Հայրս, աշխատանքի անցնելով միջազգային մարդասիրական հիմնադրամներից մեկում, հաստատվում է Հոկտեմբերյանում՝ իր հետ տանելով ողջ ընտանիքը: Այնտեղ էլ ծնվել են ես: Ունեցել են 5 տղա և մեկ աղջիկ, սակայն տղաներից 3-ը մահացել են: Մայրս ասում էր, որ եթե հնարավորություն լիներ հետ գնալու, գետնի տակ կարասով պահած ոսկիները կգտներ, քանի որ տեղը հիշում էր... ■



Ռուբեն Սարգսյան

«Երազում եմ գոնե մեկ անգամ գնալ Ղարս, տունս տեսնել ու նոր մեռնել...»

Պատմում է Ռուբեն Սարգսյանը

Պապս՝ Սարգսյան Մելիքը, Ղարսից էր: Ծնվել էր 1895 թվականին, համեմայն դեպս, փաստաթղթերում այդպես էր գրված, թեև ինքը պնդում էր, որ ծնվել է 1888 թվականին: Ես 13 տարեկան էի, երբ պապիցս լսեցի նրա պատմությունը: Հետաքրքրությունս այնքան մեծ էր, որ անգամ ձայնագրել եմ տատիս և պապիս պատմությունները: Նրանք պատմում էին իրենց մասին և լցված կարոտով՝ մերթընդմերթ երգում էին հատվածներ ազգային երգերից՝ իրենց բարբառներով: Տավոք, այդ ձայնագրություններն անհետացել են ընտանեկան արխիվներից:

Պապիս նախնիները Սասունից են եղել, հետո գաղթել են Մուշ, այնտեղից էլ Ղարս: Իմ պապերը Սասունից գաղթել են քրդերի հետ ունեցած վեճի պատճառով: Սասունում մի օր ինչ-որ քուրդ է եկել մեր տուն, ձին կանգնեցրել մեր տան բակում և այնտեղ փռած ցորենը հանգիստ լցրել ձիու խուրձիկների մեջ:

Տանտերերի վրդովմունքին ի պատասխան՝ նա ասել է, թե «հայերը պետք է աշխատեն, իսկ քրդերը՝ ուտեն»: Բարկացած տանտերերը եզներին լծելու համար նախատեսված փայտով հարվածել են անկոչ հյուրին. նա մահացել է: Քրդի ընտանիքի վրեժխնդրությունից խուսափելու համար իմ նախնիները վճարել են այլ քրդերի՝ նրանց Սասունից գաղտնի դուրս բերելու համար: Այսպես նրանք գաղթել են Ռուսաստանի հպատակության տակ գտնվող տարածքներ:

Պապս պատմում էր, որ 1921 թվականին մի օր նկատել է, որ խորհրդային զնացք է ժամանում Ղարս: Ինչպես ինքն էր պատմում, ռուսական զնացքը ճանաչել է ռուս զինվորների «կոմունակա» զլխարկներից: Պապս ճանաչել է զնացքի ռուս պարետին. պարզվել է, որ նրանք միասին ծառայել են բոլշևիկյան բանակի 5-րդ զնդում: Պապս պատմել է ռուս պարետին, որ ցանկանում է փախչել և զնացքով հասնել Գյումրի: Պարետը խոստանում է թաքուն տեղափոխել նրան: Սակայն նրանց զրույցն ինչ-որ մեկը լսում է և հայտնում թուրք փաշային, թե Մելիքը ծրագրում է փախչել ռուսական զնացքով: Երբ թուրք ժանդարմները պապիս բերում են փաշայի մոտ, պապս չի թաքցնում և խոստովանում է, որ ցանկանում է մեկնել իր փրկված ազգակիցների մոտ: Պապս փորձել է իր հետ փախցնել նաև մի անծանոթ հայուհու՝ փաշայի մոտ նրան ներկայացնելով որպես իր կնոջ:

Ջարմանալի է, բայց թուրք փաշան պապիս պատժելու փոխարեն նրան ճանապարհածախս է տալիս և բաց թողնում: Այսպես պապս գալիս է Կովկաս, որոշ ժամանակ բնակվում է Թիֆլիսում, հետո հաստատվում է Գյումրիում, որտեղ էլ գտնում է իր եղբայրներին: Այնուհետև միասին գալիս են Երևան: Այստեղ պապս ամուսնանում է կրկին Արևմտյան Հայաստանից՝ Ալաշկերտից, փախած տատիս՝ Յաղուբի հետ, ով ևս մեծ դժվարությամբ էր փրկվել:

Տառս պատմում էր, որ թուրք զինվորներն իրենց գյուղի բնակիչներին հավաքել են մի շինության մեջ, եթե չեն սխալվում՝ եկեղեցում, շուրջբոլորը խոտի դեզեր են շարել և կրակ վառել: Բայց, բարեբախտաբար, տեղի թուրք փաշան, պատահաբար հայտնվելով այդ վայրում, զինվորներին հրամայում է բաց թողնել մարդկանց: Հենց այսպես էլ փրկվում է տատս:

Պապս փայտագործ է եղել և այստեղ էլ շարունակել է իր աշխատանքը: Նույն արհեստն է ունեցել նաև պապիս հայրը՝ Խաչատուրը, ով սպանվել է ցեղասպանության ժամանակ: Նա անհետացել է ձմռանը, նրան գտել են միայն մի քանի ամիս անց՝ ձնհալից հետո, ձորում: Պապիս կարողացել են ճանաչել վերարկուից:

Արևելյան Հայաստան գաղթելու որոշում պապս շատ ուշ է կայացրել: Գիտեմ, որ նա ավելի վաղ եղել է նաև Ռուսաստանում: Ղարսից գաղթելու և

Խորհրդային Հայաստան տեղափոխվելու որոշում է կայացրել միայն այն ժամանակ, երբ հասկացել է, որ Ղարսն ընկնում է: Նրա բոլոր հարազատները՝ այդ թվում նաև մայրն ու երկու եղբայրները ավելի շուտ են փախել Ղարսից, մի մասը՝ Թիֆլիս, մի մասը՝ Գյումրի: Ընդ որում, Ղարսից շատերը Գյումրի են փախել՝ հույսով, որ Գյումրին մոտ է, և երբ իրենց քաղաքն ազատվի, կվերադառնան իրենց տները:

Ամեն անգամ իր պատմությունը հիշելիս ասում էր. «Երազում եմ գոնե մեկ անգամ գնալ Ղարս, տունս տեսնել ու նոր մեռնել»: ■



Ալիս Մանուկյան-Մինասյանը թոռնիկների հետ

«Մեծ հայրս բազմաթիվ թուրք ընկերներ է ունեցել, որոնցից մեկի շնորհիվ էլ կարողացել է խուսափել ջարդից»

Պատմում է Ալիս Մանուկյան-Մինասյանը

Իմ մեծ հայրը՝ մայրիկիս հայրը, ում անունը Մարտիրոս Քաֆթարյան էր, Ակն քաղաքից է եղել: Այս քաղաքը շատ հետաքրքիր դիրքում է գտնվում: Այն շրջապատված է լեռներով: Ակնում մեծ թվով հայեր են ապրել: Իմ մեծ հայրը այնտեղ կոշիկի գործարան է ունեցել, որտեղ բազմաթիվ թուրքեր են աշխատել: Իր աշխատակիցներից բացի էլ մեծ հայրիկիս ընտանիքը բազմաթիվ թուրք ընկերներ է ունեցել, որոնցից շատերը նրա գործընկերներն են եղել:

Ցեղասպանության տարիներին մեծ հայրս արդեն ամուսնացած է եղել: Ծնված էին նաև իմ մորեղբայրները: Հենց իր գործի շնորհիվ էր, որ նա շատ լավ ծանոթություններ ուներ, այդ թվում թուրքերի շրջանում: Մի օր նրա թուրք ընկերներից մեկը գալիս է ու ասում. «Մարտիրո՛ս, դու լավ կանես, որ այստեղից գնաս: Ընտանիքդ վերցրո՛ւ և գնա՛ այստեղից»:

Բարեբախտաբար, մեծ հայրս լսում է իր թուրք ընկերոջն ու Ակնից ընտանիքով հեռանում է: Նրանք մեկնում են Բուլղարիա: Որոշ ժամանակ անց, երբ մեծ հայրս իր ընտանիքի հետ հեռանում է Ակնից, լուրեր է ստանում, որ Ակնի բոլոր հայերին կոտորել են:

Այսպիսով՝ մեծ հորս ընտանիքին հաջողվում է խուսափել ջարդերից իրենց թուրք ընկերոջ շնորհիվ:

Մայրս ծնվում է արդեն Բուլղարիայում՝ Վառնա քաղաքում: ■



Նարինգյուլ Ղարագյոզյանն իր քրոջ հետ

«Մի շարք հայ մանուկներ իրենց փրկության համար պարտական են թուրք հրամանատարին»

Պատմում է Մանվել Ղումաշյանը

Այս պատմությունը լսել եմ իմ տատիկից՝ Նարինգյուլ Ղարագյոզյանից, ում հայրը՝ Եսայի Ղարագյոզյանը, բնակվել է թուրքական Յոզղաթ բնակավայրի մոտակա գյուղերից մեկում: Վերջինս թուրքական բանակի ոչ բարձրաստիճան սպա է եղել: Ջարդի օրերին նրա թուրք հրամանատարը, ով նաև համագյուղացին է լինում (նրա անունը, ցավոք, չեմ մտապահել), Եսայուն կանչում է իր մոտ և խորհուրդ է տալիս կրոնափոխ լինել, որպեսզի կարողանա փրկել իրեն ու ընտանիքը: Եսային մերժում է այդ առաջարկը, սակայն խնդրում է վերջինիս փրկել իր ընտանիքը: Հրամանատարը, քանի որ մեծ հարգանք էր տածում Եսայու հանդեպ, խոստանում է ամեն գնով փրկել

Երեխաներին, սակայն մեծահասակների առումով ոչինչ չի խոստանում՝ հասկացնելով, որ դա վեր է իր ուժերից:

Այսպիսով՝ ջարդերից առաջ իմ տատիկը, ինչպես նաև նրա քույրն ու եղբայրը, տեղափոխվում են թուրք հրամանատարի տուն:

Ընտանիքի մյուս անդամներին, ցավոք սրտի, չի հաջողվում փրկվել:

Թուրք հրամանատարը մի քանի ամիս երեխաներին խնամելուց հետո նրանց հանձնում է ամերիկյան որբանոց: Այնուհետև նրանք հայտնվում են Հունաստանում, որտեղ էլ տատիկս ամուսնանում է և փորձում նոր կյանք սկսել:

Հետաքրքրական է, որ մոտ 20 տարի առաջ, երբ տատիկս արդեն կենդանի չէր, Բուենոս Այրեսի հայկական համայնքում կազմակերպված միջոցառումներից մեկի ժամանակ ինձ մոտեցավ տարեց մի մարդ: Վերջինս նախապես տեղեկացել էր, որ Նարինգյուլ Ղարազյոզյանի թոռն եմ, և մոտենալով ինձ՝ հուզված ձայնով ասաց, որ իր փրկության համար պարտական է տատիկիս: Ես իհարկե չհասկացա՝ ինչի մասին է խոսքը, սակայն ամեն ինչ պարզ դարձավ, երբ նա պատմեց հետևյալ պատմությունը:

Գյուղի վրա հարձակման ժամանակ երեխաների մի խումբ (4-5 հոգի) կարողանում է փախչել և թաքնվել մոտակա ձորի քարանձավներից մեկում: Որոշ ժամանակ անց, ինչ-որ կերպ տեղեկանալով երեխաների թաքստոցի մասին, տատիկս՝ Նարինգյուլ Ղարազյոզյանը, սկսում է գիշերները ծալված կերակուր տանել սովալլուկ ու հյուժված մանուկներին՝ փրկելով նրանց սովամահությունից: Բնականաբար, տատիկս դա չէր կարող անել առանց թուրք տանտիրոջ թույլտվության: ■




Փոքրիկ աղջիկը՝ Իզաբելլա Չփլախյան

«Երկար ժամանակ թուրք բարեկամի տանն ապրելը վտանգավոր էր»

Պատմում է Իզաբելլա Չփլախյանը

Նկարի փոքրիկ աղջիկը ես եմ՝ տատիկիս ու պապիկիս հետ: Պապիկիս մասին իմ հիշողությունները դեռ վառ են, լավ հիշում եմ նաև, որ նա երբեք չէր սիրում խոսել իր պատանեկությունից: Իր կյանքի այդ շրջանի մասին հիշողությունները պապիս համար ամենացավալիին էին: Նրա հետ կատարվածի մասին մեզ պատմում էր տատիկս, ով ևս, ցավոք սրտի, ցեղասպանության ականատեսներից է եղել: Նա, ի տարբերություն պապիս, իր մեջ այդ մասին խոսելու ուժ գտնում էր:



Իգարբելա Չփլախյանի պապիկը

Պապիկս ծնվել է 1900 թվականին Յոզղատ գավառում, ունեցել է վեց եղբայր և մեկ քույր: Ցեղասպանության ժամանակ նրա եղբայրներն ու ծնողները դաժանաբար սպանվել են: Պապիկիս փրկել է նրա հոր թուրք ընկերը և որոշ ժամանակ պահել է իր տանը: Սակայն մշտապես նրանց տանը մնալ հնարավոր չէր, վտանգը մեծ էր նաև այդ ընտանիքի համար: Որոշ ժամանակ անց պապիկս փախել է Հայաստան՝ Արարատի շրջանի Երասխ գյուղ: Պապիկիս քույրը ևս փրկվել է ցեղասպանությունից, սակայն նրա պատմության մանրամասներն ինձ հայտնի չեն: Գիտեմ միայն, որ նրան հաջողվել է հեռանալ Բեյրութ: Այդ մասին մենք իմացանք տարիներ անց, երբ պապիկս և նրա քույրն արդեն բավական ծեր էին: Ցավոք նրանց այդպես էլ բախտ չվիճակվեց հանդիպել:

Մեր իսկական ազգանունը եղել է Բալջյան: Տեղափոխվելու ժամանակ պապիկիս հարցրել են իր ազգանունը, նա, նայելով իր կիսամերկ մարմնին, ասել է. «Չփլախ եմ, գրե՛ք Չփլախյան»: Հենց այդ ազգանունով էլ նա եկել է Հայաստան: ■



Եղիշ Ղփեյանցը որդու և թոռների հետ

«Բիթլիսում շատ հայերի են կոտորել, բայց մեծ պապիս ընտանիքին հաջողվել է փրկվել ջարդերից...»

Պատմում է Հարություն Բերբերյանը

Իմ ընտանիքում թե՛ մորս, թե՛ հորս ընտանիքները գաղթել են Ցեղասպանության ընթացքում: Հիշում եմ, որ փոքր ժամանակ քնելուց առաջ մեզ հեքիաթ պատմելուն զուգահեռ՝ տատիկ-պապիկներս պատմում էին նաև իրենց գաղթի, փրկության, անցյալի պատմությունները: Շատ-շատ ենք լսել այդ պատմությունները, բայց ամեն անգամ դրանք այլ կերպ էին հնչում՝ նոր ու հետաքրքիր մանրամասնություններով ու հիշողություններով: Այդ ամենի հիմնական նպատակն այն էր, որ մենք այդ պատմությունները չմոռանանք, միշտ հիշենք:

Հորս պապը՝ Եղիշը, ամբողջ ընտանիքով գաղթել է Բիթլիսից, եթե չեմ սխալվում՝ 1915 թվականի ջարդերից անմիջապես առաջ: Վերջինս Բիթլիսում ապրելու տարիներին զբաղվում էր կոշկակարությամբ: Մեր ընտանիքի ազգանունը սկզբնապես Եղիազարյան էր (կամ Տեր-Եղիազարյան), բայց նրանց Ղփեյանց էին կոչում: Գաղթի ժամանակ սահմանն անցնելիս Ղփեյանց

ազգանունն էլ է վերափոխվում՝ ռուս սահմանապահների արտասանությամբ դառնալով Կրեյանց:

Յորս պապիկի և իր ողջ ընտանիքի փրկության պատմությունը շատ հետաքրքիր է, քանի որ, ինչպես գիտենք, Բիթլիսում շատ հայերի են կոտորել: Մեծ պապս, մեծ շրջապատի տեր լինելով, շատ ընկերներ ու գործընկերներ ուներ քրդերի ու թուրքերի շրջանում: 1915 թվականի ջարդերից առաջ այդ ամենի մասին նրան զգուշացնում է թուրք ժանոթներից մեկը, ինչի շնորհիվ հորս պապը կարողանում է փրկվել՝ իր հետ Հայաստան բերելով նաև ողջ ընտանիքն ու մահացած եղբոր որդիներին: Յորս պապը երեք տղա և հինգ աղջիկ է ունեցել: Իմ պապը՝ Նիկոլը, եղել է ընտանիքի երկրորդ որդին, իսկ ավագը՝ Աշոտը, գաղթի ժամանակ Արաքսն անցնելիս ընկել է սայլից և կորել:

Քանի որ մեծ պապիս նախապես էին զգուշացրել սպասվող վտանգի մասին, նա բավականին ժամանակ ուներ հավաքելու իր ունեցվածքը և գաղթի ճամփան բռնելու: Այսպիսով՝ պապս կարողացել է որոշ բաներ իր հետ բերել Հայաստան: Երևան գալով՝ հայրական ընտանիքս հաստատվում է այստեղ և նոր կյանք սկսում: ■



Արմեն Վարդերեսյան

«Մայրիկիս պապը մի թուրք աղջկա էր սիրում, փախչելով բանակից՝ գնում է նրա տուն»

Պատմում է Անժելա Խաչատրյանը

Մայրիկիս պապն Էրզրումցի էր: Անունը՝ Կամեր Վարդերեսյան, գաղթից հետո փոխել է անունը և նրան Արմեն Վարդերեսյան էին կոչում:

Մինչև Ցեղասպանությունը նա ծառայում էր թուրքական բանակում: Մեծ ընտանիք ունեին՝ բաղկացած 31 անդամից: Բոլորը մի բակում էին ապրում: 1914թ. ջարդերի ժամանակ բանակում նա իմանում է, որ ընտանիքի բոլոր անդամներին կոտորել են: Մայրիկիս պապը փախչում է բանակից հենց թուրքական համազգեստով:

Նա մի թուրք աղջկա էր սիրում և փախչելով գնում է նրա տուն: Աղջկա ծնողները նրան բաց չեն թողնում, քանի որ գիտեին, որ հայ է և կարող է սպանվել: Պահում են իրենց տանը մինչև ուշ գիշեր՝ թաքցնելով բազմոցի տակ: Մութն ընկնելուց հետո օգնում են հասնել մինչև սահման, և նա փախչում է Ռուսաստան:

Մոտ 10 տարի անց, իմանալով, որ Թուրքիայից փախած բարեկամներ ունի Թիֆլիսում, մայրիկիս պապը տեղափոխվում է Վրաստան:

Մորաքույրս պատմում է, որ պապիկը շատ էր սիրում թուրքական երաժշտություն և ազատ խոսում էր թուրքերեն: Նա Արևմտյան Հայաստանը համարում էր իր երկիրը և ասում էր. «Եթե սահմանը բաց լինի, չոքեչոք կգնամ, իմ տունը կտեսնեն»: ■

«100 տարի ... Իրական պատմություններ»

Ծրագրի ղեկավար՝

Կ. Բեքարյան

Գրքի խմբագիր՝

Ա. Մկրտչյան

Համակարգող թնօրքիայուն՝

Ա. Նալչը

Թուրքերեն տարբերակի

խմբագիր, թարգմանիչ, սրբագրիչ՝

Լ. Գասպարյան

Անգլերեն տարբերակի

խմբագիրներ՝

Ն. Բեքարյան

Ն. Մելքոնյան

թարգմանիչ, սրբագրիչ՝

Ն. Մելքոնյան

Խորհրդատուներ՝

Ի. Բարխուդարյան

Կ. Օհանյան

Հ. Կաթրջյան

Հ. Նազարյան

Պատմությունները հավաքագրեցին՝

Ա. Կարապետյանը

Ա. Հարությունյանը

Ա. Հովսեփյանը

Գ. Ավետիսյանը

Լ. Հովհաննիսյանը

Հ. Մխիթարյանը

Ն. Մկրտչյանը

Ն. Մինասյանը

Ք. Գասպարյանը

Սրբագրիչ՝

Լ. Խաչատրյան

Շապիկի ձևավորումը՝

Լ. Խաչատրյանի

Շապիկի առաջին էջում ներկայացված են վերապրածների, նրանց ընտանիքների կամ ժառանգների լուսանկարները:

Վերջին էջում Հայաստանի միջնադարյան ամենանշանավոր քաղաքներից մեկի՝ Անիի ավերակներն են (առաջին հիշատակումներն Անիի վերաբերյալ թվագրվում են V-րդ դարով: 961-1045 թթ. եղել է Հայաստանի մայրաքաղաքը):

Լուսանկարը՝ Լիկա Խաչատրյանի:

